Էջմիածին



Ե.
2026



ՉԼ. ՏԱՐԻ


ԵՍԱՅԻ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՐՎԱՆԴԻՐ
ԱՐԵՆԱՅՅ ՀԱՅՑԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՄԻՒՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ

Մայիս

2026

Ա. ԷՋՄԻԱԾԻՆ



ՀՐԱՄԱՆԱՒ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

«ԷՋՄԻԱԾԻՆ»
կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրակազմ

Գլխաւոր խմբագիր՝ **Գէորգ Մադոյեան**

Գլխաւոր խմբագրի տեղակալ՝ **Արման Մալոյեան**

Լեզուաոճական խմբագիր՝ **Նարէ Սարգսեան**

Տեխնիկական խմբագիր՝ **Գոռ Գրիգորեան**

Խմբագրական խորհուրդ՝ **Տ. Մկրտիչ եպս. Պռօշեան,**
Տ. Յովնան եպս. Յակոբեան,
Տ. Ռուբէն եպս. Չարգարեան,
Տ. Ղաքարիա եպս. Բաղումեան,
Տ. Յուսիկ աբեղ. Սմբատեան,
Տ. Արարատ քհնյ. Պօղոսեան,
Ազատ Բոզոեան,
Վահէ Թորոսեան,
Կարէն Մաթեւոսեան

“Etchmiadzin”
Journal of Religious and Armenological Studies

Editorial staff

Editor-in-Chief **Gevorg Madoyan**
Deputy Editor-in-Chief **Arman Maloyan**
Stylistic editor **Nare Sargsyan**
Technical editor **Gor Grigoryan**

Editorial Board **Bishop Mkrtich Proshyan,**
Bishop Hovnan Hakobyan,
Bishop Ruben Zargaryan,
Bishop Zakaria Baghumyan,
Rev. Fr. Husik Smbatyan,
Fr. Ararat Poghosyan,
Azat Bozoyan,
Vahe Torosyan,
Karen Matevosyan

«Эчмиадзин»
Религиоведческий и арменоведческий журнал

Редакционный состав

Главный редактор **Геворк Мадоян**
Заместитель главного редактора **Арман Малоян**
Стилистический редактор **Наре Саргсян**
Технический редактор **Гор Григорян**

Редакционный совет **Епископ Мкртич Прошян,**
Епископ Овнан Акопян,
Епископ Рубен Заргарян,
Епископ Закария Багумян,
Иеромонах Иусик Смбатян,
Иерей Арарат Погосян,
Азат Бозоян,
Ваге Торосян,
Карен Матевосян

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(Սուրբ Էջմիածին, 24 մայիսի, 2026 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«եւ օծցե՛ս զնոսա. եւ լցցե՛ս զձեռս նոցա. եւ սրբեսցե՛ս զնոսա՝ զի բահանայացին ինձ:»
(Ելից ԻՀ. 41):

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Այսօր մեծ ուրախություն ենք ապրում ամենքս: Նշում ենք Հոգեգալստյան տոնը, որը եկեղեցում, հավատացյալների կյանքում Սուրբ Հոգու արփիափայլ շնորհների հեղման վկայությունն ու հիշատակումն է:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հարությունից հիսուն օր անց Վերնատանը համախմբված առաքյալները տարբեր լեզուներով խոսելու Սուրբ Հոգու շնորհը ստացան, որով սկիզբ դրվեց Քրիստոսի եկեղեցու հաղթական առաքելությանը՝ փրկության բարի լուրն ու շնորհը տարածելու ողջ աշխարհում: Հոգեգալուստը ուղեկցվեց աստվածային նշաններով: Ինչպես Ավետարանն է ներկայացնում, սաստիկ հողմի ձայն հնչեց, եւ երկնքից բոցեղեն լեզուները իջնելով հանգչեցին առաքյալների վրա: Քրիստոսի Սուրբ եկեղեցու առաջին հավատացյալները դարձան աշխարհի տարբեր ծագերից Երուսաղեմում համախմբված մարդիկ, ովքեր առաքյալների քարոզչության շնորհիվ ճանաչեցին Ճշմարտությունն ու վերածնվեցին իբրեւ նորադարձ քրիստոնյաներ. «Լսեցիք ճշմարտության խոսքը՝ ձեր փրկության Ավետարանը, որին հավատալով կնքվեցիք խոստացված Սուրբ Հոգով»,— վկայում է առաքյալը (Եփ. Ա. 13): Սուրբ Հոգին հորդառատ շնորհներով հավատացյալների

մեջ ծաղկեցնում է բազում առաքինություններ: Սուրբ Հոգով են եկեղեցու ավազանից քրիստոնյաներ ծնվում, որդեգրվում երկնավոր Հորը ու կազմում Քրիստոսի Սուրբ եկեղեցին:

Սիրելիներ, այսօր կրկնակի է ամենքիս ուրախությունը, քանզի Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի չորս նվիրյալ, բանիմաց եւ ջանասեր միաբաններ երկնային շնորհների հեղումով եպիսկոպոսական ձեռնադրության եւ օծման արժանացան: Տերն ինքը հաստատեց օծման խորհուրդը Աստծուն ծառայության կոչվելու համար. «Կօծես նրանց, կօրհնես ու կսրբագործես նրանց, որպեսզի Ինձ համար քահանայություն անեն»,— ընթերցում ենք Ելից Գրքում (ԻՀ. 41): Դարեր շարունակ ձեռնադրության սրբազան խորհրդով արժանավոր մշակներ են կարգվել Հայոց եկեղեցու անդաստանում, որպեսզի սուրբգրային պատգամներով լուսավորեն իրենց հանձնված հավատավոր հոտը եւ առաջնորդեն դեպի Քրիստոսապարգեւ փրկություն: Եպիսկոպոսները առաքելական հաջորդականության կրողներն ու փոխանցողներն են եւ տերունավանդ իշխանությամբ հավատքի անաղարտության, եկեղեցու կարգուկանոնի պահապանները, հոգիների խնամատարը, եկեղեցու եւ հավատացյալների իրավունքների պաշտպանը: Այս նկատառումով է Պողոս առաքյալը հորդորում. «Լսեցե՛ք ձեր առաջնորդներին եւ հնազանդվեցե՛ք նրանց, որովհետեւ նրանք հսկում են ձեր հոգիների համար, քանի որ հաշիվ են տալու ձեր փոխարեն» (Եբր. ԺԳ. 17):

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, պատմության ընթացքին մեր երկրի դեմ ասպատակությունների հորձանուտներում, ինչպես եւ Ցեղասպանության եւ ստալինյան բռնապետության տարիներին մեր եկեղեցականները ենթարկվել են բռնաճնշումների ու հալածանքների, կրել բազում նեղություններ, սակայն հաստատուն են մնացել առ Քրիստոս հավատարմության ու սիրո մեջ եւ ապավինած Աստծուն դիմակայել բոլոր դժվարություններին. «Աստված ապավենն ու զորությունն է մեր եւ մեր օգնականը մեզ հասած խիստ նեղությունների մեջ»,— ասում է Սաղմոսերգուն (Սաղմ. խե. 2): Ցավով ենք անդրադառնում, որ Հայոց եկեղեցու սպասավորները այսօր եւս Հայաստանում իշխանությունների կողմից անհիմն մեղադրանքներով ենթարկվում են հետապնդումների, ինչպես նաեւ ազատազրկման: Գոհություն Աստծո, մեր հոգեւորականները ի Հայաստան եւ ի սփյուռս աննկուն են ոգով, անխախտ են առ Սուրբ էջմիածինը հավատարմության մեջ եւ, անդավաճան իրենց ուխտին ու

կոչմանը, նախանձախնդրությամբ շարունակում են տերունապատվեր առաքելությունը՝ իրականություն դարձնելու տեսիլքները հոգեւոր կյանքի պայծառության, պետականության ամրապնդման, հայրենիքի շինության ու հզորության:

Այժմ, սիրելի բարեպաշտ հավատացյալներ, ուրախությամբ ձեզ ենք ներկայացնում նորաօծ սրբազաններին:

Գերաշնորհ Տ. Իսահակ եպիսկոպոս Պողոսյանը ծնվել է Երեւանում, սովորել եւ ավարտել է Սեւանի Վազգենյան Դպրանոցն ու Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանը: Պաշտոնավարել է Մայր Աթոռի տարբեր բաժիններում, Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանում, ծառայել որպես Բուլղարիայի Հայոց թեմի առաջնորդ, եղել Խոր Վիրապ վանքի վանահայր: Սրբազանը յուրահատուկ գրական շնորհ ունի, եւ նրա ստեղծագործական ուրույն ձիրքը դրսեւորվել է իր հեղինակած գրքերում: Այժմ Սրբազանը Գեղարքունյաց թեմի առաջնորդն է եւ Քրեակատարողական հիմնարկների հոգեւոր ծառայության պատասխանատուն:

Գերաշնորհ Տ. Ռուբեն եպիսկոպոս Զարգարյանը ծնվել է Հրազդանում, հոգեւոր ուսում ստացել Սեւանի Վազգենյան Դպրանոցում եւ Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանում: Երկար տարիներ սպասավորել է որպես Քրեակատարողական հիմնարկների հոգեւոր ծառայության պատասխանատու՝ պարբերաբար այցելելով կալանավայրեր Ավետարանի խոսքը քարոզել եւ մխիթարություն բերել ազատազրկվածներին: Սրբազանը նաեւ տարիներ շարունակ «Շողակաթ» հեռուստաընկերության հաղորդումներով Տիրոջ վարդապետությունն է ուսուցանել հավատացյալներին, ինչպես եւ դասախոսական գործունեությամբ գովելի ներդրում բերել հոգեւորականաց նոր սերունդ պատրաստելու կարեւոր առաքելության մեջ: Ներկայումս Սրբազանը զբաղեցնում է Մասյացոտնի թեմի առաջնորդի պաշտոնը:

Գերաշնորհ Տ. Անանիա եպիսկոպոս Ծատուրյանը ծնունդով Աշտարակից է, կրթություն ստացել է Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանում, աշխատել «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում եւ Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանում: Այնուհետ՝ ավելի քան տասը տարիներ, եղել է Մեր գավազանակիրը՝ մեծապես օգտակար լինելով Հայրապետական Մեր առաքելությանը: Սրբազանը ծառայել է նաեւ որպես Սուրբ Գայանե վանքի վանահայր, ապա մեկնել ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմ, նշանակվել կենտրոնական Կալիֆորնիայի առաջնորդական փոխանորդ: Այժմ Սրբազանը

շարունակում է գովելի ծառայություն բերել Մայրավանքում՝ իբրեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի Լուսարարապետ։

Գերաշնորհ Տ. Զաքարիա եպիսկոպոս Բաղումյանը ծնվել է Երեւանում, հոգեւոր կրթություն ստացել Սեւանի Վազգենյան Դպրանոցում եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանում։ Իր ծառայությունն է իրականացրել Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանում, Մայր Աթոռի տարբեր կառույցներում, երկար տարիներ վարել է Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տեսչի պաշտոնը։ Նա հոգեւոր, գիտական եւ կրթական գործունեությամբ գովելի նպաստ է բերել մեր Սուրբ Եկեղեցու քարոզչական կյանքին եւ արդյունավոր աշխատանք իրականացրել մեր զավակների կրթադաստիարակչական գործում։ Սրբազանը մի շարք հայագիտական, աստվածաբանական գրքերի հեղինակ է, ներկայումս ծառայում է որպես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քարոզչական կենտրոնի տնօրեն։

Սիրելի նորաօծ Սրբազան Հայրեր, Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում ձեզ եպիսկոպոսական ձեռնադրության առիթով։ Եպիսկոպոսական կոչումը՝ որպես նվիրապետության բարձր աստիճան, ենթադրում է առավել մեծ հանձնառություն եւ պատասխանատվություն Քրիստոսի Եկեղեցու մեջ։ Եպիսկոպոսությունը ինքնին ծառայական խաչ է, որը Տիրոջ մշակը ստանձնում է Իջման Սուրբ Սեղանի առջեւ ծնրադիր ուխտով՝ իր կյանքը անմնացորդ ընծայելու անձնվեր ծառայության։ Մեր Տերը պատգամում է սպասավորություն բերել քաջ եւ բարի հովվի օրինակով։ Ճանաչելով ձեզ տակավին ձեր ուսանողության տարիներից՝ վստահ ենք, որ, տերունական խոսքի համաձայն, եպիսկոպոսական հանգամանքի մեջ պիտի շարունակեք դրսեւորել աներկյուղ ոգի ու առավել ջանադրություն՝ նորանոր հաջողություններով բազմապատկելով ձեր ավանդը մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում։ Այսու Հայրապետիս հորդորն ու պատգամն է, որ հաստատուն պահեք ձեր ուխտը, նախանձախնդրորեն հետեւեք Քրիստոսի պատվիրաններին եւ Եկեղեցու Սուրբ Հայրերի հաստատած կարգերին ու կանոններին։ Այս բարդ ժամանակաշրջանում շարունակեք քաջալերել մեր ժողովրդի զավակներին ամուր մնալու աստվածասիրության ու հայրենասիրության մեջ։ Եղեք համարձակ պահապանը հոգեւոր եւ ազգային մեր արժեքների ու սրբությունների, մեր երկրի ու ժողովրդի եւ մեր Սուրբ Եկեղեցու արդար իրավունքների։ Ձեր խնամքին հանձնված հավատացյալներին առաջնոր-













դեք աստվածահաճո ուղիներով, նրանց սրտերում զորացրեք հավատքը, աննկուն կամքն ու արիության ոգին՝ դուրս բերելու մեր երկիրը վտանգներով ու փորձություններով լի այս դժվարին իրավիճակից եւ կերտելու հայրենիքի բարօր ու պայծառ ապագան: Ձեր բարձր առաքելությամբ ամենուր տարածեք տերունավանդ սեր, ազնվություն, բարություն ու արդարություն:

Աղոթում ենք առ Աստված, որ Իր Սուրբ Աջով մշտապես զորացնի ձեզ ու նորանոր հաջողություններ պարգեւի՝ ի փառս Աստծո, ի սեր ազգի, ի շինություն եւ ի պայծառություն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու: Թող Ամենակալ Տերը խաղաղություն ու ապահովություն շնորհի հայրենի մեր երկրին եւ համայն աշխարհասփյուռ մեր ժողովրդին:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սերը եւ Սուրբ Հոգու հաղորդությունը թող լինեն ձեզ հետ եւ ամենքի (Բ. Կորնթ. ԺԳ. 13), այսօր եւ միշտ. ամեն:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՀԱՎԱՔԻՆ

(26 մայիսի, 2026 թ.)

Գերաշնո՛րհ Սրբազաններ,

Հոգեշնորհ եւ Արժանապատիւ հայրեր,

Աստծո ողորմութեամբ վերստին առիթն ունենք հանդիպելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Մեծապես կարեւորում ենք ավանդական դարձած այս ժողովները, որոնք պատեհ առիթ են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի խորհրդով գործանալու մեր կոչման գիտակցության մեջ, միմյանց գոտեպնդելու, աղոթական մթնոլորտում միասնաբար խորհրդածելու մեր Սուրբ Եկեղեցու հոգեւոր առաքելության արդյունավորման շուրջ, այլեւ քննարկելու մեր հոգեւոր սպասավորության ճանապարհին տեղ գտնող խնդիրները, ինչպես եւ մեր ժողովրդի եւ հայրենիքի առջեւ ծառացած մարտահրավերների դիմագրավման ուղիները: Այս առումով կարեւոր ենք նկատում թեմերում սպասավորող եկեղեցականներիդ եւ Մայր Աթոռի միաբաններիդ գործուն եւ անկաշկանդ ներգրավվածութիւնը այս քննարկումներում:

Մեր անցյալ ժողովին հաջորդած ժամանակահատվածում աշխարհում տեղ գտած ցնցումներն ու հատկապես մեր տարածաշրջանում պատերազմական գործողությունները, ցավոք, իրենց ուղղակի եւ անուղղակի ներգործությունն ունեցան ազգային եւ հայրենական մեր կյանքի վրա: Խոր մտահոգություն եւ անհանգստություն է շարունակում պատճառել նաեւ ՀՀ իշխանությունների կողմից եւ այս օրերին իրականացվող հակաեկեղեցական արշավը, անհիմն մեղադրանքներով եկեղեցականաց դեմ հալածանքները, Եկեղեցու ինքնավարությունը խաթարող միջամտությունները: Արդարադատության ոտնահարմամբ նորանոր անօրինական արգելքներ են հարուցվում նաեւ հովվական առաքելության մեջ, զավթված են պահվում սրբավայրերը, առանձին եկեղեցիներում կարգալույծ անձինք իրենց հակականոնական, սրբապիղծ գործողություններով

շարունակում են խռովել հավատացյալների հոգեւոր զգացումները, աղճատել կրոնածիսական կյանքը:

Ունայնամտություն է սանձազերծված բռնաճնշումները հիմնավորվել Հայոց Եկեղեցու, այսպես կոչված, բարենորոգման ծրագրի իրականացման անհրաժեշտությամբ: Ցավ է Հայրապետիս համար, որ կեղծ պատճառաբանություններով հանրությանը մատուցվող այս ծրագրի իրագործմանը, Մեզ անհայտ պատճառներով, լծվել են նաեւ մեր մի շարք բարձրաստիճան եկեղեցականներ, նաեւ թեմերի քահանաներ, որոշ հոգեւորականներ կամայական կարգով ծառայությունների մատուցման պայմանագրեր են կնքել Պաշտպանության նախարարության եւ Արդարադատության նախարարության Քրեակատարողական ծառայության հետ՝ ոտնահարելով Մայր Աթոռի իրավունքները, ինչը, անտարակույս, ունենալու է կարգապահական հետեւանքներ:

Իշխող ուժի որդեգրած եկեղեցահալած քաղաքականության առնչությամբ հարկ է, որ շարունակաբար հանդես գանք սպառիչ պարզաբանումներով, որպեսզի մեր հավատավոր ժողովուրդը չտրվի կեղծ եւ անհիմն մեղադրանքների ազդեցությանը: Հստակ է՝ իշխանությունները նպատակ են հետապնդում ամեն գնով պառակտել, տկարացնել Եկեղեցին, խոչընդոտել Եկեղեցու ազգաշահ, արդյունավետ գործունեությունը եւ նվազեցնել նրա դերակատարությունը մեր ժողովրդի կյանքում, հատկապես՝ ազգային ինքնության, պատմական հիշողության եւ նվիրագործված արժեքների պահպանման հարցում: Այդ մտադրությամբ վարչապետի իսկ հրամանով կասեցվեց Եկեղեցի-պետություն հարաբերություններում խնդրահարույց հարցերի քննարկման նպատակով տակավին 2019 թ. ստեղծված հանձնախմբի աշխատանքը: Նույն կերպով կրթական բարեփոխումների անվան ներքո հանրակրթական դպրոցներում 2023 թվականին դադարեցվեց «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդումը, կասեցվեց «Շողակաթ» հեռուստաալիքի հեռարձակումը, լուծարվեցին ՀՀ Ձինված ուժերի հոգեւոր առաջնորդությունը եւ Քրեակատարողական հիմնարկներում հոգեւոր տեսչությունը, կատարվեցին եկեղեցաշինությանը խոչընդոտող օրենսդրական փոփոխություններ, քմահաճորեն, առանց անհրաժեշտ հատակեցումների եւ ուսումնասիրման, կիրառվեցին գույքահարկի պահանջներ, նաեւ՝ տույժեր ու տուգանքներ:

Եկեղեցու թիրախավորման հերթական հակաօրինական դրսեւորումը իշխող կուսակցության նախընտրական ծրագրում, այսպես

կոչված, «բարենորոգման» օրակարգի ներառումն էր՝ եկեղեցու հոգեւոր պետի հեռացման եւ այլ գործողությունների նախատեսումով: Հոգեւոր կյանքի վերաբերյալ նման մոտեցումը հակասահմանադրական է ու դատապարտելի, հակասում է մեր Սուրբ եկեղեցու կանոնական սկզբունքներին եւ ուղղակի միջամտություն է եկեղեցու ինքնակառավարմանը՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով: Արհեստածին «բարենորոգման» ծրագիրը կեղծ օրակարգ է: Եկեղեցու բարենորոգումը չի կարող իրականացվել իշխանության ճնշմամբ ու թելադրանքով՝ ուղեկցվելով նաեւ բացահայտ զրպարտություններով ու կեղծիքներով: Եկեղեցու բարեփոխությունը մշտական ներքին գործընթաց է՝ հիմնված բացառապես Եկեղեցու՝ դարերով ամրագրված կանոնակարգերի վրա, վավերացված եկեղեցական ժողովական մարմինների կողմից: Ուստի, պիտի ամեն ջանք ի գործ դնենք պաշտպանելու մեր Սուրբ եկեղեցու պատմականորեն կանոնակարգված, ինչպես եւ ՀՀ օրենսդրությամբ, միջազգային հռչակագրերով երաշխավորված իրավունքները եւ կանխելու եկեղեցու կյանքում այսօրինակ վտանգավոր նախադեպերի ստեղծումը:

Սիրելի հոգեւոր հայրեր, այս փորձությունը պետք է հաղթահարենք արժանապատվորեն, եկեղեցական կանոնների անշեղ հարգումով ու կարգապահությամբ, մեր սուրբ եկեղեցու եւ մեր նախնյաց ավանդների նկատմամբ հավատարմությամբ: Զինվեք քաջությամբ եւ ձեր առաքելության նկատմամբ սիրով ու հաստատակամությամբ: Ամենքս այսօր պարտավորությունն ունենք առաջին հերթին եկեղեցու մարմինը անխաթար, ամբողջական ու միասնական պահելու եւ թույլ չտալու, որ արտաքին միջամտություններով պառակտվի եկեղեցին: Փաստը, որ եկեղեցու դեմ արշավը հանրային աջակցության չարժանացավ, չպետք է անգործության մղի մեզ: Մայր Տաճարի խորանի առջեւ կատարած ուխտի հանդեպ հավատարմությունը պետք է առաջնորդի ամենքիս մեր բոլոր որոշումներում եւ քայլերում, որպեսզի եկեղեցին, անսասան իր կոչման մեջ, հավետ լինի անլռելի կոչնակը աստվածահաճո կյանքի, քաջարի ջատագովը արդարության ու ճշմարտության, աննկուն պաշտպանը Քրիստոսի հետեւորդների շահերի եւ իրավունքների: «Արթո՛ւն կացեք, հաստատո՛ւն մնացեք հավատի մեջ, քա՛ջ եղեք, զորացե՛ք»,— պատգամում է առաքյալը (Ա. Կորնթ. ԺԶ. 13): Այս գիտակցությամբ շարունակեք հովվական խնամք տանել եւ հոգալ կարիքները մեր ժողովրդի զավակների, քաջա-





լերել ընթանալ աստվածսիրության շավիղներով, մերժել ազգավնաս գաղափարներն ու գործողությունները։

Այս առիթով բերում ենք ձեզ Մեր օրհնությունն ու սերը եւ ազգօգուտ ու բարեբեր ծառայության մաղթանքները՝ բարձրորեն գնահատելով այս դժվարին օրերին ձեր դրսեւորած ոգին, հաստատակամությունն ու նախանձախնդրությունը մեր Սուրբ Եկեղեցում կանոնականության ու միության պահպանման նկատմամբ։

Աղոթում ենք, որ Տերը խաղաղության ու ապահովության մեջ պահի հայրենի մեր երկիրն ու աշխարհասփյուռ հայությանը, իմաստություն շնորհի հայրենաբնակ մեր ժողովրդին առաջիկա խորհրդարանական վճռորոշ ընտրության մեջ եւ անսասանություն ու հավետ պայծառություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին։

Աստված օգնական ու պահապան ազգիս հայոց այսօր եւ միշտ եւ հավիտյան. ամեն։

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(28 մայիսի, 2026 թ.)

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքն ենք հղում համայն մեր ժողովրդին ի հայրենիս եւ ի սփյուռս՝ Հանրապետության տոնի առիթով։

Հայաստանի առաջին Հանրապետության հիմնադրումը նշանավորելով՝ հիշում ենք Սարդարապատի, Ղարաքիլիսայի ու Բաշ Ապարանի հերոսամարտերը։ Այդ պատմական գոյամարտերում վճռորոշ դերակատարություն ունեցավ Ամենայն Հայոց Գեւորգ Հինգերորդ Կաթողիկոսը։ Կենաց-մահու պայքարում մեր ժողովրդի քաջարի զավակները, այդ թվում մեր Սուրբ Եկեղեցու հոգեւորականները, հաղթանակ տարան եւ սերունդների համար ապահովեցին հարազատ հողում անկախ ու ազատ ապրելու արդար իրավունքը։ Նույն անվեհեր ոգով ազգիս նվիրյալ զավակները նոր ժամանակներում անձնվիրաբար պաշտպանեցին երկիր հայրենին, շատեր իրենց անգին կյանքը զոհեցին մեր պետականության անսասանության եւ անվտանգ ու արժանապատիվ ապագայի համար։ Այսօր մենք ազգովի գլուխ ենք խոնարհում մեր հերոսների առջեւ եւ անմար պահում նրանց լուսավոր հիշատակը մեր սրտերում։

Ներկա բարդ ժամանակներում, արտաքին ու ներքին մարտահրավերներին հանդիման, պիտի միաբանվենք եւ միասնաբար հզորացնենք մեր պետությունը, ծաղկուն ու շեն դարձնենք համայն հայոց կյանքը։

Թող Բարձրյալ Տերը առատապես օրհնի եւ հաստատուն պահի մեր երկիրն ու Քրիստոսասեր մեր ժողովրդին ի Հայաստան եւ ի սփյուռս այսօր եւ միշտ. ամեն։

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՇԱԲԱԹՎԱ ԱՌԻԹՈՎ

(31 մայիսի, 2026 թ.)

Սիրելի՛ բարեպաշտ զավակներ Մեր,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հղում ենք ձեզ Հայրապետական Մեր օրհնությունը, սերն ու բարեմաղթանքները։

Փառաբանական աղոթքով առ Բարձրյալն Աստված հունիսի 1-ին մուտք ենք գործում Արարատյան տոների շաբաթ, որն առանձնահատուկ կարեւորություն ունի ազգային-եկեղեցական մեր կյանքում։ Հանդիսավոր թափորներով եւ Սուրբ Պատարագների արարողություններով, երկրպագության նպատակով սրբերի մասունքների դուրս բերմամբ հիշատակելու ենք Սուրբ Հռիփսիմյանց ու Գայանյանց կույսերի մարտիրոսությունը, Սուրբ Գրիգոր Լուսավորչի ելքը Վիրապից, Հայոց մեծ դարձը եւ Տրդատ արքայի հրովարտակով Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակումը։ Արարատյան շաբաթվա ավարտին՝ հունիսի 7-ին, նշելու ենք տոնը Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի, որը վեր խոյացավ հայոց հողի վրա 1725 տարի առաջ Աստվածորդու լուսավոր էջքով։

Պատմական այս իրադարձություններով, Սուրբ Էջմիածնով հայոց ազգը արժանացավ Աստծո ընտրյալ ժողովուրդ լինելու երկնային շնորհին, քրիստոնեական արժեհամակարգը դարձավ ամրակուռ հիմքն ու առանցքը մեր լինելության ու հարատեւության՝ համապատասխան սուրբգրային վկայության. «Դուք ընտիր ցեղ եք, թագավորություն, քահանայություն, սուրբ ազգ, Աստծու սեփական ժողովուրդ» (Ա. Պետր. Բ. 9)։ Սուրբ Էջմիածինը հավերժական խորհրդով եղել է աշխարհասփյուռ իր զավակների հավատքը զորացնողը, հույսն առատացնողը, Քրիստոսանվեր ու հայրենանվեր կյանքի երաշխիքը, օրհասական պահերին հանձնառու եղել ամեն զոհողության՝ հանուն իր խնամքին հանձնված հոտի։ Սուրբ Էջմիածինը կրթական, մշակութային, հոգեմտավոր մեծագույն նվաճումների ներշնչարանն ու գրավականն է, անխորտա-

կելի ամրոցը մեր ազգային ու հոգեւոր ինքնության եւ առհավատչյան հոգեւոր ժառանգության եւ պատմական հիշողության անխաթար պահպանության: Սուրբ էջմիածինը, ծանր փորձությունների միջով անցնելով, մնացել է աննկուն ու անխորտակելի՝ մշտապես լինելով անլռելի ու բարձրահունչ կոչնակը ազգի ու հայրենյաց շահերի եւ մեր ժողովրդի միաբանության: Սուրբ էջմիածնի հիմնադրման տոնակատարումը, սիրելիներ, ամենքիս համար առիթ է վերստին վկայելու մեր սերն ու անդավաճան հավատարմությունը հանդեպ մեր Սուրբ Եկեղեցին եւ Քրիստոսահաստատ հայոց հոգեւոր կենտրոն Սուրբ էջմիածինը՝ համաձայն սաղմոսերգուի խոսքի. «Տե՛ր, սիրեցի Քո տան վայելչությունը եւ Քո փառքի բնակության վայրը» (Սաղմ. Իե. 8):

Սուրբ էջմիածնի տոնն այս օրերին, ցավոք, նշելու ենք մի իրավիճակում, երբ ծանր կորուստները խոռովել են մեր ժողովրդի անդորրը, երբ հարվածներ են հասցվում մեր ժողովրդի ինքնության հիմքերին, աղճատվում հոգեւոր եւ ազգային սրբազան խորհրդանիշերը: Սուրբ էջմիածնի տոնը նշելու ենք խորապես մտահոգող պայմաններում՝ պառակտված է մեր հասարակությունը, հայրենական անդաստանում սերմանվում են ատելություն, թշնամանք, անհանդուրժողություն ու անարդարություն, եւ իշխանությունների միջամտությամբ խեղվում են Եկեղեցու դարավոր կանոնակարգերը, հետապնդումների ու բռնաճնշումների են ենթարկվում մեր Սուրբ Եկեղեցին եւ եկեղեցասեր անձինք: Այս դժվարին իրադրության մեջ Սուրբ էջմիածնի լուսեղեն խորհուրդը մշտաբարբառ հրավեր է մեզ՝ ամուր կառչած մնալու քրիստոնեական մեր հավատքին, վերագտնելու ազգային ոգու տոկունությունը, հաղթահարելու ներազգային բաժանումները, բժշկելու վերքերը եւ վերականգնելու մեր ժողովրդի ներքին խաղաղությունն ու անդորրը:

Հունիսի 7-ին՝ Սուրբ էջմիածնի տոնի նվիրական օրը, մեր երկրում տեղի են ունենալու խորհրդարանական ընտրություններ: Հայրապետիս հորդորն է ամենքիդ անխտիր առաջիկա կիրակի մասնակցել ընտրություններին՝ ազգի եւ հայրենիքի շահերի բարձր գիտակցությամբ, լուսավոր գալիքի տեսիլքով եւ սերունդների նկատմամբ պատասխանատվությամբ, որպեսզի մեր երկրում գերակայի օրենքը, հարգվեն մարդու իրավունքներն ու արժանապատվությունը, տիրապետեն արդարությունն ու ճշմարտությունը, սերն ու համերաշխությունը եւ փոխադարձ հարգանքը՝ «դե՛ն գցելով ամեն չարություն, ամեն նենգություն, կեղծա-

վորութիւններ, նախանձ եւ ամեն չարախոսութիւն»,— ինչպես պատգամում է առաքյալը (Ա. Պետր. Բ.1)։

Կոչ ենք անում քաղաքական ուժերին զերծ լինել ատելության խոսքից, դրսեւորել զգոնություն ու շրջահայացություն եւ հեռու պահել մեր ժողովրդին հնարավոր անցանկալի զարգացումներից։ Մեր հորդորն է իրավապահ համակարգի ներկայացուցիչներին անհրաժեշտ բոլոր պայմաններն ապահովել արդար ընտրությունների անցկացման եւ մեր հայրենակիցների ազատ կամարտահայտության համար։

Հայց ենք բարձրացնում առ Աստված մեր հայրենիքի անսասանության ու վերազարթոնքի եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդի բարօրության համար։ Աղոթում ենք, որ Տիրոջ անբավ ողորմությամբ հայրենաբնակ մեր զավակների նոր ընտրությունը ծառայի միմիայն ի բարին, ի սեր ազգիս ապահով, խաղաղ եւ առաջընթաց կյանքի։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Տ. ԻՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂՈՍՅԱՆ



Ծնվել է 1978 թ. նոյեմբերի 20-ին մայրաքաղաք Երեւանում: Ավազանի անունը՝ Անդրանիկ:

1996–2002 թթ. սովորել եւ ավարտել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սեւանի Վազգենյան դպրանոցն ու Գեւորգյան հոգեւոր ճեմարանը:

2002 թ. դեկտ. 25-ին Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում ձեռնադրվել է սարկավագ:

2002-ից որպես օգնական-քարտուղար աշխատանքի է անցել Մայր Աթոռի Տնտեսական բաժնում:

2003 թ. ծառայության է նշանակվել Մայր Աթոռի սպասարկման բաժնում:

2005 թ. փետրվարի 3-ին՝ Ս. Վարդանանց տոնին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ ձեռամբ Գերաշնորհ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի Ս. Էջմիածնի Մայր տաճարում ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

2006 թ. իր ծառայությունն իրականացրել է Մայր Աթոռի Սպասարկման բաժնի տնօրենի պաշտոնակատարի հանգամանքում:

2007–2008 թթ. Հունաստանի Աթենք քաղաքում մասնակցել է լեզվի դասընթացների:

2009 թ. նշանակվել է Վեհարանի հյուրընկալ,

2010–2013 թթ. Մայր Աթոռի մաքսային լիազոր:

2010 թ. պաշտպանել է «Վարագա Սուրբ Նշանը եւ վանքը հայ մատենագրության մեջ» խորագրով վարդապետական թեզը եւ ձեռամբ

Գերաշնորհ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանի ստացել մասնավոր վարդապետության աստիճան։

2011 թ. Մայր Աթոռի Գեւորգյան ճեմարանում ծառայության է անցել՝ որպես տնտեսական եւ կարգապահական գծով պատասխանատու։

2011–2012 թթ. Կանադայի Տորոնտո քաղաքում ուսանել է անգլերեն եւ Նոր Կտակարանի ներածություն։

2014–2015 թթ. սովորել է Երեւանի Խաչատուր Աբովյանի անվան համալսարանում։

2014-ից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սոցիալական ծառայություններ-ի գրասենյակի տնօրեն։

2015–2017 թթ. Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ։

2018–2020 թթ. Ուկրաինայի հայոց թեմի փոխառաջնորդ։

2021–2024 թթ. Խոր Վիրապի վանահայր։

2025–2026 թթ. Քրեակատարողական հիմնարկների հոգեւոր պատասխանատու։

2026 թ հունվարից Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ։

2026 թ. մայիսի 24-ին, Հոգեգալստյան տոնին ձեռնադրվել եւ օծվել է եպիսկոպոս

Բազմաթիվ հոդվածների եւ մի շարք գրքերի հեղինակ է։

Տ. ՌՈՒԲԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՋԱՐԳԱՐՅԱՆ



Ծննդյան տվյալներ եւ կրթություն

Ծնվել է 1979 թ. դեկտեմբերի 5-ին ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում: Ավազանի անունը՝ Վաչիկ:

- *1986–1996 թթ.՝ միջնակարգ կրթությունը ստացել է Հրազդանի թիվ 11, ապա Արմավիրի մարզի Առատաշեն գյուղի միջնակարգ դպրոցներում:*
- *1996–2002 թթ.՝ հոգեւոր բարձրագույն կրթություն է ստացել Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում, ապա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում:*
- *2006–2009 թթ.՝ սովորել է Հռոմի Գրիգորյան պապական համալսարանի մագիստրատուրայում՝ Սուրբգրային աստվածաբանության (*Teologia Biblica*) ֆակուլտետում:*
- *2008 թ. ամռանը՝ երկու ամիս հաճախել է ֆրանսերեն լեզվի դասընթացի Փարիզի կաթոլիկ ինստիտուտում (*Institut Catholique de Paris*):*
- *2010–2011 թթ.՝ սովորել է Եւրոխորհրդի քաղաքական դասընթացների երեւանյան դպրոցում (ՔԴԵԴ):*

Եկեղեցական կոչումներ եւ ձեռնադրություններ

- *2001 թ.՝ ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Գերաշնորհ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի:*
- *2005 թ. փետրվարի 3-ին՝ ձեռամբ Գերաշնորհ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:*

• *2015 թ.՝ պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Հիսուս Մարկոսի Ավետարանում» թեմայով եւ ստացել վարդապետական մասնավոր աստիճան։*

• *2026 թ. մայիսի 24-ին՝ ձեռնադրվել եւ օծվել է եպիսկոպոս՝ ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի։*

եկեղեցական եւ հաճրային ծառայություն

• *Ճեմարանն ավարտելուց հետո ծառայել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տեղեկատվական համակարգում, ապա «Գարեգին Ա» հայագիտական-աստվածաբանական կենտրոնում։*

• *2004–2006 թթ.՝ ծառայության է անցել ՀՀ Զինված ուժերում՝ որպես հոգեւոր սպասավոր։*

• *2009–2011 թթ.՝ աշխատել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հրատարակչական բաժնում՝ որպես աստվածաշնչագիտության ենթաբաժնի տնօրեն։*

• *2011–2025 թթ.՝ ծառայության է կոչվել ՀՀ բանտային ոլորտում՝ որպես ՀՀ քրեակատարողական հիմնարկների եւ պրոբացիայի հոգեւոր ծառայության պատասխանատու։ Միեւնույն ժամանակ հանդիսացել է «Ներման հանձնաժողովի» անդամ՝ որպես Մայր Աթոռի ներկայացուցիչ։*

• *2025 թ.՝ նշանակվել է Մայր Աթոռի Հայեցակարգային գրասենյակի տնօրեն։*

• *2026 թ. հունվարի 10-ին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ նշանակվել է Մասյացոտնի թեմի առաջնորդական տեղապահ, իսկ նույն տարվա մայիսին եպիսկոպոսական ձեռնադրությունից հետո ստանձնել է թեմի առաջնորդի պաշտոնը։*

Կրթական եւ հեռուստատեսային գործունեություն

• *2009 թ.-ից մինչ օրս՝ Մայր Աթոռի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում դասավանդում է «Նոր Կտակարանի մեկնություն» առարկան։*

• *«Շողակաթ» հեռուստաընկերության եթերում վարել է հետեւյալ հաղորդաշարերը.*

- *2011–2018 թթ.՝ «Օր 6-րդ»,*
- *2018–2026 թթ.՝ «Համատես ավետարաններ»,*

- *2026 թ.-ից՝ «Ժամանակի խոսք»։*

Գիտական աշխատություններ եւ հրատարակություններ

Հեղինակ է մի շարք աստվածաշնչագիտական ուսումնասիրությունների ու հոդվածների, որոնցից է.

«Հիսուս Մարկոսի Ավետարանում» մեկնողական քննություն, Ս. Էջմիածին, 2018 թ.։

ԱՆԱՆԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԾԱՏՈՒՐՅԱՆ



Ծնվել է 1984 թ. հուլիսի 1-ին Աշտարակ քաղաքում, Արագածոտնի մարզ, ՀՀ: Ավազանի անունը՝ Արամ:

1991–2001 թթ. սովորել է տեղի Ներսես Աշտարակեցու անվան թիվ 1 հիմնական դպրոցում:

1997 թ. հուլիսի 12-ին Օշականի Սբ. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում ձեռամբ Նավասարդ արք. Կճոյանի ձեռնադրվել է կիսասարկավագ:

2002 թ. ընդունվել է Գեւորգյան Հոգեւոր Ճեմարան:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Սբ. Ստեփանոս նախասարկավագի տոնին, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Մայր Տաճարում ձեռամբ Արարատ եպս. Գալթագճյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2008 թ. ավարտել է Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանը եւ Վեհափառ Հայրապետի օրհնությամբ նշանակվել «Էջմիածին» ամսագրի խմբագրության գործավար-քարտուղար:

2008 թ. նոյեմբերի 20-ին գերազանցությամբ պաշտպանել է ավարտաճառ՝ «Միջին հայերենի կրոնաեկեղեցական բառապաշարը» թեմայով:

2009 թ. հուլիսի 28-ին Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ նշանակվել է Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանի գործավար-քարտուղար:

2009 թ. դեկտեմբերի 13-ին, ձեռամբ Վրթանես եպս. Աբրահամյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

2010 թ. փետրվարի 15-ին հայրապետական տնօրինությամբ ծառայության է կոչվել Վեհարանում որպես Վեհափառ Հայրապետի գավազանակիր, այնուհետեւ, հայրապետական մեկ այլ տնօրինությամբ, 2011 թ.

հունվարից համատեղությամբ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Արարողակարգային բաժնի տնօրենի պաշտոնն է իրականացրել։

2015 թ. հունիսի 28-ին մեկնել է Իտալիայի Արեցցո քաղաք եւ մասնակցել իտալերեն լեզվի եռամսյա դասընթացին, իսկ հոկտեմբերից սկսյալ մինչեւ դեկտեմբեր վերջը մասնակցել Հռոմի Գրիգորյան պապական համալսարանում «Հայրաբանական աստվածաբանություն եւ Եկեղեցու Հայրերի ավանդություն» եռամսյա մասնագիտական դասընթացին։

2016 թ. փետրվարի 22-ին նշանակվել է Սբ. Գայանե վանքի վանահայր եւ մարտից ձեռնամուխ եղել վանական կյանքի՝ մասնավորաբար կուսանաց վանքի կազմակերպմանը։

2017 թ. հունվարին մեկնել է ԱՄՆ Արեւելյան հայոց թեմ։

2018 թ. մայիսին Վեհափառ Հայրապետի հրամանով վերադարձել է Մայր Աթոռ եւ հունիսին հայրապետական տնօրինությամբ նշանակվել ծառայության Վեհարանում՝ որպես հայրապետի գավազանակիր եւ արարողակարգի պատասխանատու։

2023 թ. փետրվարի 13-ին Սբ. Ղեւոնդյանց քահանայից տոնին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում պաշտպանել է վարդապետական ատենախոսություն՝ «Վանականների ուխտադրության կարգը Հայոց Եկեղեցում» թեմայով եւ նույն օրը Օշականի Սբ. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում Ջեռամբ Արարատ եպս. Գալթագճյանի ստացել վարդապետության աստիճան։

2024 թ. ապրիլի 15-ին ծառայության է մեկնել ԱՄՆ Արեւմտյան հայոց թեմ։

2024 թ. հուլիսի 1-ին ԱՄՆ Արեւմտյան թեմի առաջնորդի տնօրինությամբ նշանակվել է կենտրոնական Կալիֆորնիայի առաջնորդական փոխանորդ։

2025 թ. մայիսի 12-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ նշանակվել է Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Լուսարարապետ։

2026 թ. մայիսի 24-ին, Հոգեգալստյան տոնին, ձեռամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվել եւ օծվել է եպիսկոպոս։

Հեղինակ է մենագրությունների ու գիտական հոդվածների, որոնցից են.

† «Միջին հայերենի կրոնաեկեղեցական բառապաշարը» (մագիստրոսական թեզ, 2008 թ.)


† *«Վանականների Հանդերձներն Ըստ «Մաշտոց» Մխսամատյանի» («Էջմիածին» ամսագիր, ԺԱ., 2015 թ.)*

† *«Վանականներին վերաբերող կանոնները Հայոց Եկեղեցում» («Էջմիածին» ամսագիր, ԺԱ., 2022 թ.)*

† *«Վանականների Ուխտադրության ծեսերի վաղեմության եւ հայկական տարբերակի շուրջ» («Էջմիածին» ամսագիր, Ա., 2023 թ.)*

† *«Վանականների ուխտադրության կարգը Հայոց Եկեղեցում» (Վարդապետական թեզ, 2023 թ.)*

Տ. ԶԱՔԱՐԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՂՈՒՄՅԱՆ



Ծնվել է 1978 թ. մարտի 25-ին Երեւանում: Ավազանի անունը՝ Տիգրան:

1985–1995 թթ. սովորել է Երեւանի թիվ 163, 177 միջնակարգ դպրոցներում:

1995–2000 թթ. սովորել է Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում:

2000–2001 թթ. սովորել է Գեւորգյան Հոգեւոր ճեմարանի Ջ. լսարանում:

2000 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփանոս Նախատարկավագի տոնին, ձեռամբ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանի ձեռնադրվել է սարկավագ:

2000–2001 թթ. Հայաստանի Ամերիկյան Համալսարանում հետեւել է «Կառավարման դասընթացներ ճեմարանականների համար» ծրագրին:

2001 թ. հուլիս ամսին Հայրապետական տնօրինությամբ աշխատանքի է անցել Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգում:

2002 թ. փետրվար-հունիս ամիսներին ուսանել է Դանիայի Օրհուս քաղաքի Diaconal Folk High School-*ում՝ ուսումնասիրելով սոցիալական աստվածաբանություն:*

2002 թ. օգոստոսի 26-ին պաշտպանել է ավարտաճառ Պետրոս արք. Բերդումյանի «Մեկնութիւն Մննդոց» աշխատությունը թեմայով:

2005–2007 թթ. Հայրապետական տնօրինությամբ նշանակվել է Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանի վարչական տնօրեն եւ սպասավոր սարկավագ հնդկահայոց եկեղեցիներում:

2007–2008 թթ. աշխատել է Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնում, իսկ 2008 թ. մայիսից կրկին աշխատանքի է անցել Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգում:

2008 թ. մայիս ամսին հաջողությամբ հանձնել է Գեւորգյան Հոգեւոր ճեմարանի (աստվածաբանական համալսարան) ավարտական պետական քննությունները եւ ստացել որակավորման նոր վկայական՝ աստվածաբանության մագիստրոսի աստիճանով։

2009–2011 թթ. ծառայել է հայոց բանակում՝ որպես Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի հոգեւոր սպասավոր։

2011 թ. դեկտեմբերի 4-ին, ձեռամբ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանի ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ վերակոչվելով Զաքարիա աբեղա։

2011 թ. դեկտեմբերի 24-ին ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի թիվ 1537 հրամանով պարգեւատրվել է «ՀՀ Զինված Ուժեր 20 տարի» հոբելյանական մեդալով։

2012 թ. հունվարի 20-ին Հայրապետական տնօրինությամբ նշանակվել է Միջեկեղեցական բաժնի ծխական-հայեցակարգային հարցերի գրասենյակի պատասխանատու։

2013 թ. մարտի 11-ին պաշտպանել է վարդապետական թեզ «Անապակ բաժակի խնդիրը Հայոց Եկեղեցում» թեմայով եւ ապրիլի 6-ին՝ Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձեռամբ Տ. Նաթան արք. Հովհաննիսյանի ստացել մասնավոր վարդապետության 4 աստիճան։

2015 թ. սեպտեմբերի 22-ին Հայրապետական տնօրինությամբ նշանակվել է նորաստեղծ Եպիսկոպոսաց ժողովի գրասենյակի տնօրեն։

2017 թ. մարտի 13-ին պաշտպանել է ծայրագույն վարդապետական թեզ «Ս. Եւագր Պոնտացու երկերի Կիրակոս վարդապետ Երզնկացու լուծմունքները (ուսումնասիրություն եւ բնագրեր)» թեմայով եւ մարտի 19-ին՝ Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձեռամբ Տ. Նաթան արք. Հովհաննիսյանի ստացել ծայրագույն վարդապետության 10 աստիճան։

2017 թ. մայիսի 24-ին Հայրապետական տնօրինությամբ նշանակվել է Եկեղեցական-ժողովական գրասենյակի տնօրեն։

2018–2025 թթ. Հայրապետական տնօրինությամբ նշանակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն։

2018–2022 թթ. Հայրապետական տնօրինությամբ նշանակվել է «Էօրնեկեան հանրակրթական դպրոց» հանրակրթական ուսումնական հաստատություն-հիմնարկի եւ Արեւադաշտի «Էօրնեկեան մանկապարտեզ» նախադպրոցական ուսումնական հաստատություն-հիմնարկի տեսուչ։

2018 թ. Երեւանի Գ. Էմինի անվան թիվ 182 ավագ դպրոց-հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահն է։

2024 թ. արժանացել է Հայաստանի ազգային գրադարանի հիմնադրման 105-ամյակին նվիրված անվանական կրծքանշանի։

2025 թ. սեպտեմբերի 11-ին Հայրապետական տնօրինությամբ նշանակվել է Քարոզչական կենտրոնի տնօրեն։

2026 թ. մայիսի 24-ին՝ Հոգեգալստյան տոնին, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի ձեռնադրվել է եպիսկոպոս։

2026 թ. հուլիսի 1-ից Հայրապետական տնօրինությամբ վերանշանակվել է Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն։

Գեւորգյան հոգեւոր ճեմարանում դասավանդել է «Քրիստոնեական» եւ «Հայ Եկեղեցու հայրեր» առարկաները։

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հրատարակչական, Մաշտոցյան Մատենադարանի «Մատենագիրք Հայոց» մատենաշարի խմբագրական խորհուրդների, ինչպես նաեւ Մայր Աթոռի Կրթական, Միսիական, Մասնավոր եւ Ծայրագույն վարդապետական թեզերի պատրաստության եւ պաշտպանության հանձնախմբերի անդամ է։

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչն է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի «Հավատք եւ կարգ» հանձնախմբում։

Հեղինակ է 16 գրքերի եւ 51 աստվածաբանական-հայագիտական հոդվածների, ինչպես նաեւ «Ս. Մկրտություն. հարցեր եւ պատասխաններ», «Երախայից պատրաստություն», «Ավագ շաբաթ», «Սրբալույս Մյուռոն» խորագրերով հեռուստատեսային հաղորդաշարերի։

ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

Տ. ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՀԱՄԲԱՐՁԱՆ ՏՈՆԻՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(14 մայիսի, 2026 թ.)

Յաճուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

եւ եղեւ յօրինելն Նորա զնոսա, մեկնեցաւ
ի նոցանէ եւ վերանայր յերկինս
(Ղուկաս ԻԴ. 51)։

Սիրելի՛ հավատացյալ քույրեր եւ եղբայրներ,

Հեռանալն ու բաժանումը, մեզ մարդկանցս համար զգայական ցավ պատճառող իրողություններից մեկն է, որի մասին վերհուշը կրկին թախիծ ու տխրություն է բերում մեր սրտերին ու հոգիներին։ Սիրելիի, հարազատի հետ առօրյա կենդանի շփման բացակայությունը, նրան տեսնելու հնարավորությունից զրկված լինելը մեզ կարծես թե դարձնում է հուսահատ եւ անգործունյա, իսկ վաղվա օրը՝ անորոշ։

Այսօր Համբարձման տոնն է։ Հարության մեծ եւ լուսավոր ավետիսից անցել է քառասուն օր։ Հարուցյալ Տերը, ինչպես վշտաբեկ եւ հուսահատ իր աշակերտներին, բազմիցս մեզ էլ երեւաց, «Իրեն կենդանի ներկայացրեց... շատ ապացույցներով՝ քառասուն օրերի ընթացքում խոսելով Աստծու արքայության մասին» (Գործք Ա. 3), եւ ինչպես նրանց՝ մեզ էլ վերահաստատեց մեր հավատի եւ կոչման մեջ։

Քառասուն օրեր շարունակ Հիսուս պատրաստեց մեզ իրականացնելու Իր խոսքի քարոզչությունը եւ ավարտելով երկրային Իր առաքելությունը՝ Սուրբ Հոգու իջմամբ զորություն ստանալու խոստում տալով, օրհնեց մեզ եւ երկինք համբարձվեց։

Քրիստոսի Համբարձումը առասպել չէ, այլ ականատեսների վկայությամբ հաստատված իրողություն, որը վերստին ապրում ենք այսօր. առաքյալները տեսան Նրան, լսեցին եւ եղան Նրա փառքի վկաները։ Մենք,

Նրա անվանը հավատացողներս, շարունակում ենք այդ վկայությունը: Սա մի նուրբ եւ խորհրդազգացական պահ է, երբ երկինքն ու երկիրը միավորվում են մեկ տեսիլքի մեջ, եւ մենք՝ որպես հավատացյալներ, վերստին զգում ենք Աստծու անսահման ներկայությունը մեր կյանքում: Թեեւ Քրիստոս մարմնով բարձրացավ երկինք, Նա մեզ չթողեց որբ ու անօգնական: Նա խոստացավ լինել մեզ հետ «մինչեւ աշխարհի վախճանը»:

Համբարձումը մի տոն է, որն առաջին հայացքից կարող է մեզ տխրեցնել. ավետարանիչների կենդանի նկարագրությամբ մենք տեսնում ենք, թե ինչպես է Քրիստոս մարմնով հեռանում երկրից, բարձրանում երկինք ու անհետանում ամպերի մեջ (հմմտ. Գործք Ա. 10): Մարդկայնորեն կարող է թվալ, թե մենք մնացինք մենակ՝ մեր հոգսերի, մեր ցավերի ու մեր առօրյա դժվարությունների հետ դեմ հանդիման:

Բայց... Համբարձման իրական պատգամը լրիվ հակառակն է: Համբարձումը, բաժանումի մասին չէ, այն մարդկային բնության փառավորման պատմությունն է: Քրիստոս չհեռացավ, որ մեզ լքի, այլ համբարձվեց, որպեսզի լինի ամենուր եւ ամենքիս հետ: Այն ֆիզիկական հեռացում է միայն, որը դարձավ հավիտենական ներկայություն ամբողջ աշխարհի համար:

Արդարեւ, Հիսուս Քրիստոսի համբարձումը քրիստոնեական հավատքի կարեւորագույն հիմնասյուներից է, որի աստվածաբանական բովանդակությամբ բացահայտվում է մարդու փրկագործության ամբողջական պատկերը:

Հիսուս երկինք բարձրացավ ոչ թե աշխարհը լքելու, այլ մարդուն դեպի երկինք առաջնորդելու համար: Իր համբարձմամբ Նա վերստին բացեց այն ճանապարհը, որ մեղքի պատճառով փակվել էր: Այսուհետ, դեպի երկինք ճանապարհը փակ չէ մարդու առաջ: Քրիստոս համբարձումը դարձրեց մարդու կոչման հայտնության, ճշմարիտ հույսի նշան, մարդուն ուղղված խոստում, որ փրկագործության ընթացքը բաց է բոլոր հավատացյալների առջեւ: Այսպես, համբարձումը միաժամանակ ե՛ւ ավարտ է, ե՛ւ նոր սկիզբ, որով հաստատվում է Քրիստոսի երկնային թագավորությունը:

Բայց Աստված չի բնակվում միայն երկնքում, Նա մեր կողքին է, մեզ հետ է:

Այսօր շատերն են հարցնում. ինչպե՞ս գտնել Աստծուն այս ծանր օրերին, երբ շուրջբոլորը անորոշություն է, երբ տան հոգսը ծանրանում է, իսկ լուրերը՝ տագնապեցնում: Մենք հաճախ Աստծուն փնտրում ենք հեռուներ-

րում, մինչդեռ Նա ներկա է մեր առօրյայի ամենափոքր թվացող պահերի մեջ: Երբ հոգնած տուն եք վերադառնում եւ, հակառակ ձեր հոգնածութեան, ժպտում եք ձեր մերձավորին՝ Աստված այդտեղ է: Երբ զսպում եք բարկութիւնը եւ բարի խոսք եք ասում դիմացինին՝ Աստված այդտեղ է: Երբ մխիթարում եք սգավորին, զորավիգ կանգնում զինվորին ու նրա ընտանիքին, օգնում անօթեւանին կամ կարիքավորին՝ դուք դառնում եք Աստծու կենդանի ներկայութիւնը:

Աստված սիրում է մարդուն՝ մարդու միջոցով: Արդ, չփնտրենք Աստծուն միայն հրաշքների մեջ: Փնտրենք Նրան համբերութեան, ներողամտութեան եւ սիրո մեջ: Եւ կտեսնենք, որ մեր Տերը երբեք մեզ չի լքել, Նա այստեղ է՝ մեր մեջ, մինչեւ աշխարհի վախճանը: Աստծուն գտնելու համար պետք չէ փախչել իրականութիւնից, պետք է Աստծուն փնտրել իրականութեան մեջ:

Եթե այսօր մենք ուզում ենք տեսնել Աստծու ներկայութիւնը, պետք է մենք լինենք այդ ներկայութիւնը: Օգնի՛ր անօթեւանին, մխիթարի՛ր սգավորին, զորավի՛գ եղիր զինվորին ու նրա ընտանիքին: Երբ դու բարիք ես անում, դու ոչ միայն գտնում ես Աստծուն, այլեւ Նրան ցույց ես տալիս ուրիշներին:

Սիրելիներ, մենք սովոր ենք Աստծուն փառաբանել, երբ ամեն ինչ լավ է: Իսկ երբ հանկարծ մի բան մեր սրտով չէ, հարցերի տարափ ենք ուղղում Նրան: Գիտեք, թե երբ է Նա մեզ ամենամոտը: Երբ մենք նեղութեան մեջ ենք: Ինչպես աշակերտները Համբարձման ժամանակ շփոթված էին, այնպես էլ մենք ենք հաճախ շփոթվում: Բայց հիշե՛ք. Քրիստոս խոստացավ Մխիթարիչ Սուրբ Հոգուն առաքել: Այն պահին, երբ դուք ձեզ անօգնական եք զգում ու ասում եք՝ «Տե՛ր, ես չեմ կարողանում, Դո՛ւ օգնիր», հենց այդ վայրկյանին դուք բացում եք ձեր սրտի դուռը Նրա առաջ եւ դժվարութիւնը ոչ թե պատիժ է դառնում, այլ հնարավորութիւն՝ Աստծու պարգած Աջը բռնելու, դժվարութիւնը վերածվում է օրհնութեան:

Արդ, Համբարձման այս լուսավոր օրը, երբ մենք նայում ենք դեպի երկինք, թող մեր հայացքը չլինի կարոտի, այլ լինի հույսի հայացք, հավատանք, որ Քրիստոս համբարձվեց, որպեսզի Իր աստվածային զորութեամբ լցնի մեր ամեն մի օրը եւ ամեն մի հոգսը:

Սիրելի՛ հավատացյալներ, Համբարձման տոնը կրոնական ու հոգեւոր ապրումներով, աստվածաբանութեամբ եւ ազգագրական բազում ավանդութիւններով հարուստ լինելուց բացի մեկ այլ կարեւոր իրադարձութեամբ է հավերժացել հայոց պատմութեան մեջ: Հենց այդ տոնի օրն է, որ

իմաստուն մեր հայրերը 1441 թվականին Վաղարշապատի ազգային-եկեղեցական ժողովում որոշում են Կիլիկիո Սիս քաղաքում հանգրվանած Հայրապետական Աթոռը մեկընդմիշտ վերահաստատել լուսավորչահիմն Ս. էջմիածնում, որը եղել եւ շարունակում է մնալ աշխարհասփյուռ հայերի հոգեւոր եւ պատմական կենտրոնն ու մեր ինքնության խարիսխը։ Ի հիշատակություն դարակազմիկ այդ օրվա՝ Իջման Ս. Սեղանի առջեւ եւ աշխարհասփյուռ մեր եկեղեցիներում ամեն տարի կատարվում է Հայրապետական մաղթանք, որին Քրիստոսի սիրով լցված սիրելի քույրեր եւ եղբայրներ, հրավիրում եմ միանալու աղոթական այն մտածումով, որ Սուրբ էջմիածինը Աստծու եւ մարդու հանդիպման տեսիլքն է, որի միջոցով եւ որտեղ հայ մարդը, Միածնի էջքով առաջնորդված, գտնում է իր հոգու փրկությունը։

Պատմությունը ցույց է տալիս, որ այն ժողովուրդը, որը կորցնում է իր հոգեւոր կենտրոնի հանդեպ հարգանքը, աստիճանաբար կորցնում է նաեւ իր ազգային դիմագիծը, որովհետեւ ինքնությունը չի պահպանվում միայն օրենքով, վարչական համակարգով կամ քաղաքական կարգախոսով։

Անշուշտ, անցնող 6 դարերը հեշտ չեն եղել մեր Եկեղեցու եւ Մայր Աթոռի համար։ Այո, հայրապետանոցը եղել է իշխանական տան կողքին, սակայն պատմությունը ցույց տվեց, որ դեգերող աթոռը հաստատուն եւ հոգեփրկիչ լինել չի՛ կարող, եւ ահա արդեն 585 տարիներ անսասան եւ անշարժ կանգնած է այն՝ տեսիլքով սրբագործված օրհնյալ պատմական այս հողի վրա՝ Արարատահայաց Վաղարշապատում, որ համայն աշխարհին հայտնի է էջմիածին անունով։

Սուրբ էջմիածնի անշարժությունը աստվածաբանական եւ ազգային ընկալման մեջ պարզապես աշխարհագրական անփոփոխություն չէ, այլ՝ հոգեւոր հաստատություն եւ աստվածադիր կենտրոնի անխախտելիություն։

Անհերքելի է, որ Կաթողիկոսական Աթոռի վերադարձով, Ս. էջմիածինը հայրենիքի, պետականության հիշողությունը դարձրեց իրական եւ ապրող նպատակ, որից ծնվեցին հավաքական պատասխանատվության, ազգային միասնականության գիտակցությունը եւ ազատագրական պայքարի տարբեր նախաձեռնումներ։

Դարերի ընթացքում էջմիածինը դարձավ գիտության եւ գրչության կենտրոն, ինչը թույլ տվեց պահպանել հայկական մտավոր ներուժը, որը հետագայում դարձավ պետության վերածննդի խթանիչ ուժ։

Սուրբ Էջմիածինը դարձավ այն առանցքը, որի շուրջ համախմբվեց աշխարհասփյուռ հայությունը: Միասնական ազգային, հոգեւոր, մշակութային կենտրոնի շնորհիվ հայ ժողովուրդը պահպանեց իր ազգային դիմագիծն ու ինքնությունը եւ քանի դեռ պետականությունը բացակայում էր, Մայր Աթոռը ստանձնեց պետության գործառույթներ՝ առանց նրան փոխարինելու հավակնության:

Ընդհակառակը, հավատի շաղախով մշտապես զորացրել է պետության հոգեւոր հիմերը, համախմբել ժողովրդին՝ նվիրապետությամբ, կանոնական կարգով, կրթությամբ, ազգային հիշողությամբ եւ համազգային ներկայությամբ:

Մայր Աթոռը համայն հայության ընդհանրական հոգեւոր տունն է եւ չի պատկանում որեւէ անհատի կամ սերնդի. այն հայ ժողովրդի դարավոր աղոթքի տունն է:

Հայ ժողովրդին էջմիածնից կտրելու փորձը ազգային ինքնության մեջ հոգեւոր դատարկություն ստեղծելու փորձ է, որովհետեւ էջմիածինը հայ ինքնության խորհրդանիշ չէ պարզապես, այլ՝ հայ ժողովրդի դարերով բաբախող սիրտն է. այստեղ է խտացված հայի աղոթքը, հավատքը, պատմությունը, հարության հույսը եւ Աստծու առաջ կանգնելու արժանապատվությունը: Այդ սիրտը խոցել նշանակում է խոցել ժողովրդի հավատքը, հիշողությունը, միասնությունը: Սփյուռքի եւ հայրենի կյանքում էջմիածինը եղել է ուխտավայր. այն միացրել է աշխարհագրորեն բաժանված հայերին մեկ հոգեւոր կենտրոնի շուրջ, ստանձնել ազգապահպան առաքելություն, որը միայն լեզվի կամ մշակույթի պահպանում չէ: Այն նաեւ հավատքի, սրբությունների, ընտանեկան բարոյականության, պատմական հիշողության, նահատակների հանդեպ պարտքի եւ ապագայի հանդեպ պատասխանատվության պահպանում է:

Սիրելինե՛ր, արժեքներն ստեղծվում են ժամանակների համար եւ մեծերն էլ գնահատվում ու ավելի ընկալվում են տարիների հեռավորությունից:

Երբ ճիշտ քառորդ դար առաջ, քրիստոնեությունը պետական կրոն հռչակման առիթով Մայրավանքի տարածքում հուշարձաններ վեր խոյացան, շատերին գերեց միայն դրանց ճարտարապետական եւ գեղարվեստական հմայքը: Բայց բոլորս քաջ գիտենք, որ խորհրդանիշները մեծ նշանակություն ունեն. դրանք արտահայտում են կերտողների հավատալիքները, գաղափարներն ու տեսիլքները:

Եւ ահա, ձեզանից շատերը, երբ այսօր Մայր Աթոռի տարածք եք մտել, անցել են Սուրբ Էջմիածնի 132-րդ գահակալի, Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեսիլքի քարեղեն մարմնացումների՝ սուրբ Գրիգոր Լուսավորչի անունը կրող վեհ հաղթակամարով եւ սուրբ Տրդատ արքա բաց խորանի կողքով: Ձեր գլխավերեւում՝ հաղթակամարի կենտրոնական մասում Հայոց սուրբ արքայի եւ Հայոց սուրբ Հայրապետի քանդակներն են, միասին իրենց ձեռքերով խաչը բռնած՝ Էջմիածնի յուրաքանչյուր ուխատավորին եւ այցելուին օրհնելու համար:

Սիրելինե՛ր, Էջմիածինը հայ ժողովրդին պահել է ոչ միայն որպես էթնիկ հավաքականութիւն, այլ որպես հավատք ունեցող, սրբութիւն ունեցող, պայքարող, հարութիւնը հավատացող եւ պատմական առաքելութիւն կրող ժողովուրդ:

Արդ, Համբարձման այս հոգենորոգ տոնին աղոթենք, որ մեր հայացքը դեպի երկինք բարձրանա ոչ թե հեռավորութիւնը չափելու, այլ հույսով ապրելու համար: Քրիստոս համբարձվեց, բայց մեզ չլքեց: Նա մեզ հետ է՝ մեր եկեղեցու մեջ, մեր աղոթքի մեջ, մեր ժողովրդի խաչակիր ճանապարհի մեջ, Սուրբ Էջմիածնի անլռելի զանգերի մեջ:

Թող Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մշտապես հնչի հաղթական եւ կենսանորոգ ավետիսը, որ երկինքն այլեւս հեռու չէ մարդուց, եւ Աստված չի լքել Իր ժողովրդին: Թող Տիրոջ սերը, շնորհը եւ խաղաղութիւնը լինեն ամենքիս հետ այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն:

Տ. ԶԱՔԱՐԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՂՈՒՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՈՒԽՏԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(25 մայիսի, 2026 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն».

«Ազնի՛ւ ծառայ, բարի եւ հաւատարիմ,
որովհետեւ ի սակաւուտ հաւատարիմ ես,
ի վերայ բազմաց կացուցի քեզ»
(Մատթ. Իե. 21)։

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ ի Քրիստոս,

Գոհունակ սրտով եւ անհուն երախտագիտությամբ նախեւառաջ շնորհակալություն եմ հայտնում ամենակարող Աստծուն պարգեւած ամեն օրվա, Իր շարունակ առաջնորդության եւ անքննելի նախախնամության համար։ Անպատմելի երջանկություն է ամեն անգամ պատարագել այս սուրբ տաճարում, հաղթանակած Տիրոջ կենդանարար մարմինն ու արյունը բաշխել, սրտաբուխ եւ լիաթոք աղոթել՝ նաեւ մշտապես խնդրելով Աստծու օգնականությունն ու պահպանությունը մեր սրբազան հայրենիքի շենացման եւ «փոքր ածու»-ի բարօրության համար։ Անտարակույս, այս տաճարի ամեն քարը լուռ վկան է Հայոց պատմության Հբազում անցքերի եւ Ս. Էջմիածնի հանդեպ հայի անմնացորդ ու անդավաճան սիրո։ Այստեղ մեր նախնիներն են աղոթել եւ մեզ կտակել, որ համախմբվենք Հայոց Եկեղեցու շուրջ՝ դառնալով Տիրոջ խոսքի քարոզողներ ու լուսավորչական առաքելության ջահակիրներ։ Ս. Էջմիածինը եղել եւ մնում է մեր ինքնության դարբնոցը, որի քուրայում թրծվում եւ բյուրեղանում է հայկականությունը։

Այսօր նվիրական եւ պատասխանատու օր է ինձ համար, որովհետեւ Աստծու ողորմությամբ եւ Նրա կամքով եպիսկոպոսական ուխտիս անդրանիկ պատարագն եմ մատուցում Իջման Սուրբ Սեղանին՝ հայցելով մեր հավատքի հոր՝ Ս. Գրիգոր Լուսավորչի բարեխոսությունն ու ամենքիդ աղո-

թական աջակցությունը։ Երեկ երեք եղբայրներիս հետ կրկին ծնկեցինք Միածնաէջ այս տաճարում եւ ուխտեցինք չշեղվել հավատքի ճշմարիտ դավանությունից, չլինել օրինազանց եւ եկեղեցու կարգերն արհամարհող, հետեւել ուղղափառ հայրերին, ծիսականոնական մտածողությանը, ցկյանս հավատարիմ լինել Ս. Էջմիածնի առաքելությանը եւ հնազանդ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի որոշումներին։ Քաջ գիտակցում եմ, որ եպիսկոպոսությունը ոչ միայն պատիվ է եւ եկեղեցու նվիրապետության բարձր աստիճան, այլեւ խաչ եւ ծառայություն, պատասխանատվություն եւ հանձնառություն Տիրոջ եւ մեզ հանձնված ժողովրդի առջեւ։

Որդիական խոնարհությամբ շնորհակալություն եմ հայտնում ազգիս Վեհափառ Հայրապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ արժեւորեց, գնահատեց տարիներիս անսակարկ ծառայությունը հոգեւոր անդաստանում եւ իր մյուռոնաբույր Սուրբ Աջով եպիսկոպոս ձեռնադրեց։ Միշտ աղոթել եւ այսուհետ նույնպես առավել ջանասիրությամբ ու սիրով աղոթելու եմ Հայոց Եկեղեցու առաջին սպասավորի կենաց արեւշատության եւ նրա հովվապետական գավազանի անսասանության համար՝ իմովսաննն աջակցելով Հայոց Հայրապետի հոգենորոգ եւ ազգաշեն ծրագրերի իրականացմանը։

Շնորհակալություն նաեւ եպիսկոպոսական ձեռնադրության խարտավիլակին՝ Դամասկոսի հայոց թեմի բարեջան առաջնորդ Տ. Արմաշ եպս. Նալբանդյանին, որ Վեհափառ Հայրապետի առջեւ վկայեց ընծայացուներիս արժանավորությունը։

Անսահման շնորհակալություն եւ աղոթք ծնողներիս՝ հոգելույս հայրիկիս եւ Ս. Պատարագին ներկա մայրիկիս համար։ Նրանք ինձ ոչ միայն կյանք են պարգեւել, այլեւ սիրել, գուրգուրել, տառապել, տխրել եւ ուրախացել՝ դառնալով տիպար օրինակ կյանքիս բոլոր հանգրվաններում։

Շնորհակալություն նաեւ Մայր Աթոռի ուխտապահ միաբանության գերաշնորհ, հոգեշնորհ եւ բարեշնորհ բոլոր հայրերին, քահանաներին, դպիրներին, պարզ սպասավորներին ու հավատացյալներիդ, ովքեր աղոթքով, սիրով, ջերմ խոսքով եւ գործով աջակցել եք հոգեմտավոր առաքելությանս ամբողջ ընթացքում։ Հավատացեք՝ ես միշտ զգացել եմ ձեր անկեղծ աղոթքների ուժը եւ փոխադարձաբար աղոթել ձեզ համար։ Շարունակեք նույն ոգով եւ նախանձախնդրությամբ աղոթել հոգեւորականներիս համար՝ նրանց շարքում հիշելով նաեւ անարժանիս, որ պատիվն ունեմ լինելու Սուրբ Էջմիածնի զավակ եւ ծառայելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում։

Իբրեւ եպիսկոպոս՝ առաջին անգամ պատարագելով Միածնաէջ Մայր տաճարում եւ գիտակցելով եպիսկոպոսական իշխանության ծանրությունը եւ պատասխանատվությունը՝ անընդհատ մտածում եմ Տիրոջ հետեւյալ ազդու խոսքերի մասին. «Կեցցե՛ս, բարի՛ եւ հավատարի՛մ ծառա, քանի որ այդ քչի մեջ հավատարիմ եղար, քեզ շատի վրա կնշանակեմ» (Մատթ. Իե. 21)։ Մեր Տերը քանքարների առակում գովում է հավատարիմ ծառային եւ գնահատում հավատարմությունը փոքր բաների մեջ։

Հավատարմությունը սոսկ զգացում չէ կամ գեղեցիկ բառ շատերիս շուրթերին, այլ գիտակցված ընտրություն։ Այդ ընտրությունը եղել է անցյալում, կա այսօր, լինելու է նաեւ ապագայում։ Թող ոչ ոք իրեն չարդարացնի եւ ինչ-որ պատճառաբանություններ գտնի, այլ մտածի, թե ինչպե՛ս է հիշվելու պատմության մեջ։ Իսկ պատմությունը չի ներում դավաճաններին եւ պատկառանքով է հիշում հավատարիմներին։ Նայե՛ք նույն այդ պատմությանը եւ կհամոզվեք, որ այն անհատական եւ հավաքական հավատարմություն է Քրիստոսին եւ ուղղափառ դավանությանը։

Սիրելինե՛ր, քրիստոնեական բոլոր առաքինությունները մեր կյանքում կպտղաբերեն եւ արդյունք կտան, եթե դրանք զուգակցվեն հավատարմությամբ, այսինքն՝ հաստատունությամբ։ Աղոթքը, պահքը, Աստվածաշնչի սերտողությունն ու հոգեւոր մյուս ջանքերը գովելի են, բայց առանց կայունության եւ շարունակականության զուրկ են ակնկալվող արդյունավորությունից։

Հավատարիմ լինել նշանակում է առանց երկմտության եւ վախի հավատալ ու վստահել Աստծուն թե՛ ուրախ պահերին եւ թե՛ դժբախտությունների, փորձությունների ժամանակ, որովհետեւ առաջին հերթին «Աստված է հավատարիմ» (Ա. Կորնթ. Ժ. 13)։ Ներկայիս աշխարհը փոփոխությունների եւ նորամուծությունների շրջափուլում է, երբ մեր աչքի առջեւ ամեն ինչ սրընթաց փոխվում է։ Այս փոփոխությունների հորձանուտում անփոփոխ են մնում միայն Աստված եւ Նրա կենդանի խոսքը. «Երկինքը եւ երկիրը կանցնեն, բայց Իմ խոսքերը չեն անցնի» (Ղուկ. ԻԱ. 33)։ Հետեւաբար, եթե ցանկանում ենք ամուր մնալ, հաջողություններ արձանագրել, ապա գործնականում պիտի ցույց տանք մեր հավատարմությունը։ Տեսե՛ք՝ Տիրոջ համար հավատարմությունն սկսում է փոքր բաներից եւ ոչ թե մեծ գործերից։ Այս նույն հավատարմությունն ավելիով պահանջվում է հոգեւորականներիցս, որ կոչված ենք քարոզելու, տարածելու Աստծու խոսքը եւ մարդկանց փրկության առաջնորդելու։ Ըստ Պողոս առաքյալի՝

եկեղեցականներիս մեջ Աստված փնտրում է հենց հավատարիմներին (տե՛ս Ա. Կորնթ. Դ. 2)։ Ուստի եպիսկոպոսությունն անպայմանավոր հավատարմության կոչում եւ խաչի ծառայություն է։

Եպիսկոպոսի պարտականությունն է հավատարիմ լինել Առաքելական Ավանդությանը, պահպանել ուղղափառ դավանությունը, ծիսականոնական վիճակը եւ նախանձախնդիր լինել Եկեղեցու միությանը։ Մեր նպատակը նոր բաներ ստեղծելը չէ կամ նորամուծություններ մտցնել Եկեղեցու կյանքում, այլ սրբորեն պահել եւ սերունդներին անաղարտ փոխանցել առաքյալներից եւ մեր հայրերից ավանդվածը։ Հավատարմությունը հենց այս հարցերում է անհրաժեշտ։ Միայն այդ դեպքում մեզ նույնպես կկոչեն «բարի՛ եւ հավատարի՛մ ծառա», որ չվախեցավ դժվարություններից, խնդիրներից եւ մինչեւ վերջ հավատարիմ եղավ իր առաքելությանը։ Այս ամենը, անշուշտ, պիտի զարդարվի նաեւ եպիսկոպոսի առաքինի կենսակերպով։ Նրա կյանքի օրինակը կենդանի քարոզ պիտի լինի հավատացյալների համար։ Նշածս հավատարմությունը ենթադրում է նաեւ պահպանել Եկեղեցու հաղորդական միությունը եւ որեւէ կերպ բաժանումներ չառաջացնել հավատացյալների մեջ՝ վտանգելով այդքան բաղձալի միությունը։ Ինչպես տեսնում ենք, եպիսկոպոսից՝ իբրեւ առաքյալների իրավահաջորդից, շատ բան է պահանջվում։ Բայց այս ծանր լուծը թեթեւ ու քաղցր է, երբ այն տանում ես սիրով, հնազանդությամբ, Տիրոջ հանդեպ հավատարմությամբ եւ պատասխանատվության բարձր զգացումով։ Այսուհետ միայն քեզ համար չես պատասխանատու, այլեւ քեզ հանձնված հոտի ամեն անդամի հոգու փրկության համար։

Հայոց Եկեղեցու սիրասուն զավակնե՛ր, աղոթում եւ օրհնում եմ ամենքիդ, որ հաստատուն մնաք հավատքի մեջ եւ հավատարիմ՝ մեր Տիրոջն ու Հայոց Եկեղեցուն՝ Պողոս առաքյալի նման խնդրելով աղոթել նաեւ ինձ համար։ Ջմռռանաք՝ մեկ օր ամենքս կանգնելու ենք անկաշառ Դատավորի առջեւ եւ պատասխան ենք տալու մեր արած-չարածի համար։ Մի կարեւոր հարց է մեզ անպայման տրվելու այդ ժամանակ՝ հավատարի՛մ եղար կյանքիդ ընթացքում… Տա՛ Աստված, որ այդ օրն ամենքս Տիրոջից լսենք. «Կեցցե՛ս, բարի՛ եւ հավատարի՛մ ծառա… մտի՛ր Տիրոջդ ուրախության մեջ»։

«Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սերը եւ Սուրբ Հոգու հաղորդությունը ձեզ հետ լինեն. ամէն» (Բ. Կորնթ. ԺԳ. 13)։

Տ. ՌՈՒԲԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՋԱՐԳԱՐՅԱՆ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՈՒԽՏԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(26 մայիսի, 2026 թ.)

«Փա՛ռ Քեզ, Աստուա՛ծ, փա՛ռ Քեզ, յաղագս ամենայնի, Տէ՛ր, փա՛ռ Քեզ»։

Փա՛ռ Քեզ, Աստվա՛ծ, փա՛ռ Քեզ, որ արարչական նախախնամությամբդ տակավին անհաստատ էայլերս ուղղեցիր անձեռակերտ փրկարանդ ու սրբարանդ՝ մեղավորիս մկրտությամբ վերստին ծնելով եւ Քեզ որդեգրելով։ Այլեւ որպես «ընտրյալ անոթ»՝ նվիրագործեցիր ու հաւատացյալության կոչեցիր՝ Սուրբ Ավազանից մարդկանց հոգիներին Քեզ որդեգիրներ ծնելու։ Աղաչանմս է՝ անճառելի փառիդ ճառագայթմամբ հոգուս խորանում անսասանելի հավա՛տ հաստատիր։

Փա՛ռ Քեզ, Աստվա՛ծ, փա՛ռ Քեզ, որ արարչական սիրովդ անարժանիս Մարմնիդ ու Արյանդ կենարար հաղորդությանն արժանացրիր։ Այլեւ որպես խորհուրդներիդ տնտես՝ մարդկանց հոգիներին նույն սրբարար Հաղորդության մատակարարմանը կարգեցիր։ Աղաչանմս է՝ ամենասրբությանդ ակնաղբյուրից մարմնիս տաճարում սրբարար ցո՛ղ կաթեցրու եւ Սուրբ Սեղանիդ ու Անապակ Բաժակիդ ամբողջական սրբությա՛մբ մերձեցրու։

Փա՛ռ Քեզ, Աստվա՛ծ, փա՛ռ Քեզ, որ անհասելի բարձունքիցդ անարգիս նայելով, սուրբ առաքյալներիդ համազոր, կանչեցիր՝ Քեզ հետեւելու եւ մարդկանց հոգիների որսորդ դառնալու, Հայոց միածնաէջ Սրբավայրում սպասեցրիր՝ Սուրբ Հոգուդ զորությունն առնելու եւ հայ հոգիներին Քեզ վկայելու։ Աղաչանմս է՝ առատաբուխ շնորհներիդ հեղմամբ՝ տկարիս օձանման խորագիտությո՛ւն եւ աղավնակերպ միամտությո՛ւն պարգեւիր, որպես հայելի՝ աշխարհին աստվածային լույսդ ցոլացնելու։

Փա՛ռ Քեզ, Աստվա՛ծ, փա՛ռ Քեզ, որ անմոռաց գիտությամբդ անարժան ծառայիդ «դետ» կարգեցիր ի մեջ Տանդ Հայոց՝ կամիդ պատգամախոսը լինելու՝

Քո անունով, Քո ամենատես նայվածքի ներոո, Քեզ հաշիվ տալու զգացումով։ Աղաչանքս է՝ ամենագիտությանդ հոդահոս եղջյուրից իմաստության աղբյո՛ւր ցայտեցրու մտքիս ծալքերում, որպես բարի ավետարանիչ՝ ավետարանելդ ամոթ չհամարելու, եւ որպես բարի սերմնացան՝ կենաց խոսքդ ժողովրդիդ հոգեւոր ու մտավոր անդաստանում սերմանելու։

Փա՛ռք Քեզ, Աստվա՛ծ, փա՛ռք Քեզ, որ անբավ մարդասիրությամբդ անպիտան ծառայիդ հովիվ կարգեցիր ի մեջ բանավոր հոտիդ Հայոց՝ դալար վայրերում եւ հանգստավետ ջրերի մոտ սնուցելու։ Այժմ էլ, Տե՛ր, խղճմտանքս շարունակ հնչեցնում է հարցմանդ արձագանքը, թե՝ «Սիրո՞ւմ ես ինձ»։ Պատասխանս աղաչանք է՝ անչափելի սիրուդ օվկիանից սրտիս տաղավարում սիրո վտա՛կ բխեցրու՝ հոտիդ ինձ վստահված անդամներին ջերմեռանդությամբ խնամելու, ուղղափառությամբ պահելու եւ կյանքի հոգեծուփ մրրիկների միջով անվտանգ դեպի փրկության տապան առաջնորդելու։

Ողորմա՛ծ եւ բարերա՛ր Աստված, որ հայրական սիրովդ անառակ որդուս Այլակերպության լեռդ ու լուսեղեն հարկդ առաջնորդեցիր եւ հին մարդուս խաչելով՝ նորոգված կյանքով արդարության հորիզոն ուղեկցեցիր. ո՞րն է արժանիքս կամ առավելությունս, ի՞նչ է կարողությունս կամ ուժականությունս, որ տնտեսությանդ մեջ Քեզ գործակից՝ եղմարտության քարոզիչ եւ խորհուրդների մատակարար կարգեցիր։ Պաղատագին աղաչանքս է՝ կատարյալ հավա՛տ, կատարյալ հո՛ւյս եւ կատարյալ սե՛ր շնորհիր դյուրաբեկ որդուդ՝ որպես «մշակ առանց ամօթոյ»՝ քարի պատերազմս պատերազմելու, ընթացքս ավարտելու եւ հավատս պահելու։

«Փա՛ռք Քեզ, Աստուա՛ծ, փա՛ռք Քեզ, յաղագս ամենայնի, Տէ՛ր, փա՛ռք Քեզ»։

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, Այս պահին սիրտս, հոգիս եւ միտքս առատապես լցված է շնորհակալ զգացումով, աղոթական ներշնչումով եւ լուսավոր մտածումով, որով իմ խոնարհ որդիական երախտագիտություն եմ հայտնում Վեհափառ Հայրապետին՝ վստահության, հայրական հոգածության եւ ինձ մեր Սուրբ Եկեղեցու եպիսկոպոսական պատասխանատու առաքելությանը կոչելու համար։ Ամենակալ Տերը, ունկնդիր ամեն հայի սրտից բխած աղոթքներին, թող երկար կյանք պարգեւի Հայոց Հովվապետին՝ առաջնորդելու մեր ժողովրդին հավատքի, միաբան սիրո եւ հաղթանակի ճանապարհով, եւ թող անսասան պահի լուսավորչատեսիլ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը։

Ողիական խորին երախտագիտությունս հոգեւոր ծնողիս՝ Միհայել Սրբազանին, որի ձեռամբ արժանացել եմ ե՛ւ սարկավագական, ե՛ւ քահանայական ձեռնադրության, որի խրատներով ու օրինակով ձեւավորվել է իմ հոգեւոր ճանապարհը: Թող Տերը զորացնի նրան իր ներկա փորձություններուն մեջ եւ շուտով պարգեւի արդարության ու ազատության հաղթանակը:

Երախտագիտությամբ հիշում եմ Բագրատ Սրբազանին՝ որպես իմ ուսուցչի եւ հոգեւոր ավագ եղբոր, որի խոսքն ու վկայությունը միշտ ներշնչել են հավատարմություն Աստծու ն եւ հայրենիքին: Աղոթքս է, որ Տերը նրան նույնպես զորացնի փորձության այս ճանապարհին եւ անսասան պահպանի իր առաքելության մեջ:

Խոնարհ շնորհակալությունս եմ իմ ծնողներին եւ ընտանիքիս, ովքեր ինձ սովորեցրին հավատի այբուբենը, եւ որոնց աղոթքներով ու զոհողություններով աճա այս հանգրվանին եմ:

Եղբայրական սիրով շնորհակալություն եմ հայտնում աշխարհասփյուռ իմ միաբան եղբայրներին ու հայրերին, որոնց հետ բաժնեկից եմ եղել հոգեւոր ծառայության, պայքարի, աղոթքի ճանապարհին: Նրանց ներկայությունն ու աջակցությունը մշտապես զորացրել եւ մխիթարություն են պարգեւել ինձ:

Երախտագիտությամբ խոնարհվում եմ իմ բոլոր ուսուցիչների առջեւ, որոնք ինձ փոխանցել են ոչ միայն գիտելիք, այլեւ եկեղեցուն ծառայելու պատասխանատվության գիտակցություն: Նրանց սերմանածը շարունակում է պտղաբերել ծառայությանս ընթացքում:

Ի խորոց սրտի շնորհակալ եմ ձեզ, սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ՝ սիրո, վստահության եւ ձեր աղոթքների համար: Եպիսկոպոսական առաքելությունն անհնար է իրականացնել առանց ձեր հավաքական հավատի, եւ հետայսու ես ինձ կոչված եմ զգում ծառայելու Աստծու ժողովրդին՝ որպես վերատեսուչ-հովիվ եւ հայր-եղբայր:

Մասյացոտնի թեմի իմ համբուրելի՛ ժողովուրդ, որ առաջին իսկ օրից ինձ իբրեւ ձեզ առաջնորդ գրկաբաց ընդունեցիր ջերմությամբ եւ հոգատարությամբ: Հավատի ու հավատարմության կենդանի վկայությունդ չարիքի դեմ պայքարի հզոր ազդակ դարձավ ինձ համար՝ ամբողջապես նվիրվելու եւ մեր Տիրոջ օրինակով «իսպառ սիրելու» հանձնառությամբ:

Առանձնակի խոնարհումս ձեզ, թեմիս քահանա՛յրեր եւ հոգեւոր սպասավորնե՛ր, դուք մեր օրոյա հալածանքների առջեւ մնացիք անդրդվելի՝ հավատարիմ ձեր ուխտին, սուրբ Թադեի առաքելական գահին, Հայոց Հայրապետին: Հնագույն շրջանում Աստծու սպասավորներն անցնում էին բաբելական հնոցի, հոմեա-

կան կրկեսի, աոյուծնեռի եռախի միջով: Վեռջին ամիսներին միասին անցանմ ժամանակի փոռնությունների՝ ատելության, համացանցային հարձակումների, իշխանական ճնշումների վտանգավոռ ալիքների միջով՝ երբեմն նմանվելով ծովի վրա բայլող առաքյալին, ոռ միաժամանակ զգում էր և՛ Քրիստոսի ձեռքի զոռությունը, և՛ սուզվելու վտանգը: Մնացիք կանգուն՝ ձեռ թիկունքում զգալով մեռ եկեղեցական համայնքների աղոթքն ու զոռակցությունը:

Թող Տեռը վառնահատույց լինի ձեռ հավատառմության, բաջության եւ նվիռումի համառ, եւ Մասյացոտնի թեմը մշտապես մնա ջեռմեռանդ հավատքի, եկեղեցասիռության եւ ազգային ոգու ամուռ վկայություն:

Հանուն Հօռ եւ Ոռդոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն.

«Ողջոյն ընդ ձեզ, ոռպէս առաքեաց զիս Հայր, եւ ես առաքեմ զձեզ: Եւ զայս իբրեւ ասաց, փչեաց ի նոսա եւ ասէ, Առէք Հոգի Սուրբ...»
(Յովհ. Ի. 21–22)

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Օրվա ավետարանը պարզապես Քրիստոսի հետհարությենական հայտնություններից մեկը չէ, այլ Սուրբ Եկեղեցու առաքելական ծառայության ծննդյան վկայականը՝ զատկական խաղաղության, Սուրբ Հոգու շնորհաբաշխման եւ առաքելության կոչման ավետարանը: Ահա թե ինչու է մեր եկեղեցին ավետարանի հենց այս հատվածը հռչակում եպիսկոպոսական ձեռնադրության ժամանակ. որովհետեւ հենց այս դրվագի մեջ է բացահայտվում առաքելական ծառայության ողջ էությունը:

Խորհրդանշական է, որ այս սրբազան արարողությունը կատարվում է այն հողի վրա, որի հիշողության մեջ դեռ արձագանքում է Սարդարապատի զանգերի ձայնը: Երբ թվում է՝ հայ ժողովուրդը վերջնական կործանման եզրին է, Աստված մեզ շնորհում է հարության իր պահը. Սարդարապատը դառնում է հոգեւոր վերածննդի, ազգային կամքի եւ հավատքի հաղթանակ՝ մահվան սպառնալիքի առջեւ: Առաջին Հանրապետությունը ծնվում է մեր ժողովրդի հոգեւոր տոկունությունից, եկեղեցու աղոթական զորությունից, այն գիտակցությունից, որ հայրենիքը սոսկ հողակտոր չէ,

այլ Աստծու պարգեւ, հայրերի սրբազան ժառանգություն, ազատության փարոս: Այսօր եւս, երբ ապրում ենք նոր փորձությունների եւ անորոշությունների մեջ, Հարուցյալ Քրիստոսի «խաղաղությո՛ւն ձեզ» խոսքը նույն զորությամբ հնչում է՝ մեզ հիշեցնելով, որ ազգերը հարություն են առնում այն ժամանակ, երբ չեն կորցնում իրենց հավատքը, հիշողությունը, հոգեւոր միասնությունը եւ պայքարի ոգին:

«Այդ կիրակի օրը՝ երեկոյան, երբ աշակերտները միասին հավաքվել էին եւ դռները փակել, Հիսուս եկավ եւ կանգնեց նրանց մեջտեղը»: Դռները փակ էին, բայց առավել փակ էին աշակերտների սրտերը: Նրանք վախեցած էին: Տեսել էին խաչը, բռնությունը, իրենց Վարդապետի ակնհայտ ձախողումը: Եկեղեցին եւս հաճախ անցնում է նմանօրինակ իրավիճակների միջով՝ շփոթության, վախի, բաժանման, հոգեւոր ուժասպառության: Մարդկային սիրտն էլ ունի իր փակ դռները՝ մեղքը, հուսահատությունը, անվստահությունը, ցավը:

Բայց Հարուցյալը մուտք է գործում. Քրիստոս փակ դռներով ներս է մտնում ոչ թե բնության օրենքները խախտելու, այլ ցույց տալու, որ իր փառավորյալ մարմինն արդեն պատկանում է նոր արարչությանը: Ոչինչ չի կարող խոչընդոտել հարուցյալ Տիրոջ ներկայությանը՝ ո՛չ գերեզմանի քարը, ո՛չ փակ դռները, ո՛չ էլ մարդկային վախերը:

Հատկանշական է Հարուցյալ Քրիստոսի առաջին խոսքը. «խաղաղությո՛ւն ձեզ»: Ոչ հանդիմանություն աշակերտներին փախուստի համար, ոչ դատապարտություն՝ ուրացման համար, այլ՝ խաղաղությո՛ւն: Ջատկական այս խաղաղությունը հոգեբանական հանգստություն չէ: Այն Աստծու եւ մարդու հաշտությունն է, սիրո հաղթանակը ատելության դեմ, կյանքի հաղթանակը մահվան վրա, արդարության հաղթանակը մեղքի հանդեպ:

Սուրբ Հովհան Ոսկեբերանը Քրիստոսի պարգեւած այս խաղաղությունը համարում է աշակերտների պատրաստություն դեպի թշնամական աշխարհ առաքելության: Ոչ ոք չի կարող լինել Քրիստոսի առաքյալը՝ առանց նախապես ստանալու Քրիստոսի խաղաղությունը: Այդ պատճառով առաքելապատիվ եպիսկոպոսը նախ խաղաղության մարդ է. ո՛չ այս աշխարհի խաղաղության, որ կառուցվում է պատեհապաշտության վրա, այլ ավետարանի խաղաղության, որ հիմնված է ճշմարտության վրա:

Ապա Հիսուս ցույց է տալիս «իր ձեռքերը եւ կողը»: Հարուցյալը պահպանում է իր վերքերը: Սա քրիստոնեության խորին խորհուրդներից մեկն է: Վերքերը չեն վերանում, այլ փառավորվում են: Քրիստոս իր գամված ձեռ-

քերի եւ խոցված կողի վերքերը պահպանում է որպես սիրո նշան, որպես հաղթանակի վկայություն եւ որպես մշտնջենական բարեխոսություն Հայր Աստծու առջեւ:

Եկեղեցին ծնվում է Քրիստոսի վերքերից, ինչպես Եւան՝ Ադամի կողոսկրից: Գեղարդախոց կողից դուրս են ցայտում ջուր եւ արյուն՝ նշանը եկեղեցու սուրբ խորհուրդների՝ մկրտության եւ հաղորդության: Առաքելական ծառայությունը ծնվում է ոչ թե մարդկային գահից, այլ խաչից: Եպիսկոպոսական պատիվը դաջված է Քրիստոսի վերքերի նշանով, որով կոչված ենք մեր սրտում կրելու ժողովրդի վերքերը, կարիքավորի տառապանքը, վշտացյալի արցունքները, ապաշխարողի մեղքի խայթոցը:

Այնուհետեւ Տերը կրկին ասում է. «Խաղաղություն՛ն ձեզ: Ինչպես իմ Հայրն Ինձ ուղարկեց, ես էլ ուղարկում եմ ձեզ»: Այստեղ է առաքելական ծառայության հիմնաքարը: Որդին Հոր կողմից աշխարհ է ուղարկվում ոչ թե ծառայություն ընդունելու, այլ ծառայելու եւ կյանքը տալու: Եւ հիմա առաքյալները, հետագա դարերի ընթացքում նաեւ նրանց հաջորդները, ներգրավված են Քրիստոսի նույն առաքելության մեջ: Եպիսկոպոսը, առաքյալների հանգույն, ժողովրդի մեջ ներկայացնում է Քրիստոս Հովվին: Բայց Քրիստոս խաչված Հովիվն է: Հետեւաբար, եպիսկոպոսական ծառայությունը աշխարհիկ պատիվ չէ. ինքնաուրացում է, ինքնազոհություն, անձնվիրություն: Օգոստինոս Երանելին, խոսելով եպիսկոպոսական ծառայության մասին, երկյուղով ասում էր. «Եթե ինձ սարսափեցնում է այն, թե ինչ եմ ես ձեզ համար, ապա ինձ մխիթարում է այն, թե ինչ եմ ես ձեզ հետ: Ձեզ համար եպիսկոպոս եմ, ձեզ հետ՝ քրիստոնյա: Առաջինը ստացած պաշտոնի անունն է, երկրորդը՝ շնորհի: Առաջինը վտանգի պատճառ է, երկրորդը՝ փրկության»: Եպիսկոպոսի կոչումը չի վերացնում մարդկային տկարությունը. ընդհակառակը, Աստծու շնորհը գործում է հենց այդ տկարության մեջ: Այս դրվագում Տեր Հիսուս կատարում է մի արտասովոր գործողություն. «Փչում է նրանց վրա՝ ասելով. «Առե՛ք Սուրբ Հոգին»: Այս շարժումը մեզ հիշեցնում է Ծննդոց գիրքը, երբ Աստված շունչ է փչում մարդու հողեղեն շինվածքի վրա՝ նրան կյանք պարգեւելով: Այժմ հարուցյալ Քրիստոս նոր արարչություն է կատարում, որով Սուրբ Հոգին վախեցած մարդկանց դարձնում է քաջ առաքյալներ, հասարակ ձկնորսներին՝ եկեղեցու սյուներ, տկար մեղավորներին՝ Արքայության քարոզիչներ: Ոչ ոք չի կարող առաքելական ծառայության բեռը կրել միայն մարդկային ուժերով: Առանց Սուրբ Հոգու՝ ծառայությունը վերածվում է

անպատուղ վարչարարության, սոսկ գործառույթի, անտանելի ծանրության: Բայց Սուրբ Հոգու հետ մարդկային տկարությունը դառնում է աստվածային զորության վայր:

Վերջապես Տերը առաքյալներին է հանձնում հաշտության ծառայությունը. «Եթե մեկին ներեք իր մեղքերը, թող ներված լինեն»: Ահա այստեղ է երեւում Եկեղեցու հովվական «սիրտը»: Հարուցյալ Քրիստոս ո՛չ քաղաքական իշխանություն եւ ո՛չ էլ սոցիալական ծրագիր չէ որ վստահում է. նա գթասրտություն է փոխանցում: Եկեղեցին գոյություն ունի որպես փրկության տապան, մեր մեղավոր հիվանդության եւ Աստծու սրբարար բժշկման հանդիպման վայր: Եկեղեցին ստացել է արձակելու իշխանությունն այն ամենի վրա, ինչ մեղքը կապել է: Եւ հովիվը կոչված է լինելու աստվածային ողորմության սպասավորը:

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ ի Քրիստոս,

Այսօր աշխարհը եւ հատկապես մեր Հայոց աշխարհը կարիքն ունի հովիվների, որոնք քարոզում են ոչ թե իրենց, այլ՝ Քրիստոսին, որոնք փնտրում են ոչ թե աշխարհի հավանությունը, այլ Ավետարանին հավատարմությունը, որոնք կարողանում են մտնել ժամանակակից մարդու վախերի մեջ՝ բերելու ոչ թե պատրանքներ, այլ Հարուցյալի խաղաղությունը:

Աղոթենք Տիրոջը, որպեսզի մենք եւս, ինչպես աշակերտները Վերնատանը, ի զորու լինենք բացելու մեր սրտի փակ դռները Հարուցյալի ներկայության առաջ, քանզի որտեղ մուտք է գործում Քրիստոս, վախը տեղի է տալիս խաղաղությանը, տրտմությունը՝ ուրախությանը, եւ մահը՝ կյանքին:

Թող Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սերը եւ Սուրբ Հոգու հաղորդությունը լինեն մեր բոլորի հետ: Ամեն:

Տ. ԱՆԱՆԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԱՏՈՒՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՈՒԽՏԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(27 մայիսի, 2026 թ.)

Աննուամբ Անեղիւն Աստուծոյ
Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն:

> «Տեսեալ Յիսուսի ժողովուրդս բազումս զիւրեւ, հրամայեաց երթա՛լ յայնկոյս: Եւ մատուցեալ դպիր մի ասէ ցնա. Վա՛րդապետ՝ եկի՛ց եւ ես զկնի Քո յո՛ր վայր եւ երթիցես: Ասէ ցնա Յիսուս. Աղուեսուց որջ գոն, եւ թռչնոց երկնից բոյնք. այլ Որդւոյ մարդոյ ո՛չ գոյ՝ ուր դիցէ զգլուխ իւր»
>
> *(Մատթ. Ը. 18–20):*

Իրելի՛ հավատավոր քույրեր եւ եղբայրներ, եւ հոգեւոր սպասավորության լծակից եղբայրներ, ավետարանական այս պատգամը դարձյալ մեր մասին է: Այն մեզ հրավիրում է կանգ առնելու, լուռթյամբ մեր հոգիները քննելու եւ մի առանցքային հարցի շուրջ խորհրդածելու. ո՞րն է քրիստոնյա անհատի եւ հոգեւորականի իրական առաքելությունն այս աշխարհում, եւ ինչպիսին պետք է լինի մեր ընթացքը: Արդյո՞ք մենք ապրում ենք որպես որդեգիրներ Քրիստոսի, թե՞ հաճախ տարվում ենք աշխարհի անցողիկ հոգսերով ու արժեքներով: Այս հարցադրումը հատկապես արդիական է մեր օրերում, երբ մարդը, շրջապատված լինելով բազմաթիվ հնարավորություններով, հաճախ կորցնում է իր հոգեւոր ուղղությունը եւ մոռանում իր երկնային կոչումը:

Մեզ համար առաջին Քահանայապետը, կոչման կատարելությունն ու գերագույն նախօրինակը Ինքը՝ Քրիստոս է: Նա է ճշմարիտ Հովիվը, որ Իր կյանքը տվեց Իր հոտի համար, Նա է այն ճանապարհը, որով պիտի ընթանանք, ճշմարտությունը, որ պիտի ճանաչենք, եւ կյանքը, որի մեջ պիտի բնակվենք: Ուստի, թե՛ հավատացյալ աշխարհականի եւ թե՛ ձեռնադրյալ հոգեւորականի ողջ կյանքը պետք է ունենա միայն մեկ նպատակ եւ մեկ

դրոշմ՝ «քրիստոսատիպ նկարագիր»: Քրիստոնեության էությունը ոչ թե պարզապես որոշ բարոյական կանոնների պահպանումն է, այլ Քրիստոսի կերպարի արտացոլումը մեր մտքերում, խոսքերում եւ գործերում:

Սակայն ինչ է նշանակում լինել «քրիստոսատիպ» մի աշխարհում, որտեղ «Մարդու Որդին գլուխը դնելու տեղ չունի»: Դա նշանակում է ապրել ոչ թե սեփական հարմարավետության, այլ Աստծու կամքի համաձայն, չկապվել երկրայինի հետ այնպես, որ մոռանանք երկնայինը, եւ պատրաստ լինել զոհաբերության՝ հանուն սիրո, ճշմարտության եւ Ավետարանի կենաց խոսքի:

Երբ օրենսգետ դպիրը մոտեցավ Հիսուսին ու ցանկություն հայտնեց հետեւել Նրան, Տերը նրան պատասխանեց վերը հիշված պատկերավոր խոսքով: Առաջին հայացքից այս պատասխանը կարող է խիստ թվալ, սակայն այն խորապես դաստիարակչական է: Քրիստոս չէր մերժում այդ մարդուն, այլ բացահայտում էր աշակերտության իրական գինը: Այդ օրենսգետը դեռ պատրաստ չէր այն դժվարություններին ու զրկանքներին, որոնք կապված են Իրեն հետեւելու հետ: Քրիստոս այս խոսքով մատնանշում է այն բոլոր նեղությունները, փորձություններն ու ներքին պայքարները, որոնց հանդիպելու են բոլոր նրանք, որոնք հանձն են առնում Տիրոջ հետեւորդը լինել:

Այս խոսքը մեզ սովորեցնում է մի մեծ ճշմարտություն. երկրային այս կյանքը ժամանակավոր է եւ անցողիկ, ինչպես առավոտյան մշուշը, որ մի պահ երեւում է եւ ապա ցրվում՝ արեւի լույսի ներքո: Քրիստոնյա անհատն այս աշխարհում սոսկ հյուր չէ, սովորական իմաստով, այլ պանդուխտ է, դեպի հավիտենականություն ընթացող ուխտավոր, որի իրական հայրենիքը վերին Երուսաղեմն է: Այդ գիտակցությունը մեզ չի տանում դեպի հուսահատություն, այլ՝ դեպի զգոնություն, հոգեւոր արթնություն եւ պատասխանատվություն: Իսկ մենք՝ հոգեւորականներս, առավել եւս պիտի պատրաստվենք այդ հավիտենականությանը՝ մեր այն գործերով, որ կոչված ենք իրագործելու Տիրոջ կողմից մեզ վստահված առաքելության մեջ: Մեր կյանքը պետք չէ սահմանափակվի միայն արտաքին պարտականություններով, այլ պիտի դառնա կենդանի վկայություն այն հավիտենական կյանքի, որի մասին քարոզում ենք:

Այո՛, Ավետարանը մեզ չի խոստանում հարմարավետություն, այլ բացահայտորեն հիշեցնում է, որ աշակերտության ճանապարհը հաճախ ուղեկցվում է ներքին ու արտաքին փորձություններով: Սակայն այն,

ինչ Աստված թույլ է տալիս, միշտ ունի հոգեւոր նպատակ՝ մաքրելու եւ խորացնելու մարդու հավատը: Ինչպես յուրաքանչյուր նոր ձեւավորվող անձ կամ նորակազմ ընտանիք իր առաջին քայլերն անելիս բախվում է խոչընդոտների, այնպես էլ հոգեւոր կյանքում յուրաքանչյուր քրիստոնյա եւ նորընծա եկեղեցական անցնում է փորձությունների բովով: Քրիստոս մեզ սովորեցնում է ոչ թե փախչել այդ դժվարություններից, այլ դիմակայել դրանց հավատքով, համբերությամբ եւ տոկունությամբ: Այդ ընթացքի մեջ մարդը սովորում է վստահել Աստծուն ոչ թե տեսականորեն կամ սոսկ խոսքով, այլ իր ամբողջ էությամբ ու կյանքի փորձով:

Հոգեւորականի եւ ճշմարիտ քրիստոնյայի ճանապարհը հաճախ լի է նաեւ անհասկացողությամբ ու մարդկային դատափետումներով: Աշխարհիկ մտածողությամբ հաճախ ընկալելի չէ այն ընթացքը, որը պահանջում է հրաժարում սեփական եսից: Այդ պատճառով էլ նրանք, որոնք որոշում են քայլել Քրկչի հետքերով, հաճախ հանդիպում են անարդար գնահատականների ու մերժման: Սակայն հենց այդ պահին է, որ հավատքը դառնում է առավել վավերական, որովհետեւ մարդն այլեւս չի ապրում մարդկանց հավանության համար, այլ՝ Աստծու կանչին հավատարմությամբ:

Այստեղ տեղին է հիշել ֆրանսիացի մեծ գրող Վիկտոր Հյուգոյի խոսքերն իր «Թշվառները» վեպի հերոսի՝ երանաշնորհ Բիենվենյու (Մյուրիել) եպիսկոպոսի մասին, երբ նա նոր էր եկել Դին քաղաք: Հեղինակը գրում է. «Սրբազան հայրը պիտի կրեր այն բոլոր նորեկների ճակատագիրը, որոնք նոր են գալիս որեւէ քաղաք, որտեղ դատարկախոս բերանները շատ են, իսկ մտածող գլուխները՝ քիչ: Նա պետք է կրեր այդ, թեեւ եպիսկոպոս էր եւ հենց նրա համար, որ եպիսկոպոս էր»:

Այս խոսքերը հոգեբանական եւ սոցիալական իրականության ստույգ արտացոլումն են: Մարդը, հատկապես երբ կոչված է բարձր պատասխանատվության, հաճախ ոչ թե իր անձով է դատվում, այլ՝ իր դիրքով, եւ հենց այդ պատճառով էլ դառնում է քննադատության եւ երբեմն անհիմն դատողությունների թիրախ: Սակայն իրական հոգեւոր հասունությունը դրսեւորվում է ոչ թե այդ խոսքերին պատասխանելու մեջ, այլ՝ լռությամբ, համբերությամբ եւ կոչմանը հավատարմությամբ: Որովհետեւ ով ծառայում է ճշմարտությանը, չի կարող խուսափել սխալ ընկալումներից, բայց կարող է դրանցից վեր կանգնել՝ մնալով անսասան իր առաքելության մեջ:

Աշխարհիկ գրականության մեջ եւս նկատում ենք այս ճշմարտության անդրադարձը: Ֆրենսիս Հոջսոն Բրնեթը գրում է. «Երբ մարդիկ վիրավո-

րում են քեզ, լավագույն բանը նրանց անպատասխան թողնելն է... Եթե չես պատասխանում, մարդիկ հասկանում են, որ դու իրենցից ուժեղ ես... Աշխարհում միակ բանը, որ զայրույթից ուժեղ է, այն ուժն է, որով զայրույթդ զսպում ես»:

Որպես քրիստոնյաներ՝ մենք գիտենք, որ այս ներքին ուժն ու զսպվածությունը ոչ թե մարդկային հպարտության կամ ինքնավստահության արդյունք են, այլ Սուրբ Հոգու պարգեւած խոնարհության, որը ցուցաբերեց Ինքը՝ Քրիստոս՝ դատարանի առաջ լուռ մնալով:

Սա հայտնի ճշմարտություն է, սիրելինե՛ր: Այն ամենն, ինչ մարդիկ ասում են մեր մասին՝ լինի դա ճիշտ, թե սուտ, հաճախ նույնքան տեղ է գտնում նրանց պատկերացումներում, որքան մեր իրական արարքները: Բայց քրիստոնյայի եւ հոգեւորականի կոչումը վեր է մարդկային բամբասանքից ու դատարկախոսությունից: Այն չի կարող սահմանվել արտաքին կարծիքներով կամ ժամանակավոր գնահատականներով, որովհետեւ դրա հիմքը ոչ թե մարդկանց դատողությունն է, այլ Աստծու կանչը եւ Նրա առջեւ ունեցած պատասխանատվությունը: Հենց այստեղ է, որ մարդը սովորում է տարբերել անցողիկ աղմուկը հավիտենական կյանքի հավերժող իմաստությունից, եւ մարդկային խոսքը՝ աստվածային ճշմարտությունից: Հետեւաբար, իրական խնդիրն այն չէ, թե մարդիկ ինչ են ասում մեր մասին, այլ այն, թե մենք ինքներս ինչպես ենք ըմբռնում մեր կոչումը, եւ ինչի մեջ ենք տեսնում մեր կյանքի ու ծառայության նպատակը: Եթե մարդը հստակ գիտակցում է, որ իր կյանքը Աստծուն եւ ոչ թե մարդկանց հաճությանն է ծառայում, ապա արտաքին խոսքերը կորցնում են իրենց իշխանությունը նրա ներաշխարհի վրա: Այդ դեպքում նա սկսում է ապրել ոչ թե գնահատվելու, այլ՝ ճշմարտությանը հավատարիմ մնալու համար, եւ հենց այդ հավատարմության մեջ է ձեւավորվում իսկական հոգեւոր ազատությունը:

Ձեռնադրությամբ հոգեւորականն իր Արարչից ստանում է որոշակի շնորհներ ու կարողություններ: Բայց այդ շնորհները սեփական անձը մեծարելու կամ երկրային փառքի հասնելու համար չեն, այլ մարդու ներքին կատարելագործման՝ սրտի մաքրման, մտքի լուսավորման ու կամքի զորացման համար: Հոգեւոր ծառայությունը, իր ամենախոր իմաստով, սիրո ծառայություն է՝ ուղղված առաջնորդելու մարդուն դեպի Աստված եւ դեպի իր իսկ ճշմարիտ կոչումը: Նույն կերպ, յուրաքանչյուր քրիստոնյա մկրտությամբ ստանում է Սուրբ Հոգու պարգեւները, որոնցով կոչված է

լինելու մթութեան մեջ լոյս եւ հասարակութեան մեջ բարի սերմնացան, անիմաստութենից ու ապականութենից պահպանող աղ: Այդպիսով, յուրաքանչյուր հավատացյալ դառնում է փոքրիկ, բայց իրական մասնակից Աստծու փրկագործութեանը՝ իր առօրյա կյանքով, խոսքով եւ գործով:

Ուստի, ջանա՛նք նմանվել մեր երկնավոր Հորը՝ Նրա սրբութեամբ, սիրով եւ արդարութեամբ, ինչպես նաեւ հիշել ու արժեւորել այն երանաշնորհ հայրապետների ու հոգեւորականների օրինակը, որոնք պատմութեան ընթացքում ճգնութեամբ, անձնազոհութեամբ եւ անսասան հավատարմութեամբ ծառայեցին Քրիստոսին: Նրանց կյանքը մեզ համար ոչ միայն հիշողութեուն է, այլ կենդանի վկայութեուն, որ Աստծուն նվիրված ծառայութեունը հնարավոր է անգամ ամենադժվար պայմաններում, երբ մարդը հրաժարվում է իրենից եւ ամբողջապես հանձնվում աստվածային կամքին: Հիշենք, որ այս կոչումը մարդկային ընտրութեուն չէ, այլ՝ աստվածային: Ինչպես Սուրբ Գիրքն է ասում, որեւէ մեկը ոչ թե ինքն իրենից է առնում այս պաշտոնը, այլ նա, որ Աստծուց է կանչված, ինչպես Ահարոնը: Նույնիսկ Ինքը՝ Քրիստոս, ոչ թե Ինքն Իրեն մեծարեց Քահանայապետ դառնալու համար, այլ Նա, Որը Նրան ասաց. «Դո՛ւ ես իմ որդին, եւ ես այսօր ծնեցի քեզ» (Եբր. Ե. 5): Այսու, մեզ համար պարզ է դառնում, որ իսկական մեծութեունը ոչ թե իշխանութեան մեջ է, այլ՝ ծառայութեան, ոչ թե բարձրանալու մեջ, այլ՝ խոնարհութեամբ Աստծուն մոտենալու մեջ:

Սիրելինե՛ր, մեր առաքելութեունը երկրային հանգիստ փնտրելը չէ, ոչ էլ անցողիկ հաջողութեունների մեջ մեր կյանքի իմաստը սահմանափակելը: Մեր առաքելութեունը Քրիստոսի կանչին անսալն է, աշխարհի խոչընդոտների ու դատարկախոսութեունների միջով խաչը հնազանդութեամբ կրելը եւ Աստծու տված շնորհները մերձավորի փրկութեան ու հոգեւոր աճի համար սիրով ծառայեցնելը: Քանզի յուրաքանչյուր պարգեւ իր խորքում եկեղեցական եւ համայնքային նշանակութեուն ունի: Այսպիսով, ծառայութեունը դառնում է ոչ թե պարտադրանք, այլ՝ սիրո արտահայտութեուն, ոչ թե ինքնահաստատում, այլ՝ Աստծու փառքի տարածում աշխարհում:

Թող Տերը զորացնի յուրաքանչյուրիս մեր կոչման մեջ, տա մեզ քրիստոսատիպ նկարագիր, որպեսզի այս ժամանակավոր պանդխտութեան ավարտին արժանի լինենք լսելու Տիրոջ երանավետ ձայնը. «Ապրե՛ս, բարի եւ հավատարիմ ծառա»:

Ողջ լերուք ի Տէր. ամէն:

Տ. ԻՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՈՒԽՏԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(28 մայիսի, 2026 թ.)

Յաճուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Եւ որ ոչն սիրէ զիս՝ զբանս իմ ո՛չ պահէ. եւ բանն իմ զոր լսէ՛ ո՛չ է իմ, այլ Հօ՛րն՝ որ առաքեացն զիս:

(Յովհ. ԺԴ. 24)։

Սիրելի՛ եղբայրներ եւ քոյրեր ի Քրիստոս,

Հովհաննու Ավետարանում տեղ գտած այս խոսքերը նկարագրում են վերջին Ընթրիքի խորհրդապատկերը, երբ Քրիստոս պատրաստում է աշակերտներին իր չարչարանքներին, խաչելությանը եւ հառնելուն: Այսկերպ Քրիստոս ցույց է տալիս, որ Աստծու հանդեպ սերը սոսկ զգացում եւ խոստովանություն չէ միայն, այլ հնազանդություն: «Ով ինձ չի սիրում, իմ խոսքերը չի պահում»: Ասել է թե իմ խոսքերը պահում է միայն նա, ով իրապես սիրում է Ինձ: Ուրեմն հավատը գեթ բառերով չէ: Սերը դեպի Աստված երեւում, երեւակվում է մեր կյանքի, մեր գործերի մեջ: «Եւ իմ խոսքը, որ լսում եք, իմը չէ, այլ՝ Հորը, որ ինձ ուղարկեց»: Սրանով Տերն ընդգծում է Իր միությունը Հայր Աստծու հետ: Սա արդեն սովորական ուսուցում չէ. այստեղ Քրիստոս բացում է Իր ներքին կյանքը՝ Իր եւ Հոր միջեւ եղած հավիտենական հարաբերությունը: Եվ հասկանալու համար Տիրոջ միտքը հարկ է դուրս գալ զուտ բարոյական շրջագծից: Քրիստոս այստեղ բացահայտում է Իր ինքնությունը: «Իմ խոսքը իմը չէ»: Այս նախադասությունն առաջին հայացքից կարող է թվալ հակասական, եթե մի պահ մոռանանք, որ քրիստոնեական հավատքի կենտրոնում Աստված ոչ թե մենավոր ինքնություն է, այլ հաղորդություն: Որդին չունի Իր գոյությունը Հորից անկախ: Նրա ողջ ինքնահայտնությունը միշտ հարա-

բերական է Հոր նկատմամբ: Հովհաննու Ավետարանում Հիսուս երբեք չի ներկայանում որպես ինքնուրույն կրոնական առաջնորդ, հանճար կամ մարգարե, որն իր գաղափարներն է առաջարկում մարդկությանը, այլ Հոր հետ անքակտելի միության մեջ: Նա մշտապես հղում է անում Հորը. «Որդին ոչինչ չի կարող անել Ինքն իրենից» (Հովհ. ե. 19): Այստեղ մենք մտնում ենք երրորդության աստվածաբանության ամենախոր կենտրոնը: Հոր եւ Որդու միջեւ տարբերություն կա, բայց ոչ բաժանում: Որդու խոսքը Հոր խոսքն է ոչ այն պատճառով, որ Որդին զրկված է ինքնությունից, այլ որովհետեւ Նրա ինքնությունը ամբողջությամբ որդիական է: Որդին հավիտենական «ընդունումն» է Հորից: Եվ այդ պատճառով Նրա խոսքը կատարյալ հնազանդություն է՝ ոչ հարկադրական իմաստով, այլ սիրո մեջ՝ կամքի կատարյալ ներդաշնակության արտահայտությամբ: Եվ մարդն էլ իր ճշմարիտ «ես»-ը գտնում է ոչ թե ինքնակենտրոնության, այլ Աստծու եւ իր նմանների հետ սիրո հարաբերության մեջ: Ավետարանական այս ամբողջ համապատկերում Քրիստոսի անձը հասկացվում է սիրո, առաքելության եւ միության շրջանակում: Նրա խոսքը հեղինակություն ունի հենց այն պատճառով, որ այն Հոր խոսքն է, եւ Նրա գործերը նշանակություն ունեն, որովհետեւ Հոր գործերն են, որ կատարվում են Նրա միջոցով:

Ժամանակակից աշխարհում հնազանդությունը գրեթե միշտ ընկալվում է որպես ազատության զիջում, կորուստ: Բայց Ավետարանում հնազանդությունը ներկայացվում է որպես սիրո առհավատչյա: Որդին ամենաազատն է, որովհետեւ ամբողջովին բնակվում է Հոր ճշմարտության մեջ: Մեղքը այնքան ազատության ընդարձակումը չէ, որքան հարաբերության խզումը: Ադամի ողբերգությունը հենց այստեղ էր՝ մարդը ցանկացավ խոսք ունենալ առանց Խոսքի աղբյուրի:

Քրիստոս այստեղ ներկայանում է որպես հավիտենական Բանը, որի միջոցով ամեն ինչ ստեղծվեց: Հետեւաբար, երբ Քրիստոս խոսում է, մենք լսում ենք Արարչական Խոսքը, որի մեջ է աշխարհի ներքին իմաստը: Այդ պատճառով Նրա խոսքը ոչ միայն տեղեկացում է, այլ նաեւ արարում: Ինչպես Ծննդոց գրքում Աստված ասաց՝ «Թող լինի լույս», եւ լույս եղավ, այնպես էլ Քրիստոսի խոսքը մարդու մեջ նոր արարում է գործում:

«Ով ինձ չի սիրում, իմ խոսքերը չի պահում»: Այստեղից հասկանալի է դառնում նաեւ «պահել» բառի խորիմաստությունը: Ավետարանում «պահել» նշանակում է ոչ միայն հիշել կամ կատարել, այլեւ ներսում կրել: Այսինքն՝ Քրիստոսի խոսքը պետք է բնակվի մարդու մեջ այնպես, ինչպես


Որդին բնակվում է Հոր մեջ: Քանի որ քրիստոնեական հավատքը արտաքին օրինապահություն չէ. այն մասնակցություն է աստվածային կյանքի շրջանառությանը: Այստեղ է, որ բացվում է սիրո իսկական աստվածաբանությունը: «Ով ինձ չի սիրում, իմ խոսքերը չի պահում»: Սերը, ուրեմն, առաջին հերթին էաբանական, գոյաբանական իրականություն է: Սիրել նշանակում է ներգրավվել մյուսի ճշմարտության մեջ: Այս ամենը նաեւ եկեղեցաբանական խոր իմաստ ունի: Քրիստոսի խոսքը Հոր խոսքն է, եկեղեցին՝ նրա պահապանը:

Քրիստոնեական ճշմարտությունը չի ծնվում պատմական մեծամասնությունից կամ մշակութային ճաշակից: Այն ընդունվում է, որովհետեւ եկեղեցին իր էությամբ «հիշողություն» է եւ կենդանի հիշատակություն: Եվ նրա ակունքում ոչ թե հրաման է, այլ կանչն ու կոչումը: Եպիսկոպոսությունը թեեւ նախ եւ առաջ վարչական պաշտոն է, սակայն եպիսկոպոսը կառավարիչ չէ՝ սովորական իմաստով: Նրա գոյության կենտրոնում մի յուրօրինակ հակադրություն կա. նա կոչված է իշխանություն կրելու՝ իշխանությունից հրաժարվելու միջոցով: Ինչպես որ նախածնողների պարագայում: Եպիսկոպոսը կոչված է պահպանելու ոչ թե սեփական գաղափարները, այլ ավանդությունը, առաքյալների ձայնի արձագանքը պատմության մեջ: Անցյալը ներբերելով ներկա եւ ներկան ուղղելով ապագային: Աշխարհը մշտապես պահանջում է, որ եկեղեցին խոսի ժամանակի լեզվով այնքան, մինչդեռ կենդանի ճշմարտությունը միշտ խաչված ճշմարտություն է, որովհետեւ հակասում է յուրաքանչյուր դարաշրջանի ինքնաբավությանը:

Այստեղ է, որ հասնում ենք մեր ժամանակի մեծ ճգնաժամին: Ժամանակակից մարդը կորցրել է լսելու եւ լռելու կարողությունը: Բայց Աստծու խոսքը երբեք չի պարտադրում իրեն: Այն լսելի է դառնում միայն ներքին աղքատության, լռության մեջ: Ուստի քրիստոնեական կյանքը նախ եւ առաջ ներքին լսողության վերականգնում է: Հավատքը սկսվում է այնտեղ, որտեղ մարդը դադարում է իրեն նկատել իբրեւ ճշմարտության աղբյուր եւ կրկին ուսանում է ընդունել: Քրիստոսի խոսքը պահել նշանակում է թույլ տալ, որ մեր գոյությունը ներգրավվի որդիական հարաբերության մեջ Հոր հետ՝ Սուրբ Հոգու միջոցով: Սա է փրկությունը: Ոչ թե պարզապես բարոյական ուղղում, այլ մասնակցություն երրորդական կյանքին:

Սիրելինե՛ր, այսօր, այսօրինակ մտածումներով, շնորհավորելով մեր օծակից եղբայրներին, փառք եւ գոհություն ենք առաքում ամենակալն Աստծուն, որ Իր անքննելի նախախնամությամբ եւ անբավ ողորմությամբ

մեզ արժանացրեց ընդունելու եպիսկոպոսական ձեռնադրության սրբազան շնորհը եւ մատուցելու առաջին Սուրբ եւ Անմահ Պատարագը: Երախտագետ խոնարհությամբ առ մեր Սուրբ Եկեղեցին, որդիաբար շնորհակալություն ենք բերում հայոց հայրապետին, ով նախընթաց ողջ շրջանում հետեւեց մեր ընթացքին՝ հնարավորություն ընձեռելով դառնալու Տիրոջ տան սպասավորը, ինչպես նաեւ մեր խոնարհ երախտագիտությունը եկեղեցուս հոգեւոր սպասավորներին՝ անկախ կարգից ու աստիճանից, ուսուցիչների ու դասախոսների հսկա փաղանգին, մեր Եկեղեցու ուխտապահ ու հավատացյալ դասին, եւ բոլոր նրանց, ովքեր իրենց աղոթքով ու վստահությամբ ուղեկցեցին մեզ այս ճանապարհին հայրենիքում եւ այլուր: Հատուկ երախտագիտություն ենք հղում նաեւ մեր ընտանիքի անդամներին եւ հարազատներին, եւ նրանց, ովքեր իրենց համբերությամբ եւ զոհողությամբ դարձան մեր ծառայական ճանապարհի զորավոր հենարանը: Թող բարին Աստված ամուր ու զորավոր պահի ամենքիդ Ձեր բարի եւ ազնիվ փափագների իրականացման ճանապարհին ի սեր հայրենիի, ի պայծառութիւն Եկեղեցվոյս եւ ի փառս Ամենասուրբ Երրորդության: Ամեն:



ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՔԱՐՈԶԸ ԾՈՂԱԿԱԹԻ [ՏՕՆԻՆ], ՀԵՏԵՒԵԱԼ ԽՕՍՔԻ ՄԱՍԻՆ. «ԱՍՏՈՒԱՄԻ ԻՐ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՄԲ [ԵՐԿՐԻ ՀԻՄՔԵՐԸ ԴՐԱԻ]»[1]

Պիտելի է, թէ իւրաքանչիւր ոք, որ որեւէ մէկ բան կը շինէ, նախ եւ առաջ բազմաթիւ բաներու մասին պէտք է մտածէ ու նոր միայն շինութեան ձեռնարկէ։

Նախ՝ պէտք է ինչքերուն հոգ տանիլ, այսինքն՝ թէ այդքան կարողութիւն ունի՞, որով կարենայ շինութիւնը գլուխ հանել, ապա թէ ոչ՝ հրաժարի այդ գործէն, [քանի որ] չկարենալով շինել՝ դրացիները կ'այպանեն զինք, ինչպէս կ'ըսէ Տէրը աշտարակի շինութեան համար. «Կ'ըսեն,– կ'ըսէ,– այս մարդը սկսաւ շինել, [բայց չկրցաւ աւարտել]»[2]։

Երկրորդ՝ պատշաճ տեղ պէտք է փնտռել, որպէսզի անցնողներու ճանապարհին վրայ չըլլայ, թերեւս անցնողներու երթ ու դարձէն շինութիւնը թուլնայ եւ անոր յոգնութիւնը ի զուր ըլլայ։ Ատոր համար Մարգարէն կ'ըսէ. «Անկիւնը սիրեցեալիս այգի եղաւ, [պարարտ տեղ մը]»[3]։ Իսկ [միւս] Մարգարէն, թէ՝ «անցնողները յափշտակեցին զայն, ան իր դրացիներուն նախատինքի [առարկան] դարձաւ»[4]։

Երրորդ՝ ընկերութեան համար կը հոգայ, որովհետեւ առանձինն չի՛ կրնար ընել, ատոր համար Աստուած սկիզբէն ըսաւ. «Բարի չէ, որ մարդը առանձին ըլլայ։ Անոր օգնական մը ընենք»[5]։ Իսկ Սողոմոն [կ'ըսէ]. «Եղբօրմէն օգնութիւն ստացած եղբայրը, նման է ամուր քաղաքի»[6]։ Տակաւին, Աստուած օգնական կ'ըլլայ շինութեան, որովհետեւ Մարգարէն կ'ըսէ, թէ՝

---

[1] *Առակ. Գ. 19։*
[2] *Ղուկ. ԺԴ. 30։*
[3] *Հմմտ. Ես. Ե. 1։*
[4] *Սաղմ. ՁՀ. 42։*
[5] *Ծննդ. Բ. 18։*
[6] *Առակ. ԺՀ. 19։*

«եթէ Տէրը տունը չշինէ, ի զուր կը յոգնին շինողները»[7]։ Ընկեր [օգնական] չըլլալուն, չափազանց աշխատանքը կը սպաննէ շինողը։

Զորրորդ՝ արժանի է ճիշդ ժամանակը ընտրել, որովհետեւ այդ է պատշաճ. աշխարհի եւ տան Շինողը՝ Աստուած, Սողոմոնի ժամանակ անոր առջեւէն վերցուց բոլոր պատերազմները, կ՚ըսէ Գիրքը, ատոր համար ան Աստուծոյ տունը շինեց[8]։ Եւ Մարգարէին միջոցով ժողովուրդին խաղաղութիւն կու տար՝ իբրեւ յորդած գետ մը։ Իսկ [խաղաղութիւն] չըլլալուն կ՚ըսէ Մարգարէն. «Ով իմաստուն է, ժամանակին կը լռէ, որովհետեւ ժամանակը չար է»[9]։

Հինգերորդ՝ որովհետեւ արժանի է հիմքը ժայռի վրայ դնել, ինչպէս Տէրը կը գովէ եւ «իմաստուն» կը կոչէ հիմքը ժայռի վրայ դնողը, որովհետեւ հեղեղները բարձրանալուն՝ հաստատուն կը մնայ[10]։ Իսկ աւազի վրայ դնողին՝ «յիմար» կը կոչէ եւ կ՚իյնայ [կը կործանի]՝ չհանդուրժելով փորձանքներուն. եւ այսպիսիով կը փորձէ ամբողջ աշխարհը։

Վեցերորդ՝ շինողը պէտք է ճարտար ու իմաստուն ըլլայ, ինչպէս Բեսեղիէլը խորանի շինութեան ժամանակ[11], եւ Սողոմոնը՝ իր կառուցած տաճարին ժամանակ, այդպէս ալ Քիրամը[12], որոնք գեղեցկօրէն նկարեցին պատերն ու դռներուն վրայի դրուագները[13] եւ անոր ամբողջ կահ ու կարասին պատրաստեցին։

Եօթներորդ՝ նիւթը պէտք է պատշաճ ըլլայ, այսինքն՝ քարերը, կիրն ու խիճը, որպէսզի միասին եռան ու տեղ առնեն [բռնեն], որովհետեւ չտաշուած քարերը չեն միանար, իսկ կոկուածներն ու հարթուածները անխախտ կը մնան եւ ասիկա արհեստաւորին յատուկ է։ Ատոր համար Աստուած Նոյին կը պատուիրէ, որ տապանը «խորշերով» կազմէ[14]։ Իսկ Մովսէսին կ՚ըսէր. «Տախտակներ կոփէ»[15]։

---

[7] *Սաղմ. ՃԻՀ. 1։*

[8] *Տե՛ս Գ. Թագ. Դ. 24, ե. 3–5։*

[9] *Ամոս ե. 13։*

[10] *Տե՛ս Մատթ. է. 25։*

[11] *Տե՛ս ելից ԼԱ. 2, լե. 30։*

[12] *Տե՛ս Բ. Թագ. ե. 11։ Ա. Մնաց. ԻԴ. 1։*

[13] *Դրուագ կամ Դրուակ. որեւէ բանի վրայ պատկերուած՝ հիւսուած՝ քանդակուած՝ ամրացուած զարդ («Գրաբարի Բառարան», Ռուբէն Սերոբի Ղազարեան, Երեւան, 2000, էջ 384. ծանօթագրութիւնը՝ թարգմանիչին)։*

[14] *Տե՛ս Ծննդ. Զ. 14։*

[15] *ելից ԼԴ. 1։*

Ութերորդ՝ որովհետեւ շինութիւնը մեծ աշխատութեամբ կ՚ըլլայ եւ առաւել եւս, այդ շինութեան տէրը պէտք է աշխատի, քանի որ վարձկանը ըստ իր վարձքի չափին կ՚աշխատի, իսկ ան որ տէրն է, իր կեանքին չափով, որովհետեւ կը կամենայ յաւիտեան մնալ [բնակիլ] այնտեղ։ Այդ պատճառով Մարգարէն կ՚ըսէ. «Յաւիտեան աշխատէ՛ [ջանք թափէ՛] եւ անվերջ կ՚ապրիս»[16]։

Իններորդ՝ որովհետեւ շինութիւնը որդիներու ժառանգութեան համար կ՚ըլլայ, իսկ եթէ զաւակ չունի, տունը կիսակատար կը շինէ։ Եւ որովհետեւ մարդոց համար բնական է մեռնիլ, այդ պատճառով որդին հօր տեղը բռնելով՝ անոր փոխարինողը կ՚ըլլայ։ Այս պատճառով, նախ հայր Ադամին բազմաթիւ զաւակներ ունենալ հրամայեց, իբրեւ թէ զանոնք իրեն նմաններ համարելով, նաեւ՝ երկիրը ժառանգելու խոստումը տուաւ։

Տասներորդ՝ որպէսզի շինութիւնը անզգջալի ըլլայ, որովհետեւ միեւնոյնն է բաւական գանձ [դրամ] չունենալը աւարտելու համար, իսկ զղջումը կատարում [աւարտ] չունի։

Իսկ Աստուած, որու մասին Իմաստունը կը պատմէ[17], աշխարհը շինեց եւ այս բոլորը գործի դրաւ։

Նախ՝ Իր կարողութիւնը գիտցաւ, որով եւ աշխարհի կատարումը հասաւ, ինչպէս կ՚ըսէ. «Աստուած իմաստութեամբ [երկրի հիմքերը դրաւ]»[18]։

Երկրորդ՝ տեղը ընտրեց, որովհետեւ երկինքին ամէնէն վերը չէ եւ ո՛չ ալ ներքեւը՝ սանդարամետները՝ ուր սատանայիին երթեւեկութիւնն է, այլ՝ աստղց միջեւ կարուցեց երկիրը։

Երրորդ՝ ընկերութեան հոգ տարաւ, քանի որ «Տիրոջ ողորմութեամբ լեցուն է երկիրը։ Եւ Տիրոջ խօսքով երկինքը հաստատուեցաւ ու Անոր բերանին շունչով [անոնց] բոլոր զօրութիւնները»[19]։ Իսկ Սողոմոն կ՚ըսէ. «Երկինքը պատրաստեց խորհուրդով եւ անդունդները հանճարով պատռեց»[20]։

Չորրորդ՝ ժամանակը ընտրեց, որովհետեւ, օրինակ, եթէ մէկը գարնան սկիզբը ցանէ սերմը, բազմապատիկ կը հնձէ. այսպէս ալ Ան, ժամանակ կար, որ ստեղծեց երկիրը, թէեւ Աստուած ժամանակի կարօտ չէր, քանի որ ամէն ինչ կ՚աճէր եւ այդ ժամանակէն ետք, որովհետեւ պտուղները չեն աճիր, թէեւ շատ ալ ցանեն։

---

[16] *Հմմտ. Սաղմ. ԽՀ. 10։*
[17] *Առակ. Գ. 19։*
[18] *Առակ. Գ. 19։*
[19] *Սաղմ. ԼՔ. 5–6։*
[20] *Առակ. Գ. 20։*

Հինգերորդ՝ ասոր հիմքը ջուրերուն վրայ կառուցեց՝ ըստ Մարգարէին. «Երկիրը ջուրերուն վրայ հաստատեց»[21] եւ թէ՝ «երկիրը իր հիմքերուն վրայ հաստատեց, որպէսզի չսասանի»[22]։

Վեցերորդ՝ այլեւ իմաստուն ճարտարապետ մը ըլլալով՝ զարդարեց երկինքը լուսաւորներով, իսկ երկիրը՝ բոյսերով, տնկիներով եւ կենդանիներով, աճեցուց եւ լեռներով ամրացուց՝ իբրեւ քաղաքներու բուրգերը, որպէսզի անխախտ ըլլալով չկշռուի։

Եօթներորդ՝ եւ որովհետեւ այս նիւթը պատշաճօրէն դրաւ, քանի որ միայն չորս տարրերը կանգնեցուց, ինչպէս շինողները չորս անկիւններու քարերը կը տաշեն, որպէսզի առաւել կերպով յարմարի շինութեան, նաեւ անոնց անկիւնները իրարու միացուց՝ խառնելով խոնաւը խոնաւին հետ եւ չորը չորին հետ, նաեւ տաքը տաքին եւ պաղը պաղին հետ, ինչպէս յայտնի է տարրերէն եւ իմաստուններն ալ գիտեն։

Ութերորդ՝ վարձկաններով չշինեց, որովհետեւ թերի կ՚ընէին գայն, այլ՝ Ինք շինեց։ «Արդարեւ, այս բոլորը Իմ ձեռքս չ՚արարեց»,– կ՚ըսէ Տէրը[23]։ Եւ թէ՝ «ո՞ւր էիր, երբ Ես երկրի հիմքերը կը դնէի»[24]։ Եւ Տէրը կ՚ըսէ. «Հայրս մինչեւ հիմա կը գործէ եւ Ես ալ կը գործեմ»[25]։

Իններորդ՝ ժառանգին համար շինեց այս շինութիւնը, այսինքն՝ Իր Միածին Որդիին համար, թէեւ Ան անմահ է. այս մէկը Տիրոջ խօսքէն յայտնի է, որ մշակներուն համար կ՚ըսէ՝ որոնք կ՚ըսէին. «Ա՛ս է ժառանգորդը, եկէք սպանենք զայն եւ ժառանգութիւնը մեզի ըլլայ»[26]։

Տասներորդ՝ այլեւ չզղջաց այս [տիեզերքը] շինելուն եւ զայն անթերի ստեղծելուն համար, թէեւ գիտէր, որ անոր բնակիչները մեղանչական են՝ ըստ այնմ. «Երկինքին ու երկրին [արարումը] աւարտին հասաւ»[27]։

Դարձեալ՝ «երկիր» մարդուն կ՚ըսէ՝ ըստ այնմ. «Երկիրը Իմ ոտքերուս պատուանդանն է»[28] եւ թէ՝ «ակա՛նջ դիր, երկիր, որովհետեւ Տէրը խօսեցաւ»[29]։ Նմանապէս ասիկա կը ներգործէ մինչեւ հիմա վերը ըսուածներուն վրայ։

---

[21] Սաղմ. ՃԼԵ. 6։
[22] Սաղմ. ՃԳ. 5։
[23] Ես. ԿՋ. 2։
[24] Յոբ. ԼԸ. 4։
[25] Յովհ. Ե. 17։
[26] Համմտ. Մատթ. ԻԱ. 38։
[27] Տե՛ս Ծննդ. Բ. 1։
[28] Գործք է. 49։
[29] Ես. Ա. 2։

Նախ՝ որովհետեւ խորհրդեամբ ըրաւ, ինչպէս Գիրքը կ՚ըսէ. «Եւ դրախտին մէջ դրաւ»[30]. «Մեր պատկերին համաձայն մարդ ընենք»[31]. «Վեցերորդ օրը արարուեցան»[32]. «Որովհետեւ կատարեալ էին երկինքն ու երկիրը եւ անոնց զարդերը»[33]: Մարդուն պիտոյքները պատրաստ էին: Եւ որովհետեւ հիմք դրաւ մարմինին վրայ հոգին, որ անմահ է, իբրեւ անխախտ վէմ: Եւ քանի որ ճարտարօրէն շինեց: Որովհետեւ միեւնոյն մարդուն մէջ գոյ է երկինքի ու երկրի նմանութիւնը: Եւ զանազան հոգիով պատուեց ու հանճարով զարդարեց:

Եւ գիտելի է, թէ զղջումը կրկնակի է:

Նախ՝ զղջումը կայ, ինչպէս այն, որ չի գիտեր թէ ինչ կը գործէ եւ յետոյ գիտնալով կը զղջայ: Իսկ Աստուծոյ համար այսպիսի զղջում չկայ, որովհետեւ նախքան ըլլալը ամէն բան գիտէ, ինչպէս Երեմիա Մարգարէին կ՚ըսէր. «Դուն դեռ չստեղծուած, գիտեմ քեզ»[34], եւ սկիզբէն վախճանն ալ կը ճանչնայ ու չեղած բաները իբրեւ եղածներ գիտէ՝ ըստ Մարգարէին. «Քու աչքերդ իմ անկատարութիւններս տեսան»[35]:

Եւ երկրորդ՝ զղջումը, ինչպէս մէկը կը կամենայ, որ իր որդին բարի ըլլայ, իսկ ինք անձնիշխան կամքով չարիք կը գործէ, ատոր համար հայրը կը զղջայ, քանի որ իր որդին իր կամքին համաձայն չընթացաւ: Այսպիսի զղջում կայ Աստուծոյ մօտ, որովհետեւ կամեցաւ, որ մարդը մնայ Իր պատուիրաններուն մէջ եւ երկինքի Արքայութիւնը ժառանգէ, իսկ ան անձնիշխանութեամբ կորսնցուց փառքը: Այսպիսի զղջումի մասին կ՚ըսէ աստուածային Գիրքը, այսպէս ալ կը թուի ինծի այն, որ Սաւուղին համար կ՚ըսուի. «Եւ Տէրը զղջաց, Սաւուղը թագաւոր ընելուն համար»[36], որովհետեւ Ան վերցուց զինք աղբի կոյտէն, իսկ Սաւուղ չարիքներով երկիր ինկաւ [ինքզինք կորուստի մատնեց, մեղանչեց]: Իսկ երկիրը առանց զղջալու ստեղծեց՝ Սողոմոնին համաձայն. «Սերունդ կու գայ եւ սերունդ կ՚երթայ, իսկ երկիրը յաւիտեան կայ»[37]: Այդ պատճառով կ՚ըսէ. «Աստուած [Իր] իմաստութեամբ [երկրի] հիմքերը [դրաւ]»[38]:

---

[30] Ծննդ. Բ. 15:
[31] Ծննդ. Ա. 26:
[32] Ծննդ. Բ. 2:
[33] Ծննդ. Բ. 1:
[34] Տե՛ս Երեմ. Ա. 5:
[35] Սաղմ. ՃԼՀ. 16:
[36] Տե՛ս Ա Թագ. ԺԵ. 35:
[37] Ժող. Ա. 4:
[38] Առակ. Գ. 19:

Դարձեալ՝ գիտելի է, թէ «երկիր» կը կոչէ հաւատացեալները։ Եւ ասոնց եւս իմաստութեամբ հիմքեր դրաւ, որովհետեւ նախ ո՛չ թէ ծանր օրէնքներ տուաւ նախնի հաւատացեալներուն, քանի որ առաջիններուն ոչինչ գրեց իբրեւ երեխայի։ Իսկ միջիններուն, ինչպէս մանուկի, քարէ տախտակներ գրեց Մովսէսի միջոցով, որովհետեւ տակաւին մանուկ ըլլալով՝ [իր] բնութիւնը չի՛ կրնար հաստատուն կերակուր տանիլ։ Այդ պատճառով տախտակներու քիչ խօսքերով դաստիարակեց մարդը, մինչեւ որ բոլորն ալ հասնին մարդկութեան կատարելութեան [հասունութեան]։ Ատոր համար այնտեղ մեծամեծ պատուիրաններ գրեց։

Տակաւին, «երկիր» կ՚ըսէ եկեղեցիին։ Ասիկա՝ բազմաթիւ պատճառներով։

Նախ՝ որովհետեւ ըստ իր անունին կը ստուգաբանուի «երկ-իր», այսինքն՝ հող եւ ջուր. այդպէս ալ եկեղեցին կրկնակի իրողութիւններով հաստատուած է, այսինքն՝ հոգիով ու մարմինով։ Հոգիով, որովհետեւ շնորհքները, որ այստեղ են, մարմնաւոր աչքերուն չեն երեւիր։ Իսկ մարմինով, քանի որ ջուրով կը մկրտուինք, հացին միջոցով կը հաղորդուինք, բալասանով կ՚օծուինք եւ այլն։

Երկրորդ՝ որովհետեւ երկիրը անխախտելի հիմքերով կառուցուած է, ինչպէս Մարգարէն կ՚ըսէ. «Այսպէս պիտի ըլլայ նաեւ կայանահիմքը, որու վրայ դրուած է»[39], ինչպէս Տէրը կ՚ըսէր. «Դուն վէմ ես եւ այդ վէմին վրայ պիտի շինեմ իմ եկեղեցիս եւ դժոխքին դռները պիտի չկարենան յաղթել անոր»[40], այդ պատճառով օրէնք չկայ քակուած [քայքայուած] եկեղեցւոյ մէջ խորհուրդ կատարել կամ այնպիսի նիւթով, որ կը փոխադրուի տեղէ մը ուրիշ տեղ։ Իսկ այն որ թագաւորներուն սահմանուած է՝ խորան եկեղեցի, ասիկա Մովսէսի խորանին նման՝ տեղէ տեղ կը փոխադրուի։ Այն եւս անխախտ է՝ սեղանը աղիւսակին մէջ է, ուր միայն Քրիստոս կը պատարագուի եւ ուրիշ խորհուրդ չի՛ կատարուիր այնտեղ՝ տեղէ տեղ փոխադրուելուն համար։

Երրորդ՝ որովհետեւ կ՚ըսուի, թէ երկիր չորս մասերէ գոյացած է. այսպէս ալ եկեղեցին չորս Աւետարաններով ամրացած է, այդ պատճառով կարգաւորուած է Աւետարանէն չորս գլուխ մէկ գիրքի մէջ գրուած եւ ո՛չ թէ առանձինն։

---

[39] *Համմտ. Առակ. Ը. 29։*

[40] *Մատթ. ԺԶ. 18։*

Չորրորդ՝ քանի որ երկրի վրայ ջուրի հաւաքումներ կան, որ կը կոչուին ծով, ինչպէս նաեւ մասնաւոր գետեր ու աղբիւրներ եւ անոնք ալ դէպի ծով կ'ընթանան. այսպէս ալ եկեղեցւոյ մէջ ծովը՝ Աստուածաշունչն է, հին եւ նոր [կտակարաններով], գետերը՝ անոնց յաճախակի մեկնութիւնները, իսկ անոնց լուծմունքները [բացատրութիւնները] իբրեւ աղբիւրներ, որոնք սկիզբ ունին անորմէ եւ անոր մէջ ալ կը դադրին։

Հինգերորդ՝ որովհետեւ տեսակ տեսակի բոյսեր կան երկրի մէջ եւ անոնց պտուղներն ալ զանազան են։ Այդպէս ալ Եկեղեցւոյ մէջ՝ սուրբեր եւ առաքինիներ, առաքեալներ, մարգարէներ ու վարդապետներ, ինչպէս կ'ըսէ Մարգարէն. «Արդարները իբրեւ արմաւենի պիտի ծաղկին, տնկուած պիտի ըլլան»[41]։

Վեցերորդ՝ քանի որ գազաններն ու անասունները կ'արածին երկրի մէջ եւ այնտեղ կը պահուըտին ու կը հանգստանան. այդպէս ալ արդարներն ու մեղաւորները, սուրբերն ու ոչ սուրբերը Եկեղեցւոյ մէջ միասնաբար կը վայելեն Եկեղեցւոյ շնորհները, ինչպէս Մարգարէն կ'ըսէ. «Գայլերն ու գառնուկները միասին պիտի արածին»[42]։

Եօթներորդ՝ որովհետեւ օդին մէջ եղող թռչունները ծառերու ոստերուն վրայ են, որ երկրի վրայ հաստատուած են. այսպէս ալ Եկեղեցւոյ մէջ երկնային հրեշտակները միշտ աստուածային խորհուրդներու սպասաւորութեան մէջ են եւ սուրբերուն պահապան են, ինչպէս կ'ըսէ Մարգարէն. «Հրեշտակներուն բանակները Տիրոջմէ երկիւղածներուն շուրջն են»[43]։

Ութերորդ՝ քանի որ երկրի մէկ մասը տաք է եւ շատ պտուղ կու տայ, իսկ մաս մըն ալ՝ ցուրտ եւ պտուղ չի տար. այդպէս ալ եկեղեցւոյ մէջ հաւատացեալներէն ոմանք տաք են աստուածային սիրոյ հանդէպ եւ հարիւրապատիկ պտուղ կու տան[44], Տիրոջ համաձայն, որոնց տեղը յայտնի է՝ բեմը, իսկ ոմանք ալ չարին հնարքներէն սառած են՝ անբարի ըլլալով եւ մեղաւոր, որոնց տեղը եկեղեցւոյ սրահն է։

Իններորդ՝ որովհետեւ իւրաքանչիւր երկիր սահմանով բաժնուած է եւ [այնպէս] կը տիրեն, [ինչպէս իրենց] երկիրը հատուցուեցաւ. այդպէս ալ եկեղեցւոյ մէջ իւրաքանչիւր կարգ բաժնուած է քահանայութեան, եպիսկոպոսութեան, կաթողիկոսութեան եւ ուրիշ կարգերու, նմանապէս եւ վար-

---

[41] Հմմտ. Սաղմ. ՂԱ. 13.-14։
[42] Ես. ԺԱ. 17։
[43] Տե՛ս Սաղմ. ԼԴ. 8։
[44] Տե՛ս Մատթ. ԺԳ. 29։

դապետութեան, եւ իւրաքանչիւր ոք իր աստիճանով կը շրջի՝ ըստ այնմ. «Մէկու մը Հոգիին կողմէ տրուած է իմաստութեան խօսք. [ուրիշի մը՝ գիտութեան խօսք՝ նոյն Հոգիէն]»[45] եւ այլն։

Տասներորդ՝ քանի որ բոլոր կենդանիները երկրէն կ՚ելլեն եւ դարձեալ երկրի մէջ կը լուծուին. այդպէս ալ բոլոր հաւատացեալները Եկեղեցւոյ մէջ կը ծնին եւ դարձեալ ասոր խորհուրդով կը ննջեն, որ եւս յոյսով մը կը կամենան դարձեալ յարութիւն առնել, ինչպէս Մարգարէն [կ՚ըսէ]. «Քու խաղաղութեամբդ այլեւս կը ննջենք եւ...»[46]։

Եւ գիտելի է, թէ Քրիստոս ասոր հիմքերը շատ ճարտարութեամբ դրաւ։

Որովհետեւ, նախ՝ Իր օրինակը դրաւ Եկեղեցւոյ, որու համար նախ չարչարուեցաւ, քանի որ գիտէր, թէ Իր Եկեղեցին ալ պիտի չարչարուի։ Արդ, Եկեղեցին Անոր նայելով՝ կը համբերէ նախատինքներուն եւ չարչարանքներուն, այդ պատճառով կ՚ըսէր. «Եթէ զիս հալածեցին, ապա ձեզ ալ պիտի հալածեն, այլեւ նոյն բաները ձեզի ալ պիտի ընեն»[47]։ Ինք մերկ շրջեցաւ, ատոր համար ալ օրինադրեց երկու պարեգօտ չհագուիլ[48]։ Ինք անտուն մնաց, այդ պատճառով ըսաւ [թելադրեց], երկրի վրայ տուն չշինել[49]։ Ինք անօթեցաւ ու մեզի սորվեցուց, թէ՝ «ինչո՞ւ հոգ կ՚ընէք կերակուրի մասին»[50]։ Տակաւին, քանի որ Ինք հարուստ ըլլալով մեզի համար աղքատացաւ, ինչպէս Պօղոս կ՚ըսէ[51], ատոր համար սորվեցուց մեզի արհամարհել մեծութիւնը, նոյնիսկ եթէ հարուստներու որդիներ ըլլանք։ Նաեւ, վերջաւորութեան մահուամբ ելաւ աշխարհէն, որպէսզի մենք եւս Անոր համար մեռնինք։ Ասոր մասին էր, որ կ՚ըսէր. «Ան որ գործադրէ եւ ուսուցանէ, ան մեծ պիտի կոչուի Արքայութեան մէջ»[52]։

Երկրորդ՝ հիմք դրաւ, որովհետեւ ամէն տեսակի հիւանդութիւն եւ ցաւեր վերցուց մարդոցմէ, որպէսզի մեզի՝ յետնորդներուս եթէ ցաւ մը պատահի, հաւատանք Անոր եւ Ան կարող է։ Նոյնպէս, մեր բոլոր ցաւերը կը վերցնէր՝ Մարգարէին համաձայն. «Ան մեր ցաւերը վերցուց»[53]։

---

[45] *Տե՛ս Ա. Կորնթ. ԺԲ. 8։*
[46] *Սաղմ. Դ. 9։*
[47] *Յովհ. ԺԵ. 20։*
[48] *Տե՛ս Մարկ. Զ. 9։*
[49] *Համմա. Մատթ. Զ. 19–21։ Ղուկ. ԺԲ. 32–34։*
[50] *Տե՛ս Ղուկ. ԺԲ. 22։*
[51] *Տե՛ս Բ. Կորնթ. Ը. 9։*
[52] *Մատթ. Ե. 19։*
[53] *Ես. ՃԳ. 4։*

Երրորդ՝ հիմք դրաւ խօսքի անձանձրոյթ քարոզութեան՝ բոլորին առհասարակ տալով՝ Աստուածաբար, արեգակի օրինակին պէս, որ իր լոյսը կը ծագեցնէ բարիներուն ու չարերուն վրայ, որպէսզի մենք եւս առանց նախանձի բոլորին ուսուցանենք։

Չորրորդ՝ որովհետեւ Տէրը եօթանասուն անգամ եօթը ներեց յանցաւորներուն[54] եւ [այդպէս] օրինադրեց, եւ [ասիկա] յայտնի է զինք խաչ հանողներուն ըսելով. «Ներէ՛ անոնց, որովհետեւ չեն գիտեր թէ ինչ կ՚ընեն»[55]։ Քանի որ Պետրոսին ալ ըսաւ ներել[56], որպէսզի մենք եւս ամբողջ սիրտով մեր հանդէպ բոլոր յանցաւորներուն ներենք անոնց յանցանքները։

Հինգերորդ՝ հիմք դրաւ, որովհետեւ մաքսաւորներուն եւ մեղաւորներուն հետ իջեւանեցաւ, որպէսզի մենք նոյնպէս մեղաւորները չմերժենք, քանի որ մեղաւորներուն համար Տէրը խաչին եկաւ եւ յայտնի է Ադամէն։

Վեցերորդ՝ հիմք դրաւ քիչ ողորմութիւնը իբր մեծ ընդունիլ. ասիկա յայտնի է այրի կնոջմէն, որպէսզի մենք նոյնպէս աղքատներուն տրուելիքը աւելի ընենք քան հարուստներունը։

Եօթներորդ՝ հիմք դրաւ նոր պատուիրան գրելով, այսինքն՝ թշնամին սիրել եւ ատելիները պատուել, որ նախ Ինք կ՚ըսէր [ու կ՚ընէր], ինչպէս կ՚ըսէ Առաքեալը. «Մինչ տակաւին թշնամի էինք, մեզի հետ հաշտուեցաւ Իր Որդիին միջոցաւ»[57], որպէսզի մենք եւս մեր թշնամիներուն հանդէպ խնամատար ըլլանք, որպէսզի սիրելի ըլլան մեզի, ինչպէս կ՚ըսէ Պօղոս[58]։

Ութերորդ՝ հիմք դրաւ հեզ եւ խոնարհ ըլլալու, ըստ այնմ. «Ինձմէ սորվեցէ՛ք, որովհետեւ հեզ եմ եւ սիրտով խոնարհ»[59]։ Եւ յայտնի է, թէ Պիղատոսին առջեւ իբրեւ նուաստ մէկը լուռ էր[60]՝ ըստ Մարգարէին. «Մարդու մը պէս եղայ, որ չի խօսիր»[61]։ Ծառային ապտակներուն համբերեց[62], որպէսզի եթէ մէկը մեզի չար խօսքեր ըսէ, գիտնանք, թէ ինչպէս պէտք է համբերութեամբ տանինք այդ։

---

[54] *Մատթ. ԺԸ. 22։*
[55] *Ղուկ. ԻԳ. 34։*
[56] *Տե՛ս Մատթ. ԺԸ. 22։*
[57] *Հմմտ. Հռոմ. Ե. 10։*
[58] *Հռոմ. ԺԱ. 28։*
[59] *Մատթ. ԺԱ. 29։*
[60] *Մատթ. ԻԷ. 13–14։*
[61] *Հմմտ. Սաղմ. ԼԷ. 15։*
[62] *Յովհ. ԺԸ. 22։*

Իններորդ՝ հիմք դրաւ, որովհետեւ Իր սիրելիները աղքատներէն ու տգէտներէն ընտրեց, որով ծանուցեց, թէ Աստուծոյ գործն է տկարներով մեծամեծ բաներ ներգործել։ Տակաւին, բամբասանքները վերցուց, որպէսզի չըսեն, թէ Իրեն օգնական ըրաւ հարուստներն ու իմաստուններն, որպէսզի մենք եւս սորվինք ո՛չ մէկ փոքրիկ արհամարհել, թէեւ եթէ շատ աղքատի մը կամ ռամիկի մը գաւակ ըլլայ։

Տասներորդ՝ որովհետեւ այլ եւ այլ իմաստութեամբ լեցուց Իր տունը, այսինքն՝ Սուրբ Հոգիով եւ Անոր եօթնարփեան շնորհքներով, որով Անոր հետեւորդները ուռճանալով՝ տիեզերքը լեցնեն Իր վարդապետութեամբ. այս պատճառով կ՚ըսէ. «Աստուած Իր իմաստութեամբ [երկրի հիմքերը դրաւ]»[63]։ Տակաւին, բոլոր ազգերէն զանազան քարոզողներ ղրկեց ամբողջ երկրով մէկ եւ Իր տան շինութեան համար։ Եւ որպէսզի չըսեն, թէ աստնք միայն կրնան սքանչելիքներ գործել, որոնք զգալի աչքերով Տէրը տեսան, ատոր համար առաքեալներէն շատեր ոչինչ այնպէս կրցան ներգործել, ինչպէս անոնց տկար յետնորդները, որոնք իրենցմէ ետք եկող ժամանակին եկան եւ Տէրը տեսած չըլլալով՝ բազմաթիւ սքանչելիքներ կատարեցին, ինչպէս Սեղբեստրոսը Հռոմի մէջ Կոստանդինն ու այն ազգը քրիստոնէութեան դարձուց[64]։ Նաեւ, Սուրբ Գրիգորը տկար ըլլալով եւ առաքեալ չըլլալով՝ իր առաքինութեան եւ չարչարանքներուն միջոցով Տէրը անոր առաւել զօրութիւն տուաւ, քան բոլոր առաքեալներուն, որովհետեւ ամբողջ Հայ ազգը քրիստոնէութեան դարձուց։ Չարչարանքներէն ետք տեսաւ մեծ տեսիլք մը՝ Միածինին իջնելը, ուր դրաւ եկեղեցւոյ հիմքը՝ Վաղարշապատ քաղաքի մէջ, ինչ բանին համար այսօր մենք հաւաքուած՝ նոյն տօնը կը տօնենք[65]։ Եւ որպէսզի չըսեն, թէ Աստուած միայն այր մարդոց միջոցով սքանչելիքներ կրնայ ընել, այդ պատճառով զօրութիւն տուաւ Նունէին՝ վրացիներու առաքեալուհիին, որ այնտեղ երթալով բազմաթիւ սքանչելիքներ կատարեց եւ այդ բարբարոս ազգը աստուածպաշտութեան դարձուց[66], այդ պատճառով Մարգարէն կ՚ըսէ. «Աստուած

---

[63] *Առակ. Գ. 19։*

[64] *Սեղբեստրոս Հայրապետ (314–335)։ Հռոմէական եկեղեցւոյ կազմակերպիչներէն եւ հիմնադիրներէն մէկը (Ծանօթագրութիւնը Խադ Քահանայ Ղազարեանինն է)։*

[65] *Հոգեգալուստի տօնին յաջորդող երկրորդ Կիրակի օրը Սուրբ Էջմիածինի տօնն է (ծանօթագրութիւնը Խադ քահանայ Ղազարեանինն է)։*

[66] *Նունէն Հռիփսիմեանց կոյսերէն մէկը կը համարուի, որ Վրաստանի Մծխիթա քաղաքը երթալով՝ Նանա Թագուհիին օրով Քրիստոսի Աւետարանը կը քարոզէ եւ ժողովուրդը դարձի կը բերէ (ծանօթագրութիւնը Խադ քահանայ Ղազարեանինն է)։*

Իր իմաստութեամբ [երկրի հիմքերը դրաւ]»[67]։ Ատոր համար մենք Սուրբ եկեղեցւոյս տօնը կը փառաբանենք եւ անչա՛փ իմաստութեամբ կը պատուենք զայն Հիմնողը։

Իսկ ասիկա՝ Շողակաթի տօնն է։ Եւ ասիկա բազմաթիւ պատճառներով։

Նախ՝ որովհետեւ ինչպէս շողը տան մէջ կ՚իջնէ, այդպէս ալ այսօր Հօր Միածին Բանը Հայաստանի մէջ իջաւ եւ Իր սուրբին երեւցաւ։

Երկրորդ՝ քանի որ ինչպէս շողին մէջ անթիւ փոշի կայ, որ չի՛ երեւնար մանաւանդ գարնան, այդպէս ալ Միածինի գալուստին զօրքերու անթիւ բազմութիւններ երկինքէն խումբ խումբ կ՚իջնէին, ի պատիւ Միածինին։

Երրորդ՝ որովհետեւ շողը արեգակէն կը յառաջանայ, այդպէս ալ Միածին Բանը Հօրմէն է եւ Անկէ կը յառաջանայ, ինչպէս լոյսը արեգակէն։

Չորրորդ՝ քանի որ արեգակին լոյսը համասփիւռ ըլլալով ամբողջ տիեզերքին վրայ, սակայն, նուազելով ու փոքրանալով կ՚իջնէ տան պատուհաններուն եւ լուսանցքներուն՝ անթերի եւ անպակաս համատարածէն, այդպէս ալ Միածին Բանը Հօր եւ Սուրբ Հոգիին հետ երկինքն ու երկիրը կը լեցնէ՝ Մարգարէին համաձայն[68]։ Իսկ այսօր, «փոքրանալով» Իր մարմինի չափին մէջ՝ իջաւ Հայաստանի կորսուած ազգին մօտ։

Հինգերորդ՝ որովհետեւ շողը մինչեւ երկիր չհասնի՝ դադար չ՚առներ ո՛չ մէկ տեղ. այդպէս ալ Միածին Բանը երկրի ներքեւի ստորոտները հասաւ եւ այնտեղ դադար առաւ միշտ։

Վեցերորդ՝ քանի որ շողը իր ջերմութեամբ ո՛ւր որ հասնի՝ կ՚ազդէ. այդպէս ալ Միածին Բանը երբ երկիր հասաւ, ոսկէ մուրճով զարկաւ երկրին, որով անհուն թնդիւն եղաւ անդունդներու սանդարամետներուն մէջ։

Եօթներորդ՝ որովհետեւ թէեւ շողը մէկ տեղէ կ՚իջնէ, սակայն, անոր շառաւիղէն ամբողջ տունը կը լուսաւորուի. այդպէս ալ, թէեւ Միածինը միայն Վաղարշապատ իջաւ, սակայն, ամբողջ Հայաստանը լուսաւորուեցաւ Անոր լոյսէն։

Ութերորդ՝ քանի որ թէեւ տունէն դուրս կ՚երեւի արեգակին լոյսը, բայց շողին տուն իջնելուն՝ առաւել կը զուարթանայ մարդոց միտքը. այդպէս ալ, թէեւ Հայաստանէ դուրս Տիրոջ հաւատացեալներ կային եւ Տէրը այնտեղ կ՚երեւնար, սակայն, Հայաստանի մէջ երեւնալով՝ Հայաստանի եկեղեցիները պայծառացան։

---

[67] *Առակ. Գ. 19։*

[68] *Հմմտ. Սաղմ. ԼԲ. 5։*

Իններորդ՝ որովհետեւ այդ շողէն կ՚երեւնայ արեգակին ամբողջ զօրութիւնը. այսպէս ալ Միածին Բանը, որ մեր մօտ իջաւ, Սուրբ Հոգիին շնորհքը երեւցաւ, որով ասոնց մէջ առաւել կերպով «ծաւալեցաւ», քան հաւատացեալներու բոլոր խումբերուն։

Տասներորդ՝ քանի որ առաւօտէն մինչեւ երեկոյ շողը տան մէջ կայ. այդպէս ալ, ո՛չ թէ միայն այն ժամանակ Տէրը մեզի հետ էր եւ այդ քաղաքին [Վաղարշապատի] մէջ, այլ՝ մինչեւ աշխարհի վախճանը եւ ամէն տեղ, ուր ալ ընթանանք, մեզի հետ է ու պիտի ըլլայ։

Տասնմէկերորդ՝ ստուեր մը, ամպ մը կամ կենդանի մը կը խափանէ շողը կամ խոցուած երդիքներէ լոյսը տուն չ՚իջներ. այդպէս ալ մեր մեղքերը միջանապատ կ՚ըլլան Միածին Բանին գալուստին՝ ըստ այնմ. «Ես մօտիկ Աստուած եմ եւ ոչ թէ հեռաւոր. սակայն, ձեր մեղքերը կը բաժնեն իմ եւ ձեր միջեւ»[69]։

Տասներկրորդ՝ կը փակէ մեր զգալի տեսութիւնն ու միտքը, որպէսզի չտեսնենք զԻնք եւ Անոր լոյսէն լուսաւորուինք, այդ պատճառով թօթափենք մեզմէ մեղքերուն քունը, որպէսզի միշտ անթարթ աչքերով տեսնենք Միածինը՝ մեր յոյսը։

Այս պատճառներուն համար Շողակաթի տօն կը կոչուի։

Իսկ թէ ինչ է պատճառը, որ այս երեք տօներէն առաջ նախ Եկեղեցիին տօնը կը տօնենք եւ ապա միւսները, այսինքն՝ Վարդավառին, Աստուածածինին [վերափոխում] եւ Խաչին [Խաչվերաց][70]։

---

[69] Տե՛ս Երեմ. ԻԳ. 23։

[70] Եկեղեցւոյ տօներէն են «Կաթողիկէ Ս. Էջմիածին»ն ու «Շողակաթը»։ Առաջինը Սուրբ Հոգեգալուստէն երկու շաբաթ եւթ կը կատարուի, այսինքն՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչին Վիրապէն ելլելու տօնին յաջորդ կիրակի օրը։ Ասիկա չիշատակն է այն տեսիլքին, որ Ագաթանգեղոսի համաձայն, մեր հաւատքի հայրը՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը տեսած է Արտաշատի բանտէն ելլելէն եւթ. Աստուծոյ Միածինը, երկինքէն իջնելով, ոսկէ մուրճով խորտակած է հեթանոսական պաշտամունքի վայրը եւ Իր իջման վայրին վրայ կը գծագրէ այն եկեղեցին, որ պէտք է այդ վայրին վրայ կառուցուէր։

Իսկ երկրորդը՝ Շողակաթի տօնը, Աստուածածինի վերափոխման կիրակիին նախորդող Շաբաթ օրը կը կատարուի եւ չիշատակն է էջմիածինի լուսաւորչաշէն տաճարի նաւակատիքին։ Շողակաթ մակդիրը վերցուած է Լուսաւորիչի տեսիլքին մէջ երեւցած շողի կաթումէն, ինչպէս էջմիածինը՝ Միածինի իջումէն։

Մատթէոս Վարդապետը այս քարոզին մէջ կը խօսի «Շողակաթի» տօնին մասին, սակայն՝ «նախ եկեղեցիին տօնը կը տօնենք եւ ապա միւսները, այսինքն՝ Վարդավառին, Աստուածածինին եւ Խաչին» միտքը աւելի կը պատշաճի «Կաթողիկէ Ս. Էջմիածինի» տօնին, որովհետեւ յաջորդականութեան կարգով ո՛չ թէ «Շողակաթի», այլ՝ «Կաթողիկէ Ս. Էջմիածինի» տօնէն եւթ կը տօնուին Վարդավառը, Աստուածածինի [Վերափոխումը] եւ Խաչվերացը (Ծանօթագրութիւնը Խադ քահանայ Ղազարեանինն է)։

Գիտելի է, թէ առանց օրինակի ճշմարտութիւնը հաւաստի չըլլար, աւելին, ճշմարտութեան գեղեցկութիւնը չի՛ երեւիր. ասիկա յայտնի է մարդէն ու գրութենէն, որովհետեւ եթէ գրուածը չտեսնենք, մարդուն ստոյգ կենդանութիւնն ու անոր պատուականութիւնը չի երեւիր. այսպէս ալ նախ պէտք է եկեղեցւոյ օրինակը իմանալ եւ ապա իրին ճշմարտութիւնը յայտնի ընել, այդ պատճառով նախ տապանակինը կը տօնենք, որ իր մէջ ունէր Աստուծոյ Բանը եւ Քրիստոսի օրինակ էր, եւ ատկէ ետք՝ Քրիստոսի Պայծառութեան [Պայծառակերպութեան տօնը]։ Եւ նախ Շողակաթի [տօնը կը տօնենք], որ նաեւ Միածին Բանին՝ Կոյսին արգանդին մէջ իջնելու օրինակն է եւ ինչպէս նաեւ անոր [Աստուածածինին] վերափոխումը, որպէսզի ասով հաւատալի ըլլան Հայաստանի բիրտ ազգին։ Եւ նախ, Հեղինէն Երուսաղէմի եկեղեցիներուն նաւակատիքը ըրաւ եւ ապա խաչը գտաւ՝ բարձրացուց զայն, ի տես ժողովուրդին[71]*։*

Դարձեալ, անցեալին սահմանուած էր ամառ ժամանակ կատարել Տաղաւարահարացի յիշատակութեան տօնը, որ անապատին մէջ ժողովուրդը տաղաւարներու տակ մնացին քառասուն տարիներ։ Իսկ Նորին մէջ փոխուեցաւ Քրիստոսի Պայծառակերպութեան տօնին, որ Պետրոս՝ Քրիստոսի ու Մովսէսի համար[72] *տաղաւար [կ՚ուզէր] շինել , ատոր համար այդտեղ տապանակին [տօնը] կարգուեցաւ [սահմանուեցաւ]*[73]*, որպէսզի անմոռանալի ըլլայ Աստուծոյ հին երախտիքը։ Տակաւին, այս օրն է, որ Սուրբ Գրիգորը Միածինին էջքը տեսաւ, ատոր համար այստեղ կարգուեցաւ [սահմանուեցաւ]*[74]*։*

Նմանապէս, Երուսաղէմի նաւակատիքը Սեպտեմբեր 13-ին եղաւ, իսկ

---

[71] Կոստանդիանոս Կայսրին մայրը՝ բարեպաշտ Հեղինէ Թագուհին, 327 թուականին Երուսաղէմ ուխտի գալով, հետամուտ կ՚ըլլայ Քրիստոսի խաչափայտը գտնելուն։ Խաչը գտնելէն ետք Կոստանդիանոսն ու Հեղինէ Թագուհին Երուսաղէմի մէջ նախ կը կառուցեն եկեղեցիներ եւ ըստ պատմիչ Եւսեբիոս Կեսարացիին, նաւակատիք կը կատարեն (նոր տունի բացումի տօն), ապա խաչը կը բարձրացնեն, որպէսզի բոլորը տեսնեն։ Այսօր, մենք նոյնպէս, Խաչվերացի տօնին (11–17 Սեպտեմբերին հանդիպող կիրակի օրը) նախորդող Շաբաթ օրը նաւակատիք կը կատարենք, ապա Կիրակի օրը Խաչվերացի տօնը կը կատարենք (ծանօթագրութիւնը Խադ քահանայ Ղազարեանինն է)։

[72] Տե՛ս Մատթ. ԺԷ. 4։

[73] Մեր Տիրոջ «Պայծառակերպութեան» տօնին նախորդող Շաբաթ օրը կը տօնենք «Յիշատակ Տապանակին հնոյ եւ նորոյ եւ Տօն նորոյս Սրբոյ եկեղեցւոյ»-ն։ «Պայծառակերպութիւնը» կը տօնենք «Սուրբ Յարութենէն» չիսուն օր ետք [ո՛չ թէ չիսուն օր, այլ 98 օր ետք (Ծանօթագրութիւնը թարգմանիչին)] (ծանօթագրութիւնը Խադ քահանայ Ղազարեանինն է)։

[74] Սուրբ Հոգեգալուստին Բ. կիրակի օրը «Սուրբ Էջմիածինի» տօնը կը տօնենք (ծանօթագրութիւնը Խադ քահանայ Ղազարեանինն է)։

14-ին Խաչին վերացումը, ատոր համար միասին կարգուեցան [սահմանուեցան][75]։

Արդ, մեր Եկեղեցւոյ տօնախմբումին եւ Բանին իջնելուն՝ մեր սիրտերը նաւահանգիստ ընենք՝ մենք մեզ մեղքերէն կտրելով, ինչպէս այս օրը կտրուած ենք կենդանիներու միսէն ու պարկեշտ կերակուրներով սրբութեան կը սպասենք, որով պիտի նորոգուին մեր մեռելոտի գարշութեան գործերը՝ փայլելու համար արդարութեան լուսաւոր զգեստներով։ Տակաւին, միշտ պատրաստենք մենք մեզ ըլլալու Տիրոջ անուան վայր, ուր Իր զօրքով իջնէ Բանն Աստուածը՝ մեր իմանալի միտքերուն մէջ, ինչպէս այսօր Վաղարշապատ իջաւ, հանէ դիւաշունչ չարիքներու մեղքերու ամբարուած թարախը մեր սիրտերէն, ինչպէս որ Հայաստանի մէջ դեւերու գունդերը հալածեց եւ խորտակէ Իր կենդանարար Խաչով սանդարամետ անդունդները Բելիարի մշտական բնակութիւնը։ Որպէսզի մենք մշտատարած բազուկներով Անոր դիմաց ելլենք ու խնդրենք մեր մեղքերուն քաւութիւնը, որով Երկինքի Արքայութեան ժառանգորդներ ընէ մեզ՝ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որ օրհնեալ է յաւիտեանս. [Ամէն]։

Գրաբարէ արեւմտահայերէնի վերածեց՝
ՎԱՐԱՆԴ (ՅԱԿՈԲ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆ

---

[75] *«Խաչվերացի» տօնը այսօր Սեպտեմբեր 11–17 հանդիպող կիրակի օրը կը կատարենք, իսկ նախորդող Շաբաթ օրը կը կատարենք «Տօն Սրբոյ Եկեղեցւոյ ի նաւակատիս Սրբոյ Խաչին»։*

Doi: 10.56 737/2953-7843-2026.05-69

ԱՐԱՐԱՏ ՔԱՀԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու
Ս. Էջմիածնի Մատենադարանի եւ հրատարակչության տնօրեն

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ (ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ, ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ)[1]

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կառավարման համակարգն իր տեսակով հնագույն եւ յուրօրինակ է: Այն ձեւավորվել է ոչ միայն աստվածաբանական եւ կանոնական սկզբունքների, այլ նաեւ պատմաքաղաքական իրադարձությունների ազդեցությամբ: Հայ Եկեղեցու կառավարման համակարգը դարերի ընթացքում կրել է բազմաբնույթ փոփոխություններ, սակայն պահպանել է իր հիմնական առանցքը՝ հայրապետական իշխանության եւ ժողովական սկզբունքի համադրությունը: Այս համակարգը հնարավորություն է տվել Եկեղեցուն միաժամանակ հանդես գալու որպես հոգեւոր կառույց, ազգային ինքնության կրող ու պահապան, հասարակական միավորիչ ուժ:

Վաղ քրիստոնեական համայնքներում կառավարման հիմնական սկզբունքը եղել է ժողովականությունը: «Գործք առաքելոց»-ը նկարագրում է, թե ինչպես էին առաքյալները համայնքային խնդիրները լուծում հավաքական քննարկումների միջոցով: Հատկանշական է մասնավորապես Երուսաղեմի առաքելական ժողովը (մոտ 49 թ.), որի ընթացքում քննարկվել են քրիստոնեության ընդունածների նկատմամբ Մովսիսական օրենքի կիրառության եւ այլ հարցեր[2]: Այս ժողովը դարձել է հետագա եկեղեցական ժողովների նախօրինակը եւ ցույց տվել, որ վաղ Եկեղեցին կառավարվել է ոչ թե բացառապես միանձնյա իշխանությամբ, այլ խորհրդակցական սկզբունքով: Շնորհք արք. Գալուստյանն իր «Տեղիք աստուածաբանութեան» աշխատության մեջ եկեղեցական ժողովը սահմա-

---

[1]* *Ստացվել է՝ 29.04.2026, գրախոսվել է՝ 15.06.2026: Էլ. հասցե՝* terararatqahana@gmail.com:

[2] *Տե՛ս* Սիփան քհն. Գրիգորյան, *Նոր կտակարանի ներածություն, Ս. Էջմիածին, 2021, էջ 210–211:*

նում է որպես «....համախմբութիւն հոգեւոր առաջնորդներու (ըստ Գործք առաքելոցի բացատրութեան. «Առաքեալք եւ երիցունք»)՝ խորհրդակցելու եւ որոշում տալու համար եկեղեցական ամէն տեսակ խնդիրներու մասին, յատկապէս հաւատոյ եւ բարեկարգութեան վերաբերեալ հարցերու վերաբերմամբ»[3]: Այս հանգամանքը կարեւոր է նաեւ Հայ Եկեղեցու կառավարման պատմական հիմքերը հասկանալու համար:

Հայ Եկեղեցին, հավատարիմ վաղ քրիստոնեական ավանդությանը, ի սկզբանե որդեգրել է ժողովական կառավարման ձեւը: Հայ պատմագրությունը վկայում է, որ Ս. Գրիգոր Լուսավորչի կաթողիկոսական ընտրությունը կատարվել է լայն ներկայացուցչությամբ ժողովի միջոցով, որին մասնակցել են նախարարներ, իշխաններ, զորականներ եւ հասարակական տարբեր խավերի ներկայացուցիչներ[4]: Այս իրողությունը ցույց է տալիս, որ Հայ Եկեղեցու կառավարման հիմքում դրվել է ոչ միայն նվիրապետական, այլ նաեւ ազգային-համայնքային սկզբունքը:

Ս. Գրիգոր Լուսավորիչը Դ. դարասկզբին ձեւավորել է Հայ Եկեղեցու նվիրապետական կառուցվածքը՝ հարմարեցնելով պետական կառավարման համակարգին: Սահմանվել են թեմական բաժանումներ, կարգավորվել են հոգեւոր իշխանության իրավասությունները: Ուխտանես պատմիչը մանրամասն ներկայացնում է Ս. Գրիգոր Լուսավորչի ձեռնադրած եպիսկոպոսներին եւ նրանց գործունեությունը[5]: Վերոնշյալ գործընթացը, ըստ էության, նպաստել է ոչ միայն Հայոց Եկեղեցու կազմավորմանը, այլ նաեւ Հայաստանի քաղաքական եւ մշակութային համախմբմանը քրիստոնեական արժեհամակարգի շուրջ:

Հայ Եկեղեցու կառավարման համակարգը պատմականորեն ձեւավորվել է այնպիսի պայմաններում, երբ Եկեղեցին ստիպված է եղել ստանձնել նաեւ պետական-հասարակական գործառույթներ: Միջնադարյան Հայաստանում Հայ Եկեղեցին իրականացրել է կրթական, դատավարական, մարդասիրական, երբեմն նաեւ դիվանագիտական գործունեություն: Պետականության կորստից հետո այն դարձել է ազգային ինքնության պահպանման հիմնական կառույցը: Այս առումով Հայ Եկեղեցին զգալիորեն

---

[3] Շնորհք եպիսկոպոս Գալուստեան, *Տեղիք աստուածաբանութեան*, Երուսաղէմ, 1993, էջ 19:

[4] *Տե՛ս* Ագաթանգեղոս, *Հայոց պատմություն*, աշխարհ. թարգմ. եւ ծանոթ.՝ Ա. Տեր-Ղեւոնդյանի, Երեւան, 1983, էջ 445:

[5] *Տե՛ս անդ*, էջ 477. *հմմտ.* Ուխտանէս եպիսկոպոս, *Պատմութիւն Հայոց*, Հատուած առաջին, Վաղարշապատ, 1871, էջ 100:

տարբերվել է թե՛ Արեւմտյան կաթոլիկ եւ թե՛ Արեւելյան Ուղղափառ եկեղեցիներից, որոնք հիմնականում գործել են չընդհատվող պետական համակարգերի պայմաններում։

Հռոմի կաթոլիկ եկեղեցու կառավարման համակարգը աստիճանաբար ձեւավորվել է որպես կենտրոնացված կառույց՝ պապի գերակայությամբ։ Կաթոլիկ եկեղեցում Հռոմի պապը համարվում է ամբողջ եկեղեցու գերագույն առաջնորդը, որի իշխանությունը տարածվում է բոլոր թեմերի ու եկեղեցական կառույցների վրա։ Առավելապես Վատիկանի Ա. ժողովից (1869–1870 թթ.) հետո պապական անսխալականության դոգմայի ընդունումն ուժեղացրեց կենտրոնացված կառավարման բնույթը[6]։

*Ի տարբերություն կաթոլիկ եկեղեցու՝ Հին Արեւելյան Ուղղափառ քաղկեդոնական եկեղեցիներում ձեւավորվել է առավել ընդգծված սինոդական համակարգ։ Ուղղափառ աշխարհում յուրաքանչյուր ինքնավար եկեղեցի ղեկավարվում է իր պատրիարքի կամ արքեպիսկոպոսի իշխանությամբ՝ Սինոդի հետ համագործակցությամբ։ Կ. Պոլսի տիեզերական պատրիարքն ունի «առաջինը հավասարների մեջ» (*primus inter pares*) կարգավիճակ, սակայն չունի այնպիսի համընդհանուր իշխանություն, ինչպիսին ունի Հռոմի պապը Կաթոլիկ եկեղեցում[7]։*

Հայ եկեղեցին այս երկու մոդելների միջեւ ձեւավորել է յուրահատուկ համակարգ։ Մի կողմից՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայոց եկեղեցու բարձրագույն հոգեւոր առաջնորդն է, մյուս կողմից՝ Ազգային-եկեղեցական ժողովը բարձրագույն կանոնադիր մարմինն է։ Այս համակարգը թույլ է տվել համադրել կաթողիկոսական իշխանությունն ու ժողովական սկզբունքը[8]։

Հայ եկեղեցու կառավարման համակարգի կարեւոր առանձնահատկություններից է աշխարհականների գործուն ներգրավվածությունը։ Ազգային-եկեղեցական եւ թեմական ժողովներին, ծխական խորհուրդներին մասնակցում են ոչ միայն հոգեւորականներ, այլ առավելապես աշխարհականներ։ Սա էականորեն տարբերվում է հատկապես կաթո-

---

[6] *Տե՛ս* Klaus Schatz, Papal primacy։from its origins to the present, Collegeville, Minnesotas։Liturgical Press, *1996, էջ 131–160։*

[7] *Տե՛ս* John Meyendorff, Byzantine Theology։ Historical Trends and Doctrinal Themes, New York, Fordham University, Press, *1987, էջ 95–101, 286–289։*

[8] *Տե՛ս* Л. М. Меликсет-Беков, Юридическое положение верховного патриарха армянского, Одесса, *1911, էջ 5–6։*

լիկ եկեղեցու միջնադարյան կառավարման համակարգից, որտեղ վարչական որոշումների հիմնական մասը կայացնում է հոգեւոր դասը: Սակայն պետք է նշել, որ Ի. դարում կաթոլիկ եկեղեցում եւս նկատվում է աշխարհականների մասնակցության աճ՝ հատկապես Վատիկանի Բ. ժողովից հետո[9]:

Պատմության հոլովույթում, հաճախ քաղաքական տարաբնույթ իրավիճակներով պայմանավորված, Հայ եկեղեցու կառավարման ժողովական բնույթը խեղելու փորձեր են արվել: Հիշատակվում են դեպքեր, երբ նման անընդունելի եւ հակականոնական գործելաոճ են ցուցաբերել մասնավորապես Հայոց թագավորներն ու իշխանները, սակայն այս երեւույթը, որպես Հայոց եկեղեցու նկատմամբ որդեգրված համակարգված քաղաքականություն, հիմնականում բնորոշ է եղել պատմական այն շրջափուլերին, երբ հայ ժողովուրդը, զրկված լինելով պետականությունից, գտնվել է օտար տիրապետության ներքո: Օտար տիրակալները Հայոց եկեղեցում հաստատված կարգ ու կանոնը հնարավոր բոլոր միջոցներով ոտնահարելու, իրենց կամքը թելադրելու եւ նրա դարավոր իրավունքները սահմանափակելու նպատակ են ունեցել: Եւ չնայած այս բարդ իրադարձություններին՝ Հայոց եկեղեցին հաղթահարել է ժամանակի փորձություններն ու պատվով դիմակայել թե՛ ներքին եւ թե՛ արտաքին մարտահրավերներին:

Նշենք, որ բազմիցս փորձել են նաեւ արհեստածին «ժողովական» մարմինների, կանոնադրությունների եւ օրենքների ներդրմամբ սահմանափակել ու ոտնահարել կաթողիկոսների եւ Հայոց եկեղեցու ժողովական մարմինների կանոնական ու ավանդությամբ սրբագործված իշխանությունը եւ իրավասությունները՝ հատկապես եկեղեցական-վարչական կառավարման ոլորտում[10]: Այսպես՝ հայագիտության մեջ տարածված տեսակետի համաձայն՝ Սուրբ Էջմիածնում Սինոդը ստեղծվել է 1836 թ. հաստատված «Պոլոժենիե»-ով: Այնինչ՝ Սուրբ Էջմիածնում Սինոդ ձեւավորելու գաղափարն առաջին անգամ ԺԸ. դարավերջին շրջանառել է Կ. Պոլսի

---

[9] *Տե՛ս* Yves Congar, Lay People in the Church: A Study for a Theology of the Laity, Revised Edition, Westminster, Maryland: Newman Press, *1965, էջ 283–312. նաեւ՝* Lumen Gentium: Dogmatic Constitution on the Church, promulgated by Pope Paul VI, November *21, 1964*, in Vatican Council II: The Conciliar and Post Conciliar Documents, ed. Austin Flannery, Collegeville, Minnesota: Liturgical Press, *1975*, §§ *30–38*:

[10] *Տե՛ս «Էջմիածին», 1958, ԺԲ., էջ 4–5*:

Հայոց պատրիարքության ավագանին՝ որպես պատրվակ ներկայացնելով Ղուկաս Ա. Կարնեցու (1780–1799 թթ.) կաթողիկոսական ընտրությունը[11]: Հայ Եկեղեցու կառավարման համակարգին օտար մարմին՝ Սինոդ ունենալու գաղափարի գլխավոր ջատագովը եղել է Կ. Պոլսի Հայոց պատրիարք Զաքարիա Կաղզվանցին (պատրիարք՝ 1773–1781 եւ 1782–1799 թթ.), որի նկրտումները բացառապես անձնական սնափառությունից դրդված էին. նա կարծում էր, թե միայն ինքն է արժանի՝ դառնալու Հայոց կաթողիկոս՝ գործունեության արդյունավորությամբ եւ արժանիքներով իրեն վեր դասելով Մայր Աթոռի բոլոր եպիսկոպոսներից. «Բայց ազգայիններէն աւելի էր Զաքարիայի զայրոյթը, ոչ թէ լոկ իր աթոռին պատիւը պաշտպանելու տեսակէտէն, այլ աւելի իր անձնական զգացումին վիրաւորուելուն համար, որովհետեւ իրեն իրաւունքը կը կարծէր կաթողիկոսական աթոռին յաջորդութիւնը, եւ զինքն Ղուկասէ եւ բոլոր Մայր Աթոռոյ եպիսկոպոսներէն վեր կը դասէր արդիւնաւորութեամբ եւ արժանաւորութեամբ»[12]:

Հետագայում, ըստ պահպանված վավերագրերի, Սուրբ Էջմիածնում Սինոդը հաստատվել է Դանիել Ա. Սուրմառեցի կաթողիկոսի (1807–1808 թթ.) 1806 թ. հուլիսի 10 կոնդակով[13], որով սահմանվում էին այս մարմնի հիմնական գործառույթները՝ Սինոդի «իշխանութիւնը պիտի տարածուի, կանոնական եւ դատական բարեկարգական եւ մատակարարական ճիւղերու վրայ հաւասարապէս....»[14]: Այսպիսով՝ «....Դանիէլի Մարաղայէ գրած կոնդակովը ծրագրուած էր Մայր Աթոռոյ կառավարութիւնը, եւ որոշուած էր կաթողիկոսի անձնական իշխանութիւնը խորհրդակցական ձեւի փոխել՝ մնայուն Սինոդի մը կազմութեամբ»[15]:

Ավելի ուշ՝ 1836 թ., ռուսական կայսրության ազդեցության ներքո առաջ քաշվեց նոր Սինոդ ստեղծելու գաղափարը: «Պոլոժենիե»-ի կիրարկմամբ զգալիորեն սահմանափակվեցին Ամենայն Հայոց կաթողիկոսի եւ Ազգային-եկեղեցական ժողովի իրավասությունները եւ ուժեղացվեց կայսրության վարչական վերահսկողությունը: Հայ եկեղեցագիտական գրականությունը հիմնականում այս գործընթացը գնահատում է որպես Հայոց Եկեղեցու ավանդական ինքնավարության սահմանափակում:

---

[11] *Տե՛ս* Մաղաքիա արք. Օրմանեան, *Ազգապատում*, հտ. Բ., Ս. Էջմիածին, 2001, § 2286:
[12] *Տե՛ս անդ*, § 2251:
[13] *Տե՛ս անդ*, § 2287:
[14] *Տե՛ս անդ:*
[15] *Անդ*, § 2294:

Նշենք նաեւ, որ Հայոց կաթողիկոսները չեն համակերպվել այդ իրավիճակին. օրինակ՝ ըստ ժամանակակիցների վկայության՝ Ներսես Ե. Աշտարակեցին (1843–1857 թթ.) անտեսել, իսկ Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցին (1858–1865 թթ.) փորձել է վերանայել այդ կանոնադրությունը: 1917 թ. «Պոլոժենիե»-ն դադարել է գործադրվել, իսկ մեկ տարի անց Մայր Աթոռի միաբան հայրերը դիմել են Գեւորգ Ե. Սուրենյանց կաթողիկոսին (1911–1930 թթ.) եւ խնդրել լուծարել նաեւ «Պոլոժենիե»-ի մաս կազմող Սինոդը, քանի որ այն «....շատ անգամ միջամտել է Հայոց ընդհանրական հայրապետի, նրա փոխանորդ թեմակալ առաջնորդների, Հայոց Եկեղեցւոյ եւ ժողովրդի վերաբերեալ գործերին՝ ցույց տալով անվստահութիւն ազգի ընտրեալի եւ իւր հօտի ու Եկեղեցւոյ իրաւանց դէմ»[16]:

Գիտական տեսանկյունից, սակայն, անհրաժեշտ է խուսափել միակողմանի գնահատականներից: Ռուսական եկեղեցական-քաղաքական շրջանակը «Պոլոժենիե»-ն եւ նրա մաս կազմող Սինոդը դիտարկել է որպես վարչական արդյունավետության բարձրացման միջոց: Նմանօրինակ գործընթացներ տեղի են ունեցել նաեւ այլ Եկեղեցիներում: Օրինակ՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցում Պետրոս Ա.-ն վերացրել է պատրիարքությունը եւ ստեղծել Սուրբ Սինոդ, որին փաստացի վերահսկում էր պետությունը: Ֆրանսիայում գալիկանիզմ[17] եւս սահմանափակել է պապական իշխանությունը հօգուտ պետական վերահսկողության: Այս համեմատությունը ցույց է տալիս, որ Եկեղեցու եւ պետության հարաբերությունները ողջ քրիստոնեական աշխարհում եղել են բարդ ու հակասական:

Գեւորգ Ե. կաթողիկոսը, այնուամենայնիվ, անսալով հոգեւորականության խնդրանքին եւ արձանագրելով, որ Սինոդն այլեւս չունի իրավական եւ բարոյական նշանակություն, 1924 թ. ի տեղի Սինոդի հաստատում է ժողովական կառավարման նոր մարմին՝ Գերագույն հոգեւոր խորհուրդ եւ նշանակում նրա անդամներին[18]: Այս մարմնի ստեղծումը կարեւոր քայլ էր

---

[16] *«Վաւերագրեր Հայ Եկեղեցւոյ պատմութեան», Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Առաջին հանրապետութեան տարիներին (1918–1920 թթ.), գիրք Ե., Ս. Էջմիածին, 1999, էջ 33:*

[17] *Գալիկանիզմը (Ֆրանս.՝* Gallicanisme, *լատ.՝* Gallicanismus*) Կաթոլիկ Եկեղեցու ներսում ձեւավորված եկեղեցաքաղաքական ու եկեղեցագիտական ուղղություն էր, որը հատկապես զարգացավ Ֆրանսիայում ԺԷ.–ԺՀ. դարերում: Այն նպատակ ուներ սահմանափակելու Հռոմի պապի համընդհանուր իշխանությունը եւ ամրապնդելու ազգային եկեղեցու եւ թագավորական իշխանության ինքնուրույնությունը: Եզրույթը ծագում է* Gallia *(«Գալիա», այսինքն՝ Ֆրանսիա) անվանումից:*

[18] *Տես «Էջմիածին», 1984, Ժ., էջ 11–13, 14–15:*

ավանդական ժողովական կառավարման սկզբունքի վերականգնման ուղղությամբ: Առ այսօր Գերագույն հոգեւոր խորհուրդը, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խորհրդատվական կարեւոր մարմինն է, արդյունավետորեն քննարկում է վարչական, կրթական, մշակութային, տնտեսական, եկեղեցական, հասարակական-քաղաքական եւ այլ հարցեր:

Արդի շրջափուլում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կառավարման համակարգի բաղադրիչներն են Ազգային-եկեղեցական ժողովը, եպիսկոպոսաց ժողովը, Գերագույն հոգեւոր խորհուրդը, թեմական պատգամավորական ժողովները, թեմական խորհուրդները եւ ծխական կառույցները: Այս բազմաստիճան համակարգը հնարավորություն է ընձեռում համադրելու եկեղեցու կենտրոնացված ղեկավարությունն ու տեղական ծխական եկեղեցիների ինքնակառավարումը[19]:

Հայ եկեղեցու քույր եկեղեցիների՝ մասնավորապես Ղպտի, Ասորի, Եթովպական եւ Մալանկար Ուղղափառ եկեղեցիների հետ համեմատությունը եւս կարեւոր է: Այս եկեղեցիները, ինչպես Հայ եկեղեցին, պատկանում են Հին Արեւելյան Ուղղափառ ոչ Քաղկեդոնական եկեղեցիների ընտանիքին: Նրանց կառավարման համակարգերում եւս առկա է հայրապետական եւ սինոդական կառավարման սկզբունքների համադրություն: Օրինակ՝ Ղպտի Ուղղափառ եկեղեցում Ալեքսանդրիայի պատրիարքն ունի բարձրագույն իշխանություն, սակայն գործում է Սուրբ Սինոդի հետ համագործակցությամբ: Եթովպական եկեղեցում եւս կարեւոր դեր ունի սինոդական կառավարումը: Այս եկեղեցիների կառավարման համակարգերը պատմականորեն ձեւավորվել են ազգային եւ մշակութային առանձնահատկությունների ազդեցությամբ, ինչպես Հայ եկեղեցու պարագայում[20]:

---

[19] Տե՛ս «Ազգային-եկեղեցական ժողով գումարելու հատուկ կանոնադրություն». տե՛ս Ար-սեն արք. Բերբերյան, Ինչպես են Հայ Առաքելական եկեղեցում ընտրում եւ օծում եպիսկոպոս եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ս. Էջմիածին, 1995, էջ 8–10. նաեւ՝ «Ուղենիշ Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու թեմական կանոնադրության» (անտիպ), Սուրբ Էջմիածին, 2010. «Կանոնադրություն. Հայաստանյայց Առաքելական եկեղեցի», Սուրբ Էջմիածին, 2011:

[20] Տե՛ս Francis Dvornik, The Idea of Apostolicity in Byzantium and the Legend of the Apostle Andrew, Cambridge, Massachusetts: Harvard University Press, *1958, էջ 3–18, 77–94, 126–145, 241–260. նաեւ՝* Aziz S. Atiya, A History of Eastern Christianity, London: Methuen & Co Ltd, *1968, էջ 315–332.* Otto F. A. Meinardus, Two Thousand Years of Coptic Christianity, Cairo: The American University in Cairo Press, *1999, էջ 60–67, 89–95.* John Binns, The Orthodox Church of Ethiopia: A History, London: I.B. Tauris, *2017, էջ 149–158, 160–166.* Sebastian Brock, Aaron Butts, George Kiraz *(eds.),* The Syrian Orthodox Church in the Modern World, Piscataway, NJ: Gorgias Press, *2017, էջ 21–34, 40–47.* Մաղաքիա արք. Օրմանեան, *Ազգապատում, հտ. Բ., Ս. Էջմիածին, 2001,* §§ *2286–294:*

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կառավարման համակարգի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն ձեւավորվել է ոչ միայն կրոնական-եկեղեցական, այլ նաեւ ազգային-պատմական անհրաժեշտություններին համաձայն: Եթե Կաթոլիկ Եկեղեցու կառավարման համակարգն առավելապես կենտրոնացված է, իսկ Ուղղափառ Եկեղեցիներինը՝ սինոդական, ապա Հայ Եկեղեցին մշակել է միջանկյալ եւ առանձնահատուկ նախօրինակ: Կառավարման այս տարբերակը հնարավորություն է տվել Հայոց Եկեղեցուն պահպանելու ներքին միասնությունը նույնիսկ պետականության բացակայության պայմաններում:

Անհրաժեշտ է նաեւ ընդգծել, որ Հայ Եկեղեցու կառավարման համակարգի վերաբերյալ առկա գրականությունը հաճախ ոչ համակողմանի է վերլուծում սույն հարցը: Հայ եկեղեցագետ հեղինակների մի մասը հակված է Հայ Եկեղեցու կառավարման համակարգը ներկայացնելու որպես բացառիկ եւ անփոփոխ, մինչդեռ պատմական փաստերը ցույց են տալիս, որ այն բազմիցս ենթարկվել է փոփոխությունների՝ պայմանավորված քաղաքական եւ հասարակական իրողություններով: Վերլուծությունները ցույց են տալիս, որ արեւմտյան եւ ռուս հեղինակների ուսումնասիրություններում երբեմն նկատվում է Հայ Եկեղեցու ազգային յուրահատկությունների թերագնահատում: Հետեւաբար՝ առավել հավասարակշռված մոտեցումը պահանջում է գիտական տարբեր տեսակետների համադրություն:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, ունենալով առաքելական ավանդության, կանոնական իրավունքի եւ ազգային-պատմական փորձառության համադրությամբ ձեւավորված կառավարման համակարգ, այնուամենայնիվ այսօր կանգնած է մի շարք մարտահրավերների առջեւ, որոնք պայմանավորված են ինչպես հասարակական համընդհանուր վերափոխումներով, այնպես եւ հայ իրականության առանձնահատկություններով: Այս մարտահրավերները վերաբերում են ոչ միայն սույն համակարգի արդյունավետությանը, այլ նաեւ եկեղեցական ինքնության, ավանդության շարունակականության եւ կառավարման օրինականության պահպանմանը:

Ժամանակակից հասարակություններում արագ փոփոխվող սոցիալ-քաղաքական միջավայրը նոր պահանջներ է առաջադրում կրոնական հաստատություններին: Այս շարակարգում կարեւոր խնդիր է եկեղեցական ավանդական կառավարման սկզբունքների եւ արդի կառավարման կարգերի միջեւ հավասարակշռության ապահովումը: Հայ Եկեղեցին, պահպա-

նելով իր դարավոր կանոնական կառուցվածքը, միաժամանակ հարկադրված է արձագանքել այնպիսի գործընթացների, ինչպիսիք են ժողովրդավարական կառավարման մշակույթի տարածումը, հաշվետվողականության պահանջների աճը եւ հանրային մասնակցության ընդլայնումը։

Առանձնակի նշանակություն ունի եկեղեցու եւ պետության հարաբերությունների խնդիրը։ Թեեւ ժամանակակից Հայաստանի Հանրապետությունը սահմանադրորեն աշխարհիկ պետություն է, Հայ եկեղեցին շարունակում է ունենալ բացառիկ պատմական եւ մշակութային դերակատարություն։ Այդ պայմաններում անհրաժեշտ է մշտապես վերարժեւորել երկուստեք փոխհարաբերությունները, հիմնախնդիրների շուրջ բաց եւ անկեղծ քննարկումներ կազմակերպել, սակայն այնպես, որ չխախտվի Հայ եկեղեցու ինքնավարությունը, չոտնահարվեն նրա դարավոր իրավունքներն ու իրավասությունները, այլ ընդհակառակը՝ եկեղեցին կարողանա արդյունավետորեն մասնակցել եւ իր նպաստը բերել ազգային ու հասարակական կյանքի կարեւորագույն գործընթացներին։

Հայոց եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերներից է նաեւ Սփյուռքի եկեղեցական միասնական կյանքի կազմակերպումը։ Աշխարհի տարբեր երկրներում ձեւավորված թեմերն ու համայնքները գործում են տարբեր իրավական, մշակութային եւ հասարակական միջավայրերում, ինչը հաճախ բարդացնում է վարչական միասնականության եւ ընդհանուր ռազմավարության իրականացումը։ Հետեւաբար՝ եկեղեցական կառավարման համակարգը պետք է համադրի կենտրոնացված առաջնորդությունն ու տեղական ինքնակառավարումը։

Ժամանակակից տեղեկատվական պայմաններում առանձնակի կարեւորություն են ստանում թափանցիկության, հաշվետվողականության եւ հանրային հաղորդակցության խնդիրները։ Թվային տեխնոլոգիաների զարգացումը փոխել է հասարակության ակնկալիքները կառավարման բոլոր մարմիններից՝ ներառյալ եկեղեցական կառույցներից։ Այս հանգամանքը պահանջում է վարչական գործընթացների առավել հստակ կազմակերպում, տեղեկատվության մատչելիության բարձրացում եւ հանրության հետ արդյունավետ հաղորդակցություն՝ պահպանելով եկեղեցական կառավարման կանոնական եւ ավանդական բնույթը։

Մյուս կարեւոր մարտահրավերը վերաբերում է հոգեւորական եւ աշխարհական որակյալ մասնագետների, աշխատակիցների պատրաստմանը։ Արդի պայմաններում եկեղեցական ծառայությունը պահանջում է

ոչ միայն աստվածաբանական եւ հովվական գիտելիքներ, այլ նաեւ կառավարման, օրենսդրության, կրթության, հաղորդակցության եւ միջազգային համագործակցության ոլորտներում մասնագիտական կարողություններ: Ուստի կառավարման համակարգի կենսունակությունը մեծապես կախված է մասնագիտական պատրաստվածությունից եւ շարունակական կատարելագործումից:

Ներեկեղեցական համերաշխության եւ միասնականության պահպանումը եւս շարունակում է մնալ առաջնահերթ խնդիր: Ժամանակակից հասարակություններին բնորոշ քաղաքական, գաղափարական եւ մշակութային բազմազանությունն անխուսափելիորեն անդրադառնում է նաեւ եկեղեցական միջավայրի վրա: Այս առումով եկեղեցական կառավարման համակարգը պետք է կարողանա ապահովել տարբեր մոտեցումներ եւ ընկալումներ ունեցող անհատների ներդաշնակ համակեցությունը, համագործակցությունը՝ միաժամանակ պահպանելով Հայոց եկեղեցու վարդապետական, կանոնական, նվիրապետական եւ վարչական միասնությունը:

Այսպիսով՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու կառավարման համակարգին վերաբերող արդի մարտահրավերները հիմնականում առնչվում են ավանդության եւ արդիականացման, կենտրոնացված առաջնորդության եւ մասնակցային կառավարման, ազգային առաքելության եւ համաշխարհային ներկայության, ինչպես նաեւ կանոնական ինքնավարության եւ հասարակական պատասխանատվության միջեւ հավասարակշռության պահպանմանը: Այս խնդիրների արդյունավետ հաղթահարումը կարեւոր նախապայման է ԻԱ. դարում Հայ եկեղեցու պատմական առաքելության շարունակական իրականացման եւ նրա կառավարման համակարգի կենսունակ զարգացման համար:

Ամփոփելով՝ արձանագրենք, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու կառավարման համակարգն իսկապես յուրօրինակ է. այն համադրում է առաքելական ավանդությունը, ժողովական կառավարման սկզբունքը եւ կաթողիկոսական իշխանությունը, ինչը վկայում է՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին այսօր «որդեգրել է եկեղեցական կյանքի ղեկավարման ժողովրդավարական սկզբունքները եւ ժողովական դրությունը»[21]՝ պահպանելով ազգային ինքնությունը:

---

[21] *«Կանոնադրություն. Հայաստանյայց Առաքելական եկեղեցի», Սուրբ Էջմիածին, 2011, էջ 2:*

Այսօր եւս հիմք ընդունելով Աստվածաշունչ մատյանը, սրբազան ավանդությունը, Տիեզերական, Հայ Եկեղեցու ազգային-եկեղեցական, ինչպես նաեւ ազգային ու ընդհանրական ժողովների որոշումները, ընդունված եւ ամրագրված կանոնները, Հայրապետական կոնդակները, վճիռներն ու տնօրինությունները՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ընթացիկ գործունեությունը, ի գլուխ ունենալով Ամենայն Հայոց Կաթողիկոսին, կառավարում եւ համակարգում են համապատասխան կառույցները, հաստատությունները, հանձնաժողովներն ու հանձնախմբերը: Կառավարման տարաբնույթ ոլորտները վերահսկում են որոշակի նպատակով եւ սկզբունքներով կազմված մասնագիտական հանձնախմբերն ու խորհուրդները, որոնց մի մասի կազմը (փոփոխական կամ անփոփոխ) ամեն տարի ներկայացվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եկեղեցական օրացույցում[22]*:*

Կարծում ենք՝ Հայ Եկեղեցու կառավարման համակարգի ուսումնասիրությունը կարեւոր է ոչ միայն եկեղեցագիտության, այլ նաեւ հայ ժողովրդի քաղաքական, մշակութային եւ հասարակական պատմության ըմբռնման համար:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, Եկեղեցու կառավարման համակարգ, ժողովական սկզբունք, կաթողիկոսական իշխանություն, Ազգային-եկեղեցական ժողով, Գերագույն հոգեւոր խորհուրդ, եկեղեցական ինքնավարություն, Սինոդ, Պոլոժենիե, Եկեղեցի եւ պետություն, ազգային ինքնություն, եկեղեցագիտություն:

РЕЗЮМЕ

Система управления Армянской Апостольской Церковью основана на синтезе апостольского Предания, власти Католикоса всех армян и принципа соборности, сформировавшегося со времени святого Григория Просветителя. На протяжении веков безгосударственного существования армянского народа Церковь являлась главным институтом сохранения его духовной, культурной и националь-


[22] *«Օրացույց 2026», Ս. Էջմիածին, 2025, էջ 247–254:*

ной идентичности. Сложившаяся модель церковного управления представляет собой уникальное сочетание централизованного руководства и коллегиального принятия решений. Несмотря на внешнее политическое давление и институциональные преобразования, включая принятие царского «Положения» 1836 года и учреждение Высшего духовного совета в 1924 году, Армянская Апостольская Церковь сохранила институциональную преемственность, внутреннюю автономию и верность своим каноническим принципам. Современная система управления, включающая Национально-церковный собор, Епископский собор, Высший духовный совет и епархиальные органы, обеспечивает единство Церкви и эффективное осуществление её духовной, пастырской и национальной миссии.

SUMMARY

The governance of the Armenian Apostolic Church is founded upon a synthesis of Apostolic Tradition, the authority of the Catholicos of All Armenians, and the principle of conciliarity established since the time of St. Gregory the Illuminator. Throughout centuries of Armenian statelessness, the Church served as the principal institution preserving the nation's spiritual, cultural, and national identity. Its system of governance represents a distinctive combination of centralized leadership and collegial decision-making. Despite external political pressures and institutional reforms, including the promulgation of the Tsarist Polozhenie of 1836 and the establishment of the Supreme Spiritual Council in 1924, the Armenian Apostolic Church has preserved its institutional continuity, internal autonomy, and fidelity to its canonical traditions. Today, the National Ecclesiastical Assembly, the Assembly of Bishops, the Supreme Spiritual Council, and diocesan governing bodies collectively safeguard the unity of the Church and ensure the effective fulfillment of its spiritual, pastoral, and national mission.

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ



Doi: 10.56 737/2953-7843-2026.04-83

ՆԱՐԵԿ ՍԱՐԿԱՎԱԳ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Միաբան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

ՕՖԵԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՖՐԱՆՑ ՎԵՐՖԵԼԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Սկիզբը՝ թիվ Դ.

1924 թ. ապրիլին «Zsolnay Verlag»-ը հրատարակեց «Վերդի. Հռոմեական օպերա»[1] ստեղծագործությունը՝ հաստատելով Վերֆելի հեղինակությունը՝ որպես վիպասան: Վեպը հակադրում է Վերդիին իր օպերային մրցակից Ռիխարդ Վագների հետ. դա հանգեցրեց նրան, որ Վերֆելը լայնորեն ճանաչվեց որպես երաժշտության ոլորտի հեղինակություն: Հետագայում՝ 1926 թ., Վերֆելը խմբագրեց Վերդիի նամակների մի հատոր: Կաֆկան, որը միշտ չէ, որ հավանում էր Վերֆելի ստեղծագործությունները, Վերդիի մասին այս գիրքն առանձնացրել էր կարդալու կյանքի վերջին շրջանում առողջարանում գտնվելու՝ թոքախտի դեմ պայքարի ընթացքում: Վերֆելը շարունակեց անդրադառնալ պատմական կերպարների այլ պիեսներում, այդ թվում՝ «Խուարես եւ Մաքսիմիլիան» («Juarez und Maximilian») պատմա-քաղաքական դրամայում, որը պատկերում է 1860-ականների Մեքսիկայում հանրապետական առաջնորդ Բենիտո Խուարեսից եւ Ֆրանսիայից աջակցություն ստացող Մեքսիկայի կայսր Մաքսիմիլիան I-ի միջեւ պայքարը: Իսկ 1928 թ. «Պողոսը հրեաների մեջ» («Paulus unten der Juden») ստեղծագործության մեջ պատմությունը վերածվում է աստվածաբանության, քանի որ Վերֆելը փորձում է դրամայում երկխոսություն հաստատել երկու կրոնների՝ քրիստոնեության եւ հուդայականության միջեւ, որոնք հուզում էին նրա սիրտը:

1926 թ. Ավստրիայի գիտությունների ակադեմիան Վերֆելին արժանացրեց «Գրիլպարցեր»-ի մրցանակի, իսկ Բեռլինում Մաքս Ռեյնհարդ-

---

[1] Ֆ. Վերֆել, *Վերդի. Օպերայի վեպ*, թարգմ.՝ Լ. Տեր-Մինասյան, խմբ.՝ Է. Ռ. Մասումյան, Երեւան, Սովետական գրող, 1986, 464 էջ:

տը բեմադրեց «Խուարես եւ Մաքսիմիլիան» պիեսը: Տասնամյակի վերջում Վերֆելը դարձել էր գերմանական եւ ավստրիական գրականության ամենակարեւոր եւ անվանի գրողներից եւ արժանի մեկ լիարժեք քննադատական կենսագրության:

1930 թ. Մեծ Բրիտանիայից կառավարվող Պաղեստին ճանապարհորդությունը եւ Երուսաղեմում հայ փախստականների համայնքի հետ Վերֆելի հանդիպումը ոգեշնչեցին նրան գրելու «Մուսա լեռան քառասուն օրը» վեպը[2], որը համաշխարհային ուշադրության արժանացրեց հայերի՝ Օսմանյան կառավարության իրականացրած ցեղասպանությունը: Վերֆելն այս թեմայով դասախոսություններ է կարդացել ամբողջ Գերմանիայում: Նացիստական «Das Schwarze Korps» («Սեւ կորպուսը») թերթը նրան մեղադրեց որպես «հայերի դեմ իրականացված ենթադրյալ թուրքական սարսափների» քարոզիչ: Նույն թերթը, ակնարկելով հայերի եւ ավելի ուշ հրեաների ցեղասպանության միջեւ կապի մասին, դատապարտեց «Ամերիկայի հրեաներին՝ ԱՄՆ-ում Վերֆելի գրքի վաճառքը խթանելու համար»[3]: Ֆրանց Վերֆելն իր վեպում օգտագործել է բազմաթիվ ապացույցներ՝ նախապես ուսումնասիրելով հայերի պատմությունը, կրոնը եւ մշակույթը: «Մուսա լեռան քառասուն օրը» [4] մեծ հաջողություն է ունեցել ընթերցողների շրջանում, եւ 1934 թ. վեպն արժանացել է «Տարվա լավագույն վեպ» միջազգային մրցանակին, իսկ 1935 թ. թարգմանվել 24 լեզուներով եւ առա-

---

[2] Պարույր Միքայելյանի արեւելահայերեն թարգմանությամբ Երեւանում առաջին անգամ լույս է տեսել 1964 թ., 50 հազար տպաքանակով (Ֆ. Վերֆել, Մուսա լեռան քառասուն օրը, գերմ. թարգմ.՝ Պ. Միքայելյան, առաջաբ.՝ էդ. Թոփչյան, խմբ.՝ Մ. Հ. Դավթյան, նկ.՝ Ռ. Նանուշյան, Երեւան, Հայպետհրատ, 1964, 886 էջ): Բացի այս հրատարակությունից՝ վեպը տպվել է 1935 թ., Սոֆիայում, իսկ 1984-ին՝ Անթիլիասում (Բաբկեն Փափազյանի՝ ֆրանսերենից հայերեն կատարած թարգմանությունն է, որի առաջաբանը գրել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Երկրորդը):

[3] Տե՛ս Robert Fisk, The Great War for Civilisation: The Conquest of the Middle East, (New York: Knopf, *2006), 231:*

[4] Վեպի վերնագրում շեշտվում է 40, այլ ոչ թե 53 օր, որքան որ տեւեց Մուսա լեռ նահանջած հայերի հակաթուրքական ապստամբությունը մինչեւ ֆրանսիական ռազմանավերի ժամանելը: Վեպում կան մի շարք հղումներ Աստվածաշնչում նկարագրված կարեւոր իրադարձությունների, որոնք կապված են 40 թվի հետ: 40 թիվը Աստվածաշնչում ունի հատուկ խորհրդանիշ: Նոյի ջրհեղեղը տեւեց 40 օր ու գիշեր: Իսրայելի ժողովուրդն ստիպված եղավ 40 օր թափառել անապատում՝ նախքան Աստծու խոստացված երկիրը մտնելը: Մովսեսը 40 օր ու գիշեր ծոմ պահեց Սինա լեռան վրա՝ նախքան Աստծու 10 պատվիրաններով տախտակները ստանալը: Հիսուսը Հորդանանում մկրտվելուց հետո 40 օր ծոմ պահեց անապատում: Հետեւաբար, Վերֆելը հիմնվեց հենց այս թվի վրա, որն ունի խորհրդանշական իմաստ թե՛ Հին Կտակարանում, թե՛ Նոր Կտակարանում:

ջին չորս ամիսների ընթացքում ԱՄՆ-ում վաճառվել է ավելի քան 125 հազար օրինակով։ Լեւոն-Կարապետ Պալճյանը, որը հետագայում պիտի վերանվանվեր Վազգեն Ա Ամենայն հայոց կաթողիկոս, 1940 թ. իր ծննդավայր Բուխարեստում լույս է ընծայել «Մուսա լերան հայերը Ֆրանց Վերֆելի վէպին մէջ» աշխատությունը[5]։

Գրական տեսանկյունից Վերֆելի վեպը առաջացրեց հիմնականում հիացմունքի արձագանքներ, բայց այն առիթ տվեց նաեւ որոշ քննադատական կարծիքների։ Վեպի առաջին գրախոսներից մեկը՝ Լուի Քրոնենբերգերը, դեռեւս 1934 թ.՝ վեպի հրատարակությունից մեկ տարի անց, համարել է, որ Վերֆելի վեպը «դրամատիկ պատմություն» է՝ համեմատած այլ տպավորիչ եւ հայտնի վեպերի, փիլիսոփայական առակների հետ, ինչպիսիք են Թոմաս Մանի «Կախարդական լեռը», Ջեյմս Ջոյսի «Ուլիսեսը» կամ Մարսել Պրուստի «Կորուսյալ ժամանակի որոնումներում»-ը։ Քրոնենբերգերը շեշտել է, որ վերնագրի առումով Վերֆելի վեպը եւ վերը նշված երեք գլուխգործոցները հավասար են։ Քրոնենբերգերը գնահատում էր հատկապես Վերֆելի բնագրի «հերոսական համամասնությունը», «քանի որ դա պատմություն է մարդկանց մասին, որոնք ընդունում են հերոսների ճակատագիրը եւ գերմարդկանց առաջադրանքը», իսկ վեպն ինքնին «սոցիալական փաստաթուղթ» է[6]։

Վեպի մեկ այլ վերլուծաբան՝ Օլիվեր Քոնսը, գիրքը դիտարկում է մարդու իրավունքների ոտնահարման տեսանկյունից՝ դա ներկայացնելով որպես վեպի կենտրոնական խաղադրույք։ Քոնսը դա արդարացնում է այսպես՝ ընդգծելով այն փաստը, որ այդ երեւույթը մինչ օրս քաղաքական հետեւանքներ է ունեցել. 1. «այն ոչ միայն որպես վեպ մարդու իրավունքների համակարգված խախտումների մասին է, այլեւ, առաջին հերթին, որպես քաղաքական միջամտություն՝ վեպի տեսքով, որոշակի մարդկանց խմբի՝ այս դեպքում՝ հայերի հիմնարար իրավունքների անունից»։ 2. «Հայոց ցեղասպանությունը «հաջողված» էր ոչ միայն նրանով, որ այսօր Թուրքիայում գրեթե ոչ մի հայ չի մնացել. դրա «հաջողությունը» ընդգծվում է նրանով, որ զանգվածային սպանությունը 1919 թվականից մինչեւ այսօր հետեւողականորեն ժխտել են թուրքական բոլոր կառավարությունները, եւ

---

[5] Կ. Պալճեան, *Մուսա լերան հայերը Ֆրանց Վերֆելի վէպին մէջ (վերլուծական փորձ), Պուքրէշ, տպ. «Հայ մամուլ», 1940, 62 էջ։*

[6] *Տե՛ս* Louis Kronenberger, "Franz Werfel's Heroic Novel: A Dramatic Narrative That Has Stirring Emotional Force", New York Times Book Review, December *2, 1934, էջ 32։*

միայն քիչ ուշադրության է արժանացել արտասահմանում: 3. «....«Մուսա լեռան քառասուն օրը» ընթերցումը կհանգեցնի այն թեզին, որ Վերֆելի վեպը կառուցված է մարդու իրավունքների գեղագիտությամբ: Սա նշանակում է, որ հայերն այստեղ ներկայացված են ոչ միայն որպես ցեղասպանության զոհեր, այլեւ միաժամանակ որպես «Բիլդունգսրոման»-ի (թարգմ.՝ «Հասունացնող վեպ»-ի, այսինքն՝ ինքնագիտակցության ձեւավորող գործընթացի– հեղ.) անհատներ (սուբյեկտ), որտեղ նրանք զարգանում են որպես «քաղաքացիներ» եւ, հետեւաբար, մարդու իրավունքների օրինական կրողներ»[7]:

*1930-ականների կեսերին Վերֆելը հրատարակեց պիեսներ աստվածաշնչյան թեմաներով. հիշարժաններից է «*Der Weg der Verheissung*» (1935 թ., թարգմանաբար՝ «Խոստացված ուղին») երաժշտական դրաման: Իսկ արդեն 1937 թ. «*Hoeret die Stimme*» («Լսե՛ք ձայնը») վեպում Վերֆելը պաշտպանեց «սրտի կրոնը»՝ ի տարբերություն ֆորմալիստական նվիրվածության, որը հանգեցրեց հին Իսրայելի կործանմանը:*

«Լսե՛ք ձայնը» (կամ «Երեմիա») վեպն առաջին անգամ հրատարակվել է 1937 թ.[8]: Այն պատմում է Երեմիա մարգարեի կյանքի դրամատիկ պատմությունը՝ նրա կանչից մինչեւ եգիպտական աքսորը: Վեպը լայն ժողովրդականություն չի վայելել՝ Գերմանական Ռայխում հրեա հեղինակի հրատարակման արգելքի պատճառով: Վերֆելն այս վեպի վրա աշխատել է 14 ամիս, օրական 12 ժամ: Իր արտաքսումից կարճ ժամանակ առաջ նա նվիրվել է հրեական աքսորի թեմային: 1936 թ. Վերֆելն ամբողջությամբ արգելվեց Գերմանիայում, եւ վեպը չէր կարող ազատորեն գրախոսվել նաեւ Ավստրիայում: Հետեւաբար, «Երեմիա» վեպը բազմաքանակ հրատարակություններ չունեցավ, «ինչպես կարծում էր Վերֆելը մինչեւ 1938 թվականի ամռանը. այդ ժամանակ 6200 օրինակ մնացել էր չվաճառված»[9]:

Վեպի միջուկը շրջանակված է ժամանակակից պատմությամբ: Դրա կենտրոնում է հեղինակ Քլեյթոն Ջիվսը՝ Վերֆելի այլընտրանքային էգոն:

---

[7] *Տե՛ս* Oliver Kohns, "The Aesthetics of Human Rights in Franz Werfel's The Forty Days of Musa Dagh" in David Kim and Susanne Kaul (eds.), Imagining Human Rights, De Gruyter, *2015, էջ 157–158:*

[8] Ֆրանց Վերֆել, *Երեմիա. Լսե՛ք ձայնը (գերմաներենից թարգմանեց Հակոբ արքեպիսկոպոս Գլնճյանը), Երեւան, 2022:*

[9] *Տե՛ս* Friedrich Buchmayr, Stufen der Entfremdung. Franz Werfels letzte Jahre in Österreich. In: Chilufim. Nr. *2, 2007, էջ 51–97:*

Երուսաղեմի տաճար այցելության ժամանակ նա հիացմունքով վերապրում է Երեմիայի գրքի իրադարձությունները։ Վեպի գործողությունների հիմնական մասը տեղի է ունենում Ք. ա. է.–Զ. դդ.։ Երեմիա մարգարեի կոչումն ու դրաման զարգանում են եւ գագաթնակետին հասնում Երուսաղեմի առաջին Տաճարի ավերումով։ Վերջապես, մարգարեն կամավոր հետեւում է հրեա ժողովրդին դեպի Եգիպտոս։

Վերֆելի երեք կենսագրական վեպերից «Երեմիա»-ն մնում է ամենաքիչ ճանաչվածը. այն լայն ճանաչում չի ստացել ո՛չ հրատարակման պահին, ո՛չ էլ հետագայում։ Այնուամենայնիվ, Վոլֆգանգ Պաուլսենը Վերֆելին համարում է «իր վիպական աշխատանքի գագաթնակետին» այս գրքում։ Պետեր Ստեֆան Յունգը վեպը համարում է «Ֆրանց Վերֆելի երբեւէ գրած ամենահամոզիչ ստեղծագործությունը», մինչդեռ հեղինակը ինքը այն համարում է «իր բոլոր գրքերից ամենածանրակշիռն ու բարդը»[10]։ Գեորգ Ֆիշերի խոսքերով՝ վեպը «բնօրինակ գիրքը թարգմանում է առավելագույն հավատարմությամբ եւ համակրանքով՝ դարձնելով այն ամբողջական եւ գրավիչ պատմություն. այն երբեւէ գրված աստվածաշնչյան նյութի ամենահաջողակ հարմարեցումներից (ադապտացիա) մեկն է»։

Վերֆելի ստեղծագործությունը Ե՛ւ աստվածաշնչյան վեպ է, Ե՛ւ ամենամեծ խտության եւ խորության հոգեւոր գրականություն։ Այն հեղինակի ամենահրեական գիրքն է։

Վերֆելը 1933 թ. ստիպված եղավ լքելու Պրուսիայի Արվեստի ակադեմիան։ Նրա գրքերը նացիստներն այրեցին։ Վերֆելը լքեց Ավստրիան 1938 թ. եւ մեկնեց Ֆրանսիա, որտեղ նրանք ապրում էին Մարսելի մոտ գտնվող ձկնորսական գյուղում։ Այդ ժամանակ նրանց տուն այցելողների թվում էին Բերտոլտ Բրեխտը[11] եւ Թոմաս Մանը[12]։ Երկրորդ համաշխար-

---

[10] *Տե՛ս* Georg Fischer, Ein besonderer biblischer Roman: Franz Werfels „HÖret die Stimme“. In: Die Bibel in der Kunst / Bible in the Arts. Nr. *5, 2021*։

[11] Եւգենի Բերտոլդ Ֆրիդրիխ Բրեխտը *(1898–1956)*՝ հայտնի որպես Բերտոլդ Բրեխտ եւ Բերտ Բրեխտ, գերմանացի թատերագետ, դրամատուրգ եւ բանաստեղծ էր։ Երբ նացիստները իշխանության եկան Գերմանիայում 1933 թ., Բրեխտը փախավ իր հայրենի երկրից՝ սկզբում Սկանդինավիա, ապա երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ նա տեղափոխվեց Հարավային Կալիֆոռնիա, որտեղ հաստատվեց որպես բեմագիր։

[12] Թոմաս Մանը *(1875–1955)* գերմանացի վիպասան, պատմվածքների հեղինակ, սոցիալական քննադատ, ակնարկագիր եւ 1929 թ. գրականության «Նոբելյան» մրցանակի դափնեկիր էր։ Նրա խիստ խորհրդանշական եւ երգիծական էպիկական վեպերն ու նովելները հայտնի են արվեստագետի եւ մտավորականի հոգեբանության մեջ իրենց թողած խորությամբ։

հային պատերազմի ժամանակ Գերմանիայի՝ Ֆրանսիա ներխուժումից եւ օկուպացիայից, ինչպես նաեւ Ֆրանսիացի հրեաների նացիստական համակենտրոնացման ճամբարներ արտաքսումից հետո Վերֆելը կրկին ստիպված եղավ փախչել: Վարիան Ֆրայի եւ Մարսելի արտակարգ իրավիճակների փրկարարական կոմիտեի օգնությամբ նա եւ կինը հազիվ փրկվեցին նացիստական վարչակարգից՝ հինգ շաբաթ ապաստան գտնելով Լուրդի ուխտագնացության քաղաքում: Նա նաեւ մեծ օգնություն ստացավ սրբավայրը սպասարկող կաթոլիկ միաբանություններից: Նա խոստացավ գրել այդ փորձառության մասին եւ հաստատվելով Միացյալ Նահանգներում՝ 1941 թ. հրատարակեց «Բեռնադետի երգը» («Das Lied von Bernadette»*) գիրքը[13], որը կոշտ կազմով հրատարակման առաջին ութ ամսվա ընթացքում վաճառվեց կես միլիոն օրինակով եւ հենք դարձավ «Օսկար» մրցանակի արժանացած հոլիվուդյան ֆիլմի համար:*

Ֆրայը եւ ունիթոր Ուեյթհիլ Շարփը կազմակերպեցին Պիրենեյների վրայով գաղտնի անցում ոտքով: Հուստուս Ռոզենբերգի օգնությամբ նրանք գնացին Մադրիդ, ապա շարունակեցին ճանապարհը դեպի Պորտուգալիա: Նրանք մնացին Մոնտե Էշտորիլում՝ «Գրանդե Հոթել Դ'Իտալիա»-ում, 1940 թ. սեպտեմբերի 8-ից հոկտեմբերի 4-ը: Նույն օրը, երբ դուրս գրվեցին, նրանք նստեցին «Ս. Ս. Նեա Հելլաս» նավը՝ ուղեւորվելով դեպի Նյու Յորք, որտեղ ժամանեցին հոկտեմբերի 13-ին:

Վերֆելը եւ նրա ընտանիքը հաստատվեցին Լոս Անջելեսում, որտեղ նրանք հանդիպեցին գերմանացի եւ ավստրիացի այլ արտագաղթողների, ինչպիսիք էին Մանը, Ռեյնհարդտը եւ էրիխ Վոլֆգանգ Կորնգոլդը: Հարավային Կալիֆոռնիայում Վերֆելը գրեց իր վերջին պիեսը՝ «Յակոբովսկին եւ գնդապետը» («Jacobowsky und der Oberst»*), որը 1958 թ. վերածվեց «Ես եւ գնդապետը» կատակերգական ֆիլմի: Դիզելհեր Կլեբեի «Յակոբովսկին եւ գնդապետը» (1965) օպերան նույնպես գրվել է այս պիեսի վրա: Մահից առաջ նա ավարտեց իր վերջին՝ փիլիսոփայական ճամփորդություն հիշեցնող վեպի՝ «Չծնվածների աստղը» (*«Stern der Ungeborenen»*) առաջին սեւագիրը, որը հրատարակվեց հետմահու՝ 1946 թ.:*

Երբ Ադոլֆ Հիտլերն իշխանության եկավ 1933 թ., Մանը փախավ Շվեյցարիա, իսկ երբ 1939 թ. սկսվեց երկրորդ համաշխարհային պատերազմը, նա տեղափոխվեց Միացյալ Նահանգներ, ապա 1952 թ. վերադարձավ Շվեյցարիա:

[13] Ֆ. Վերֆել, Բեռնատէթի երգը, թարգմանեց՝ Վարդան Վրդ. Թէքէեան, Պէյրութ, տպ. Հայ կաթողիկէ, 1954, 329 էջ:

*Արեւմտեան Հոլիվուդի Սուրբ Վիկտոր ծխական համայնքի քահանա Ջոն Ջ. Դեւլինի խոսքերով՝ գերմանացի քահանան մկրտել է Ֆրանց Վերֆելին մահվան մահճում։ Սակայն այդ հարցը չի հրապարակվել՝ հաշվի առնելով նրա հրեա հոր եւ մոր շահերը։ Ֆրանց Վերֆելը մահացել է սրտի անբավարարութիւնից Լոս Անջելեսում 1945 թ. օգոստոսի 26-ին եւ թաղվել է Լոս Անջելեսի Արեւմտեան Ադամս թաղամասի Ռոզդեյլ գերեզմանատանը։ Սակայն նրա մարմինը 1975 թ. վերադարձվել է Վիեննայի Կենտրոնական գերեզմանատուն (*Wiener Zentralfriedhof*)։*

ԱՄՓՈՓՈՒՄ

Ֆրանց Վերֆելը 20-րդ դարի եւրոպական գրականութեան ակնառու դեմքերից է, որի կենսագրական փորձառութիւնն ու ժամանակի պատմական իրադարձութիւնները սերտորեն միահիւսւում են նրա գրական մտածողութեան մեջ։ Նրա ստեղծագործական ուղին ձեւաւորվել է համաշխարհային պատերազմների, մշակութային ճգնաժամերի եւ տարագրութեան պայմաններում, որոնք իրենց անմիջական արտացոլումն են գտել նրա երկերում։ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին՝ Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխութիւնից հետո, Արեւելեան Եւրոպայում լայն տարածում գտան բռնութիւններն ու ջարդերը, համաշխարհային համավարակը եւ Եւրոպայի քարտեզի կտրուկ վերաձեւափոխումը. պետութիւնները, ինստիտուտներն ու նորմերը, որոնք տիրապետող էին տասնամեակներ կամ նոյնիսկ դարեր, կամ ցնցվեցին, կամ էլ ամբողջութեամբ վերացան։

Այս պատմական ցնցումները խոր ազդեցութիւն ունեցան մարդկային մտածողութեան եւ արժէքային համակարգի վրա։ Այդ շրջանում բնական գիտութիւնների առաջընթացը, ըստ Վերֆելի, մարդկութիւնից խլեց Ehrfurcht *(հիացմունք, երկիւղածութիւն) զարգացնելու կարողութիւնը, ինչը հանգեցրեց հավատքի թուլացման եւ աշխարհի սթափ, երբեմն նաեւ դատարկ ընկալման՝ առանց առեղծվածի կամ ավելի խոր իմաստի որոնման[14]։ Սակայն այս* naturalistischer Nihilismus-*ը (բնական նիհիլիզմը) չի կա-*

---

[14] *Տե՛ս* Franz Werfel, “Interview über den Gottesglauben”; Zwischen Oben und Unten, ed. Adolf D. Klarmann (München: Langen-Müller, *1975), 610. Երբ նրան հարցնում են, թե ինչու է իր ժամանակի մարդկութիւնն այդքան հեռու կրոնից, նա չի խոսում գիտութեան մասին, որպես այդպիսին, այլ ասում է, որ հեռավորութիւնն առաջացել է 19-րդ դարում բնական գիտութիւնների ոլորտում արձանագրված նվաճումների հետեւանքով։*

րող լինել կայուն վիճակ, քանի որ մարդը չի կարող երկար ապրել ոչնչի եւ անիմաստության պայմաններում: Այդ պատճառով Վերֆելը նկատում է, որ իր ժամանակակիցներից շատերը ձգտում էին լրացնել իրենց հոգեւոր դատարկությունը Ersatzreligionen-*ով (այլընտրանքային կրոններով), որոնցից առավել տարածված էին կոմունիզմն ու ֆաշիզմը:*

Վերֆելի գրականությունը կենտրոնանում է մարդու ներաշխարհի բարդության, բարոյական ընտրության, հավատքի եւ գոյաբանական հարցերի քննության վրա՝ փորձելով ըմբռնել մարդկային տառապանքի իմաստն ու սահմանները: Նրա գործերը կարեւոր են ոչ միայն գեղարվեստական արժեքի, այլեւ պատմամշակութային վկայության տեսանկյունից: Դրանցում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում հայ ժողովրդի ողբերգության թեման, որը ներկայացվում է ոչ միայն որպես որոշակի պատմական իրողություն, այլեւ որպես համամարդկային նշանակություն ունեցող իրադարձություն: Այստեղ Վերֆելի ստեղծագործությունը ձեռք է բերում բարոյափիլիսոփայական ընդգծված հնչեղություն՝ վերածվելով հիշողության, պատասխանատվության եւ մարդկային համերաշխության մասին խորհելու կոչի:

Վերֆելի ստեղծագործական ճանապարհի ընթացքում կարելի է հետեւել նաեւ նրա կրոնական հայացքների զարգացմանը: Նա պատկերում է մի կողմից հզոր Աստծուն, որը կարող է որոշել մարդկանց ճակատագիրը, մյուս կողմից՝ թույլ Աստծուն, որը զղջում է իր «թերությունների եւ թուլության» համար: Ժամանակի ընթացքում այդ պատկերացումը փոխակերպվում է «նոր մարդու» գաղափարով, որը կարող է փրկություն գտնել զղջման միջոցով: Սակայն, անկախ այս զարգացումներից, Վերֆելը կրկին վերադառնում է հավատքի գաղափարին՝ ընդգծելով, որ մարդը կարող է պահպանել իր հոգու մաքրությունը նույնիսկ դաժանությամբ եւ անարդարությամբ լի աշխարհում:

Ամփոփելով՝ Ֆրանց Վերֆելի գրական ժառանգությունը հանդես է գալիս որպես գեղարվեստական եւ գաղափարական ամբողջություն, որտեղ ներդաշնակորեն միավորվում են պատմական գիտակցությունը, հոգեւոր որոնումները եւ բարոյական պատասխանատվության ընկալումը: Նրա ստեղծագործություններում պատմությունը ներկայանում է ոչ միայն որպես անցյալի նկարագրություն, այլ նաեւ որպես ներկային եւ ապագային ուղղված զգուշացում: Այսպիսով, Վերֆելի երկերը ձեւավորում են մի միջավայր, որտեղ գեղարվեստական պատկերավորումը ծառայում է ոչ

միայն գեղագիտական նպատակների, այլեւ դառնում է բարոյափիլիսոփայական քննութ յան միջոց: Մարմնավորելով իր հավատը մարդու նկատմամբ՝ հեղինակն արտահայտում է քսաներորդ դարի հակասական բնույթը, դժվար ժամանակների վախերն ու հույսերը:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Ֆրանց Վերֆել, գրական արտահայտչապաշտություն (էքսպրեսիոնիզմ), «նոր մարդու» գրական հայեցակարգ, գոյաբանական ճգնաժամ, հոգեւոր որոնումներ, պատմական հիշողություն, Հայոց ցեղասպանություն

РЕЗЮМЕ

Литературное наследие выдающегося писателя Франца Верфеля (1890–1945) представляет собой художественно-идеологическое целое, в котором органично сочетаются историческое сознание, духовные поиски и чувство нравственной ответственности автора. В его произведениях история предстает не только как осмысление прошлого, но и как предупреждение о будущем. Тем самым творчество Верфеля создает художественное пространство, где образность служит не только эстетическим целям, но и становится средством нравственного и философского осмысления действительности. Утверждая веру в достоинство человека, писатель раскрывает противоречивую природу XX века, передавая страхи, трагедии и надежды своей эпохи.

SUMMARY

The literary legacy of the outstanding writer Franz Werfel (1890–1945) constitutes an artistic and ideological complex, in which historical consciousness, spiritual quests, and a sense of moral responsibility are harmoniously combined. In his works, history is presented not only as a description of the past, but also as a warning for the present and the future. Thus, Werfel's works create a space where artistic imagery serves not only aesthetic purposes but also becomes a tool for moral and philosophical analysis. By embodying his faith in humanity, the author succeeded in revealing the contradictory nature of the 20th century, as well as the fears and hopes of those difficult times.

Doi: 10.56 737/2953-7843-2026.04-99

ՆԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
«Քրիստոնյա Հայաստան»-ի գլխավոր խմբագիր

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ԼԵՒՈՆ-ՋԱՎԵՆ ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆԻ ԿՅԱՆՔՈՒՄ («ՁԵՋ ԵՄ ԴԻՄՈՒՄ, ՏԻԿԻՆՆԵՐ ԵՒ ՊԱՐՈՆՆԵՐ» ՎԵՊԸ)

Սկիզբը՝ թիվ Դ.

4. Թրաֆիֆինգ՝ բռնի վաճառ եւ ստրկացում

Ստրկության շուկաներում հայ որբերի վաճառքն առանձին ողբերգություն է Հայոց ցեղասպանության պատմության մեջ. «Տղաներիս ցուցադրության հանեցին կառավարական շենի առջեւ, մի քանի ժանդարմի հսկողության տակ, եւ հաղարի խանութպաններն ու շրջանի գյուղացիներն սկսեցին սլմտալ մեր մեջ՝ աչքի անցկացնելով մեզ՝ ոչխար գնողների սուր, գնահատող նայվածքներով.... Սա ստուկների շուկա էր գերի վերցված թշնամի երեխաների, միայն թե ոչ մի շահ չէինք բերում, եւ որեւէ իսլամ կարող էր գալ ու վերցնել ուզած տղային» *(119)։*

Այն հայ երեխաները, որոնք չէին վաճառվում, դարձյալ աքսորվում էին մահվան։ Ընտրությունը կատարվում էր՝ ըստ առողջական վիճակի եւ արտաքին տվյալների։ Դա մի այլ կարգի հոգեկան վնասվածք էր երեխաների համար, ինքնիրացման դաժան մի փորձություն, երբ գնվելը փրկություն է, չվաճառվելը՝ մահ. «Երեկոյան Սիմոնն ու ես վերադարձանք խան, մի խան ուրիշ անբախտ տղաների հետ։ Հաջորդ օրը մի ուրիշ առիթ էր ընծայվելու մեզ, եւ ասացին՝ ովքեր իսլամ խնամակալներ չեն գտնի մինչեւ ժամը չորսը, տարագրվելու են։ Բայց ես գիտեի՝ մենք հասել էինք ճամփի վերջը, եւ այլեւս տարագրություն չկար մեզ համար. պարզապես խաղից դուրս կհանեն մեզ ու կսպանեն» *(120)։*

Թերարժեքության հոգեկան վնասվածքն ու սպանվելու սպառնալիքը փոխլրացաբար լլկում են վաճառքի հանված եւ չգնված հայ երեխաներին։ Նուրբ դիտողականությամբ եւ առարկայական պատկերայնությամբ գրողը վերհիշում է այդ դաժան պահերի մանրամասնությունները, իրենց

հոգեկան խառը ապրումները՝ ցավ, ամոթ, տագնապ ու վախ, երբ թուրք կամ քուրդ եւ արաբ անվճար գնորդներին բոլորովին չի հուզում, որ եթե չգնեն հայ երեխաներին, նրանց կսպանեն. «Ոչ ոք չէր ուզում ինձ: Վեց-յոթ հոգի էինք մնացել՝ մեկ հատիկ ժանդարմի հսկողության տակ: Մեռժված ընկերներս լուռ սպասում էին ճակատագրին: Ուզում էի գոռալ՝ «Մի բան անեմ: Նրանք կսպանեն մեզ....»: Բայց համրացել էի: Կարծես ամեն մեկս ամաչում էինք, հատկապես մի տղա, որի մեկ աչքը կույր էր: Մեր պատյանի մեջ էինք խշվել շատ ամուր, գնդասեղով խոցված խխունջի պես: Մենք մեռժվածներ էինք, ստուկների այս շուկայի ավելցուկ ապրանքները....» *(121)։*

Որբությունը եւ ընտանիքի երեխաների բռնի բաժանումը վեպում պատկերված են գեղարվեստական խոր տպավորչականությամբ: Ահա երկու փոքրիկ եղբայրների վաճառքից մի դրվագ, որտեղ տեսանելի եւ զգալի են ճարահատյալ բաժանման եւ կորստի ցավը, անորոշության տագնապն ու հուսահատությունը. «Սրճարանում աշխատեցնելու համար մի բիչ մեծ տղա փնտրող մի «կահվեջի» ջոկեց Միխայելին, որ տասմեկ տարեկան էր, լուրջ եւ ուշիմ..... Սիմոնը հազիվ ութ տարեկան էր, անթերի ձվաձեւ դեմք, փայլուն կարմիր այտեր ու մտացի աչքեր ուներ: Բոլոր կանայք կանգ էին առնում՝ ճիաձալու, եւ բոլորն էլ ուզում էին որդեգրել, բայց ինքը չէր ուզում գնալ առանց ինձ:

– Մենք եղբայրներ ենք,– կրկնում էի ես,– բաժանվել չենք կարող:

Բարկացել էի Միխայելի դեմ՝ ձրան լրելու համար: Ավագ եղբայրն այդպես չպիտի վարվեր....» *(120)։*

Ի վերջո, վերջին վաճառքի փուլում հորաքրոջ տղային մահվան աքսորից փրկելու համար Ջավենը հայտնում է, որ հարազատ եղբայրներ չեն, այլ զարմիկներ, եւ հոգեբանորեն բաց թողնում նրան։

5. Բռնաբարություններ

Հայոց ցեղասպանության ժամանակ հայ երեխաների հանդեպ գործադրված բռնի ուժի եւ ոճրագործության դրսեւորումներից են նաեւ մասսայական եւ առանձին բռնաբարությունները, աղջիկ երեխաներին սարկության շուկաներում մարմնավաճառության ենթարկելը: Վեպում հիշողություններ կան այդ մասին աքսորի ճանապարհի դրվագներում, ինչպես՝ «Նրանք աչքի անցկացրին կանանց ու աղջիկներին՝ վավաշոտ, գնահատող ձայվածքներով.... Ժանդարմները պարզապես բիրտ ուժով տանում էին իրենց ընտրած աղջիկներին ու բռնաբարում էին.... Այս խեղճ-

շությունը տեւեց ողջ գիշեր: Իրենց զոհերին բաց թողեցին միայն առավոտյան, ու մեր սենյակի երկու աղջիկները լալով ու դեմքներն ամոթից թաքցնելով ետ եկան» *(115)։ Մանանակի պատմությունները վեպում ընդհանրացնում են երեւույթի ամբողջ ողբերգականությունը։ Հայ աղջիկներին թուրքերն ընտրում էին նաեւ ամուսնության նպատակով՝ բռնի ուժով կնության առնելով նրանց։*

6. Անապաստանություն եւ անհանգրվանություն

Թափառումների, անապաստանության, անօրինակ զրկանքների ու տառապանքների այն ճանապարհը, որով անցել է վեպի մանուկ հերոսը, պատկերված է պատմողական արձակի հետեւողականությամբ, բայց եւ գեղարվեստական նկարագրականության բարձր մակարդակով, հոգեբանական ինքնարտահայտման խոր անկեղծությամբ ու երեւույթների սուր դիտողականությամբ։ Պատմագեղարվեստական եւ հոգեվերլուծական պատումի ներդաշն համակցումը, առհասարակ, Սյուրմելյանի վեպի գեղարվեստական արժանիքներից է։ Այսինքն՝ ցեղասպանության ողբերգությունը՝ իր բոլոր պարունակներով, «Ձեզ եմ դիմում, տիկիններ եւ պարոններ» վեպում պատկերվում է նաեւ հոգեկան ոլորտում, երեխայի ընկալումների եւ ապրումների անհատական տիրույթում։

Գոյության փրկության համար փախուստը մի վայրից մյուսը, մի թաքստոցից մի այլ թաքստոց վեպի հերոսի կյանքում շարունակվում են տարիներով՝ մանկությունից մինչեւ հասուն պատանեկություն։ Ահա նա ծննդավայրում է՝ Տրապիզոնում, որ ռուսներն ազատագրել են թուրքերից, եւ վերջապես կարող է հանգիստ առնել հայրական տանը։ Սակայն հայրական տունը դատարկ էր, կողոպտված, անկենդան, հայրենի քաղաքում այլեւս հարազատներ չկային, հայությունն՝ նույնպես։ Խորապես հուզիչ են, ուղղակի ցնցող՝ ծանր փորձություններով անցած երեխայի՝ հայրենի տուն վերադարձի ապրումները. «Հետզհետե ավելի արագ էի վազում ու միաժամանակ աղոթում՝ պաղատելով Աստծուն՝ մի հրաշք կատարեր, ու ես մորս գտնեի տանը՝ խոհանոցում..... Շտապեցի վերնահարկ, ննջասենյակները, պատշգամբ, լողասենյակ՝ մոլեգնորեն որոնելով մի բան, որ պահեի որպես հիշատակ մեր տնից, բայց ոչինչ չգտա։ Ես համեցա մայրիկի ննջասենյակի դռանն ու գգվեցի ապակե գնդաձեւ բռնակը՝ մտածելով՝ մայրիկի ձեռքերն էին հպվել։ Ապա ճանկռեցի պատերը, ուզեցի գլուխս զարնել դրանց՝ անձկությունից ու կատա-

ղությունից: Լերկ, դատարկ սենյակներն ինձ էին նայում թախծոտ, սեւեռուն, ոսկրե հայացքով՝ գերեզմանային լռության մեջ» *(153, 156–157)։*

Պատանի Ջավենի թափառումներն ու անհանգրվանությունը շարունակվում են. Բաթում, նորից Տրապիզոն, որտեղ այս անգամ գտնում է եղբորն ու երկու քույրերին, որոնք իրենց կյանքը փրկած հույն բժշկի ընտանիքի մասն էին դարձել եւ «շատ ավելի հույնի, քան հայի տպավորություն թողեցին» *(174)։ Բայց հենց այդ ժամանակ՝* «....Ռուսական հեղափոխությունը մրրիկի պես հարվածեց Տրապիզոնը: Մոռեխների ամպերի պես ռուս զինվորները լիում էին ճակատը.... Մենք պետք է նորից փախչեինք....» *(186–187)։*

7. Ոբություն

Որբության դառնությունը, չխելագարվելու, իրականության հետ կապը չկորցնելու զգացումները ցեղասպանության ենթարկված հայ երեխաների ողբերգությունը մարմնավորող փոքրիկ Ջավենի տառապանքների ու դիմադրության հոգեկան փուլերից են: Ահա կորստի վշտի եւ հոգեբանական հակազդեցության ու դիմադրության մի պահ, երբ ծննդավայրի եկեղեցու հատակին թափված լուսանկարների մեջ նա գտնում է հայրական տնից մնացած միակ մասունքը՝ իրենց ընտանեկան խմբանկարը. «....Դառնորեն լաց եղա՝ առանց արցունքի: Ավելի ուժեղ էի այդ օրերին: Ի վերջո գտել էի մի բան, որ ինձ կապում էր իմ երազանման անցյալին: Ի վերջո բացահայտ ապացույց ունեի իմ ձեռքին՝ համոզելու ինձ, թե միշտ մենակ, միշտ որբ չէի եղել....» *(115)։*

Վեպում հոգեբանորեն շատ ծանր են ցեղասպանության դժոխքի պարունակներով անցած եւ մի կերպ ողջ մնացած, բայց եւ անտիրության մատնված որբերի պատկերները: Ահավասիկ ցրտից, սովից ու համաճարակներից մեռնող հայ երեխաների սրտակեղեք պատկերներից մեկը՝ լուսանկարչական ճշգրտությամբ ու վավերականությամբ. «Ղարաքիլիսան համեմատաբար խոշոր բաղամ էր՝ մոտ տասներկու հազար բնակիչով. երկաթգծի վրա լինելով՝ ավերյալ պատերազմական գոտուց իրեն էր ձգել անտուն երեխաների: Նրանք մեռնում էին փողոցներում բաղցից ու ցրտից: Գետնախնձորի մի պարկ բաշած վրաները՝ պառկում էին մայթերի ձյան վրա, վնգստալով ու դողալով՝ մոլորված, վիրավոր շների պես, գիշեր-ցերեկ անընդհատ, մինչեւ վրա կհասներ բարեգութ մահը» *(231)։*

Որբերի ահասարսուռ պատկերները նրանց հոգեկան անասելի տառապանքի պատմության լուռ վկայություններ են: Ահա հոգեբանական տառապանքի մարմնացած պատկերներից մեկը. «Թորշոմած ծեր դեմքեր ունեին եւ ավելի շուտ կապկի էին նման, հան մարդ էակի, եւ դժվար էր ասել՝ տղա՞ էին, թե՞ աղջիկ: Ոչ ոք չէր խոսում նրանց հետ: Եւ ես ինձ հարց էի տալիս՝ կարո՞ղ էին խոսել արդյոք: Ունեի՞ն անուններ, գիտեի՞ն՝ որտեղից են.... Նրանց դեմքերն ու լացը հալածում էին ինձ» *(231)*:

Տարիներ հետո՝ Ամերիկայում վերջնականորեն հանգրվանելուց հետո, ամերիկյան ու հայկական իրականության ներքին զուգահեռականությունը դրամատիկ զգացողություններ է վերարթնացնում արդեն հասուն հերոսի մեջ, ցավատանջ վերապրումներ ու ինքնալլկող հուշեր. «Հիմա, առաջին անգամ իսկապես անտուն էի զգում ինձ: Հառաչում էի, երբ տեսնում էի իրենց տների առաջ խաղացող ամերիկացի երեխաների կամ գիշերով ականատես էի լինում ընտանեկան երջանիկ կյանքի անցքերի՝ լուսավոր պատուհանների ետեւ, մինչ միայնակ բայլում էի փողոցներով, հիվանդ՝ իմ միայնությունից ու հուշերից» *(284)*:

8. Վաղաժամ հասունացում եւ չապրված մանկություն

Սպանված մանկության եւ կորուսյալ աշխարհի կարոտացավը գրողի կյանքում անմոռաց է մնում մինչեւ վերջ: Վերստին մանկանալու, անխաթար մանկություն ապրելու փափագը շատ բան է ասում չապրած տարիների ու անվերադարձ կորուստների ողբերգության մասին. «Այնուհետեւ որոշեցի ես ոգի ի բոին, ինչ էլ պատահի, վերստին պիտի ապրեմ երեխայի պես, պիտի գնամ պառկեմ գյուղական մի հողակտորի վրա ու հոտոտեմ հողը, ֆիթս թաղեմ անուշ բույրի մեջ աճող խոտի.... Հետո պիտի վեր կենամ եւ պաղուկ խոտի վրա վազեմ բոբիկ ոտքերով, գրկեմ ծառերը, վաղուց կորցրած իմ սրտահատորների պես, եւ, տաբատս ոլորելով, անցնեմ առուն: Մի բանի ուռենիներ պիտի գտնեմ ու ոստերից սուլիչներ կտրեմ, թիթեռնիկներ ու լուսատիկներ հալածեմ ու հավաքեմ անանուն վայրի ծաղիկներ: Հետո պիտի իջնեմ ծով եւ ունկնդրեմ ալիքների ձայնը ու դիտեմ արշավը դեպի ափ՝ սպիտակ ձժույգների նման, թափահարվող բաշերով, ինչպես Տրապիզոնում....» *(301–302)*:

Կարոտի ալիքը հարանման հատվածներում թեւ է տալիս խոսքի զգացմունքային լիցքին ու գեղարվեստական մակարդակին՝ երեւան հանելով

գրողի հոգեկան պատմության վերակենդանացող մասերը, ցավից կպրացած ապրումների տրոփյունները:

9. Ինքնության՝ լեզվի, սովորույթների կորուստի դեմ՝ ծագումնաբանական հիշողություն

Հայոց ցեղասպանությունը վերապրած Զավենն այն երեխաներից է, որոնց հաջողվեց խուսափել թրքացումից, ազգային ինքնության հոգեւոր սպանդից: Վեպում շատ կարեւոր մտայնություն է ընտանիքի հիշողությունը՝ որպես ազգային ծագումնաբանության գիտակցություն: Ընտանիքի պատմությամբ խորհրդանշվում է ազգային պատմությունը, որի մի մասնիկն է գրողի գերդաստանը: Պապը սպանվել է Համիդյան ջարդերի ժամանակ, երեխաներին խնամել է մեծ մայրը. «Մորս ընտանիքը գերազանցորեն հայրենասեր էր, սակայն մինչ հեռի Լեւոնը հակում ուներ դեպի սուրը եւ միշտ զինված էր, հեռի Հարությունն ուզում էր իր ժողովրդին ծառայել գրիչով ու առորով» (23): Քեռի Հարությունը Ֆրանսիա է մեկնել հայրենասիրական նպատակներով՝ գյուղատնտեսություն սովորելու եւ երկիր վերադառնալու, քեռի Լեւոնը նշանավոր դաշնակցական է, ազգային գործիչ, դրսից ստացված զենքի խիստ գաղտնի առաքումներ էր կատարում հայկական գյուղեր ու քաղաքներ, ժողովրդին կազմակերպում ինքնապաշտպանության համար (Զավենը, որ հիացած էր մորեղբոր կերպարով, հետագայում նրա անունն ընտրեց որպես գրական եւ անհատական անուն՝ Լեւոն-Զավեն Սյուրմելյան): Իսկ «Մեծ մայրս,– հիշում է Սյուրմելյանը,– պատկերն էր Մայր Հայաստանի՝ իր բոլոր հինավուրց ցավերով» *(27):*

Գրողը մեկ-մեկ վերստեղծում է կորուսյալ հարազատների դիմանկարները, ստեղծում է այնպես, ասես նրանք ողջ են եւ շարունակում են ապրել հեռավոր ու թանկ եզերքում. «Հայրիկը միշտ հավաքույթների հոգին էր: Մայրիկը զուսպ էր: Շատ չէր խոսում: Նրանից տասներեք տարով փոքր էր մայրիկը, շագանակագույն երկար մազեր ուներ ու կաթնաթույր մաշկ, հասակով մի բանի մատնաչափ բարձր էր. նիստուկացը, արտաքինը, հայկվածքը, ամենի ինչ վեհ արժանապատվության դրոշմն էին կրում.... Բայց չորս ծննդաբերություն ու բազում ցնցումներ ու վշտեր իրենց դրոշմն էին դրել նրա դեմքին: Երբեք չէր կարողանում մոռանալ ջարդերի ժամանակ հոր ու հորեղբայրների սպանությունը.... Հայրիկը թունդ կողմնակից էր հայ-թուրքական բարեկամու-

թյան, ու նրա համար եւրոպականացած թուրեռն ավելի չարաշուք էին, քան պահպանողական...» *(69, 70)։*

Ահա եւ իր՝ մանուկ Զավենի դիմանկարը՝ մահամերձ քեռու՝ Հարությունի մոտ ֆրանսերենի դասերը սովորելիս եւ զինվորական վարժություններ անելիս, որ ցեղասպանությունից տակավին հոգեբանորեն չէր վնասվել. «Միշտ զինվոր էի խաղում ու զինվորական համազգեստ ունեի եւ հրացան, թուր ու հանդերձանք։ Ես պիտի կռվեի Անդրանիկի՝ ազգային հերոսի համար, որ իր հեղափոխականների գնդերով կուրծքը դեմ էր անում Օսմանյան կայսրությանը» *(23)։*

10. Հոգեբանական վերքեր ու հոգեկան վնասվածքներ

Հայոց ցեղասպանության ժամանակ հայ երեխաների նկատմամբ գործադրված մարմնական եւ հոգեբանական բռնությունների պատկերները Սյուրմելյանի վեպում բազմաշերտ են, բազմատեսակ ու բազմատեւ։ Հոգեբանական վերքերի ու վնասվածքների տեւականությունը մանկությունից երբեմն ձգվում է հասուն տարիք՝ մինչեւ վերջ մնալով հոգեկան խարվածք։ Ջուգահեռաբար դիտարկենք հոգեկան վերքերի պատմությունը՝ մանկությունից հասուն տարիք.

Լռության վերքը՝ մանկության ժամանակ. «Ո՛չ եղբայրս, ո՛չ էլ ֆույրերս խոսեցին իրենց ամենացավատանջ ապրումներից, որոնք իմիններ նման անպատմելի էին.... Մի տեսակ գաղտնի դաշինքով զգույշ էինք՝ երբեք չխոսելու մեր ծնողներից եւ ուրիշ ազգականներից, որոնց կաթոգին սիրում էինք։ Նրանց անունները կամ ուղղակի նրանց հիշեցնող որեւէ բան մեր խոսակցությունից բացառված էր։ Եթե մեզնից մեկն, օրինակի համար, անզգույշ «Մայրիկ» ասեր, չորս մեկ պիտի մղկտայինք։ Մեր ամենախոր վշտերը թաղված էին մեր սրտերում՝ վերքեր, որոնք երբեք չէին բուժվի, ու մենք փորձում էինք մոռանալ այդ բոլորը՝ մեր միավորման ուրախության մեջ» *(177–178)։*

Լռության վերքը՝ հասուն տարիքում. «Ավելի քան կես դար է՝ վերապրողներս հիշում ենք՝ դեռեւս շշմած պատահածից, անկարող հասկանալու կամ այդ մասին խոսելու։ Ես սիրտ չեմ անում մինչեւ իսկ մտածել այդ մասին։ Նրանց համար, ովքեր զոհ չգնացին մեր ազգային գոյությանը հասցված այս գրեթե մահացու հարվածին, խիստ կսկծալի է վերապրել անցյալը, իսկ ցնցումը դեռ շարունակվում է։ Ճիշտ է, այս գիրը գրեցի ես, բայց կարողացա տարիներ անց, լոկ մասնակի, կցկտուր մի պատկեր տալ՝ որպես Ամերիկա-

յում ապրող չափահաս մարդ, երբ այլեւս ի վիճակի է մի հիչ ավելի ոռոշակի, առարկայական խոսք ասել» *(5)*։

Զսպված լացը՝ մանկությունից հասուն տարիք. «Ես չէի լալիս իրականում։ Այն տղեկը, որ առհավիրէը կրեց, գլուխը բարձր էր պահում, «բաջ հայ զինվոր էր» նա, եւ ես զինվոր էի խաղում տակավին։ Անայլայլ էի ու պաղատյուն։ Օտարացած ու ինքնօտարացած…»։

Զսպված լացը՝ հասուն տարիքում գիրքը գրելիս. «Ամբողջ ժամանակ, որ գրում էի գիրքը, սեւ ակնոց էի կրում ու ձեւացնում էի, թե Կալիֆոռնիայի պայծառ արեւից աչքերս բորբոքվում են, եւ դա ոչ միայն բաց օդում, որպեսզի թաքցնեի արցունքներս…» *(6)*։

Զսպված լացի հոգեկան վերքը մարմնական ցավի ուժգնություն ունի. «Ինձ արգելեցի զգալ, մտովի նովոկայինի էի ներարկում իմ օրգանիզմը՝ բթացնելու համար ցավս, միաժամանակ անդորրությունս զարմանք էր պատճառում ինձ։ Ես պետք է զգայազուրկ, անպաճույճ ներկայացնեի անցքերը, ինչպես հիշում էի, բայց իմ սենյակի մտերմության մեջ արցունքներս ակամա գլորվում էին այտերովս, տարիներով զսպված արցունքներս հոսում էին՝ ասես մի ուրիշի աչքերից…» *(6)*։

Վրեժխնդրության ցասումը՝ մանկության օրերին. «…Բայց մեր սրտերում մխացող մեծ վիշտ կար, ու հանկարծ մի հինգ հոգի հավաքվեցինք ու որոշեցինք ծեծել մի թուրք բեռնակրի… Անգթորեն թակեցինք ու ցեղային փոխվրեժի մոլուցքի մեջ արույրե մահճակալի՝ հատակին ընկած կտորներ խլեցինք ու իջեցրինք գլխին, կռնակին, ուսերին…» *(179)*։

Վիշտը ներմղելու եւ չցուցադրելու արժանապատվությունը հասուն տարիքում. «Ընթերցողի գութը չէի հայցում ես, ոչ իսկ՝ համակրանքը. «Բարի եղեք խնայել մեզ գութի փուշերը». այս է կեցվածքը բոլոր հպարտ հայերի» *(9)*։ Կամ՝ «Ես կարողանում էի ծիծաղել եւ ճենզասցի էի». *ճենզասցի՝ այսինքն՝ ամերիկացի (292)*։

Ցավը դառնում է նաեւ ստեղծագործ թախիծ, հոգեկարը դարձնում էմոցիոնալ ու խորունկ. «Այս ներիին լարումներն ունեն իրենց դրական կողմը եւ հային դարձնում են ստեղծագործ ու բնածին բանաստեղծ, մի տեսակ բնածին արվեստագետ…» *(19)*,– նկատում է Սյուրմելյանը՝ *միաժամանակ պնդում, որ* «Սփյուռքը, վերջ ի վերջո, դատապարտված է», եւ «միակ դարմանը հայրենադարձությունն է» *(19)*։

Սփյուռքահայությանն սպառնացող սպիտակ ջարդի եւ հայրենադարձության խնդիրները գրողը բարձրաձայնում էր անընդհատ՝ նաեւ

«Էջմիածին» ամսագրում 1965 թվականին՝ Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի առիթով տպագրած «Տասը խորհրդածություններ»-ում, ուր եւս հույժ անհրաժեշտություն է համարում սփյուռքահայության ներգաղթը, հայության համախմբումը հայրենիքում, Հայաստանի հզորացումը, պայքարն ու դիմակայությունը ձուլման վտանգին՝ այդ պայքարում կարեւոր նկատելով սփյուռքի հայության հետ մշակութային կապերի շարունակական ամրապնդումը եւ Հայ Եկեղեցու դերը. «Սփյուռքի հայությունը պետք ունի Հայ Եկեղեցիին: Մեր Եկեղեցին Ազգային Եկեղեցի է եւ հայը հա՛յ կպահե»[1]:

«Ձեզ եմ դիմում, տիկիններ եւ պարոններ» վեպն ավարտվում է ինքնաքննության հասնող վերհուշի հոգեվիճակով, որ խտացումն է բոլոր կորուստների եւ կարոտների. «Ձեզ եմ դիմում, տիկիններ ու պարոններ, որպես անկեղծ ու հայրենասեր ամերիկացի, ժամանակին աշխարհը կախարդական երկիր էր Ամանորի նախօրյակին, ու կյանքը՝ շատ ավելի հաճելի, քան կարող է լինել մահկանացու կյանքը» *(294),– գրում է Սյուրմելյանը՝ հետզհետե հասնելով խոսքի զգացական շիկացման՝ «....Մարդ ինչ կարող է անել Ամանորի նախօրյակին» կրկնաբերություններով կողք կողքի դնելով անցյալն ու ներկան, վերհիշելով կորուսյալ քաղաքը, վանքը, հորը, մորը, սպանված հայ երեխաներին.* «Ինձ նման միլիոններ կան այս գիշեր Ամերիկայում, որոնց հալածում են իրենց վաղեմի տարիները....» *(298): Պատմություններ կան,– ասում է գրողը,– «որոնք պատմել չի լինի», սրտահույզ պատկերներ, «որոնք ոչ մի պատմություն չունեն» (298):*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Լեւոն-Զավեն Սյուրմելյանի «Ձեզ եմ դիմում, տիկիններ եւ պարոններ» վեպը որպես հայ ինքնություն ապրելու կամքի մասին է՝ հակառակ ցեղասպանության սպառնալիքների. «Տիկիններ եւ պարոններ, ես ուզում էի ասել աշխարհին՝ ձեզ համար մի լուր ունեմ՝ անհետացող ցեղ չենք մենք: Մենք պիտի գոյատեւենք: Հավերժական է Հայաստանը» *(18): Սա Հայոց ցեղասպանության դժոխային պարունակներով անցած եւ մահվան ընթացքը բեկած հայ երեխայի կյանքի նշանաբանն է, ահեղ ինքնավճիռ՝ կայացված դաժան փորձությունների հաղթահարումով:*

---

[1] *«Էջմիածին», 1965, Բ.–Դ., էջ 34:*

Հայ երեխաների մարմնական ու հոգեւոր ոչնչացման համակարգված գործողությունները Հայոց ցեղասպանության մի մասն են, մեծագույն աղետն ու խարանը չափահաս աշխարհի: Այդ ցեղասպանությունն առայսօր մնում է իրագործող պետության՝ Թուրքիայի կողմից չճանաչված, չդատապարտված ու չփոխհատուցված՝ սպառնալիք մնալով նաեւ արդի ժամանակներում:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Հայոց ցեղասպանություն, հայ երեխաներ, սպանդ, աքսոր, մահմեդականացում, վաճառք եւ ստրկացում, բռնաբարություն, անապաստանություն, սով, համաճարակ, որբություն, հոգեբանական վերքեր, վաղաժամ հասունացում, ինքնության կորուստ:

РЕЗЮМЕ

В статье исследуется автобиографический роман армянского писателя диаспоры Левона-Завена Сюрмеляна с целью раскрытия многогранной трагедии армянских детей, переживших Геноцид армян. На основе художественного повествования рассматриваются основные формы насилия, которым подвергались дети: массовые убийства, депортации, насильственная исламизация, порабощение, сексуальное насилие, бездомность, голод, эпидемии, сиротство, психологические травмы, преждевременное взросление и утрата национальной идентичности.

Историко-психологическим центром исследования выступает противопоставление детской невинности и человеческой жестокости, лежащее в основе романа. Особое внимание уделяется тому, что уничтожение армянских детей как носителей будущего народа и его культурной преемственности осуществлялось различными способами, включая сожжение, расстрелы, закалывание, утопление, отравление, уморение голодом и другие формы систематического насилия.

Автобиографический характер романа позволяет автору показать трагедию глазами непосредственного свидетеля событий. Главный герой проходит через все этапы геноцида, чудом избегает гибели и остается в живых. В произведе-

нии подробно изображены страдания Завена и его спутников во время депортации, а также тяжелые психологические последствия пережитого: постоянное ожидание смерти, бессонница, бред, навязчивые видения, эмоциональное оцепенение и глубокая психическая травма. Систематическое физическое и духовное уничтожение армянских детей являлось неотъемлемой частью Геноцида армян – одной из крупнейших гуманитарных трагедий XX века. Спустя более столетия турецкое государство продолжает отрицать исторический факт Геноцида армян, тогда как его гуманитарные, исторические и политические последствия продолжают оказывать влияние на современный мир.

SUMMARY

This article examines the autobiographical novel by Levon-Zaven Surmelian, an Armenian writer from the Diaspora, with the aim of shedding light on the multifaceted tragedy of Armenian children during the genocide, who were subjected to mass killings, deportation, forced Islamization, enslavement and sale, sexual violence, homelessness, starvation, epidemics, orphanhood, psychological trauma, premature maturation, and loss of identity.

The historical-psychological focus of the study is the contrast between childhood innocence and human cruelty as portrayed in the novel. The extermination of Armenian children–as the bearers of Armenian identity–was carried out through various methods, including burning, shooting, stabbing, drowning, poisoning, starvation, and other forms of systematic violence.

Since Surmelian's novel is autobiographical in nature, it reflects the tragedy of the protagonist himself, who endures the various stages of the genocide, miraculously escaping death and surviving. The work depicts the suffering of Zaven and his companions during their deportation, as well as the psychological horror of awaiting death–insomnia, delirium, visions of death, emotional numbness, and psychological trauma.

The systematic physical and spiritual annihilation of Armenian children was an integral part of the Armenian Genocide–one of the greatest humanitarian catastrophes of the 20th century. More than a century later, the genocide continues to be denied by the Turkish state, remaining unacknowledged, uncondemned, and uncompensated, while its historical and political consequences continue to be felt in the modern world.

Doi: 10.56 737/2953-7843-2026.05-101

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ
Պատմական գիտ. դոկտոր

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԵՒ ԱՆԿԱԽՈՒՄՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1988–1994 ԹԹ.)[1]

Դ. դարասկզբից, Հայաստանում՝ քրիստոնեության ընդունումից ի վեր Հայ Առաքելական Եկեղեցին պատմական հանգամանքների բերումով ազգի ու պետականության պահպանման հիմքն է եղել՝ առանձնահատուկ ուշադրություն ու հոգատարություն ցուցաբերելով հայ զորականի հոգեւոր դաստիարակությանը: Հայ հոգեւորականը ծառայել է՝ մի ձեռքին Տիրոջ խաչը, մյուսին՝ հայրենիքը պաշտպանող զենքը:

Մեր բազմադարյան պատմության ընթացքում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին միշտ կանգնած է եղել հայրենիքի պաշտպանությանը զինվորագրված հայորդիների կողքին՝ ոգեշնչելով նրանց խոսքով ու գործով, ցուցաբերելով հոգեւոր ու նյութական աջակցություն, իսկ պետականության բացակայության, կորստի պայմաններում՝ ստանձնել առաջնորդի դեր եւ հաճախ ազգային ազատագրական պայքարի գլուխ կանգնելով, օրհնել է այդ պայքարը, քաջալերել մարտիկներին՝ զինվելու հայրենյաց պաշտպանության համար հանուն Հայոց պետականության վերականգնման գաղափարի իրականացման: Հայ Եկեղեցու սրբազան հայրապետներն ու հոգեւորականները վճռական ճակատամարտերից առաջ օրհնել են Հայոց զորքը, հաճախ նաեւ զինվել, մինչեւ իսկ մասնակցել ճակատամարտերին: Այդ նվիրյալ հոգեւորականներից են Ս. Ներսես Մեծը, Ս. Հովսեփ Հողոցմեցին, Ս. Հովհան Մանդակունին,... Եսայի Հասան-Ջալալյանը, Ներսես Աշտարակեցին, Գարեգին Հովսեփյանը եւ այլք, որոնք ոչ միայն սրբազան պայքարը քաջալերող ու օրհնող էին, այլեւ դրա զրահակիրն ու առաջնորդը[2]:

Հայոց պատմության մեջ բազում օրինակներ կան, որոնք արտահայտում են այն նվիրումը, հոգեւոր օժանդակությունն ու անուրանալի դերը,

---

[1]* *Ստացվել է՝ 29.04.2026, գրախոսվել է՝ 30.05.2026: Էլ. հասցե՝* edik_minasyan@hotmail.com:

[2] *Տես «Էջմիածին», 2021, Ը., էջ 114:*

որ Հայ Եկեղեցին՝ իբրեւ ազատագրական պայքարի կենսագործող ուժ, ունեցել է հայրենի երկրի պաշտպանության գործում: Այդ պայքարի լավագույն օրինակներից է Վարդանանց պատերազմը, որ մղվում էր «վասն հայրենեաց եւ վասն հաւատոյ...»: Այս երկու շեշտադրումները մշտապես եղել են ու մնում են մեր Եկեղեցու գաղափարաբանության կենտրոնում: Հայտնի իրողություն է, որ 451 թ. մասիսի 26-ին Ավարայրի դաշտում տեղի ունեցած վճռական ճակատամարտում Հայոց բանակին ու աշխարհազորայիններին ոգեշնչում եւ առաջնորդում էին Ս. Հովսեփ Հողոցմեցի կաթողիկոսը, Ս. Ղեւոնդ Երեցը սպարապետ Վարդան Մամիկոնյանի ու մյուս զորահրամանատարների հետ, իսկ յուրաքանչյուր զորագունդ իր քահանան ուներ: Արդեն Սարդարապատի հերոսամարտում (1918 թ. մայիս) հայ հոգեւորականությունը նույնիսկ առանձին փոքրիկ զորաջոկատ էր կազմել եւ Գարեգին Հովսեփյանի ղեկավարությամբ հերոսաբար կռվում էր թշնամու դեմ:

Հայրենական մեծ պատերազմի տարիներից հիշարժան է, որ Գեւորգ Զ. (1945–1954 թթ.) Ամենայն Հայոց կաթողիկոսի ջանքերով ու եկեղեցու միջոցներով կազմավորվել եւ ռազմի դաշտ են ուղարկվել հրասայլային՝ «Սասունցի Դավիթ» ու «Դավիթ Բեկ» շարասյուները: Այդպիսի քայլերն իսկապես շատ են մեր պատմության մեջ:

Նման օրինակ է Ի. դարավերջին սկսված Արցախյան ազատագրական շարժման ու հայոց պետականության վերականգնման համար պայքարը, որին ոչ միայն անմիջական մասնակցություն ունեցավ Հայ Առաքելական Եկեղեցին, այլեւ ամեն տեսակի աջակցությամբ եւ օգնությամբ սատարելով կարեւորագույն խնդիրների լուծմանը հայ ժողովրդի հերոսամարտը հասցրեց մինչեւ հաղթական ավարտին՝ Լեռնային Արցախի ազատագրությանն ու նվիրական երազանքի իրականացմանը՝ Հայոց ինքնանկախ պետականության հաստատմանը: Արցախահայության ազգային-ազատագրական պայքարը անվերապահորեն սատարվում էր Հայ Առաքելական Եկեղեցու եւ նրա առաջնորդներ քաջալերանքով: Բազմաթիվ ու բազմակողմանի են եղել Հայ Առաքելական Եկեղեցու եւ նրա առաջնորդ ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա. քայլերը, որոնք կոչված էին աջակցելու Արցախի փախստականների, մանավանդ հալածված մտավորականությանը: Լեռնային Արցախի բնակչությունը շուրջ 70 տարի անընդմեջ պայքարել էր ադրբեջանական իշխանությունների հայավեր քաղաքականության դեմ: Արցախն այդ երկարատեւ ու դաժան գո-

յամարտի տարիներին շատ անմեղ զոհեր էր տվել, բայց կնճիռը մնացել էր չլուծված։ Արցախի հայությունը, ոգեշնչված արմատական փոփոխություններ ենթադրող, ազգերի ինքնորոշման իրավունքը հարգող «վերակառուցման» քաղաքականության հռչակմամբ, 1988 թ. սկզբներից «Լենին–կուսակցություն–Գորբաչով» լոզունգներով դուրս եկավ իր սահմանադրական իրավունքի համար պայքարի, խաղաղ հանրահավաքներով ու ցույցերով, ամբողջ հայության աջակցությամբ հենվելով նույն թվականի փետրվարի 20-ին հրավիրված ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման մարզխորհրդի արտահերթ նստաշրջանի որոշման վրա, որով առաջարկվում էր «դիմել Ադրբեջանական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ եւ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդներին ԼՂԻՄ-ը՝ Ադրբեջանի կազմից դուրս բերելու եւ ՀԽՍՀ կազմի մեջ ընդգրկելու համար»[3]։ Ի պաշտպանություն այդ պատմական որոշման Ստեփանակերտում «միացում» կարգախոսով բազմամարդ հանրահավաքներ սկսվեցին, որոնք ղեկավարում էր մարտի սկզբին ստեղծված «Կոմիտե» կոմիտեն։ Ի պատասխան այդ խաղաղ հանրահավաքների՝ Մոսկվան ու Բաքուն սկսեցին ռազմական ուժեր կենտրոնացնել Արցախում եւ նրա շուրջ[4]։ Փետրվարի 26-ից Խորհրդային Հայաստանում արցախահայության հետ համերաշխության զանգվածային ելույթների ալիք սկսվեց, որն աննախադեպ չափերի հասավ։ Ողջ հայ ժողովուրդը, նաեւ Հայոց Առաքելական Եկեղեցին, հոգեւորական խավը հայոց վեհափառի ղեկավարությամբ միահամուռ սատար կանգնեցին Արցախի, իրենց հայրենակիցների արդար պահանջին։ Կենտրոնական իշխանությունները, չնայած իրենց հռչակած վերակառուցմանը ժողովրդավարության ու հրապարակայնությանը, Արցախյան ազատագրական արդարացի շարժման հանդեպ դրսեւորեցին կատաղի դիմադրություն, այն անվանելով «ծայրահեղական», «մի խումբ անհանդուրժողականների գործողությունների արդյունք»։ ԽՍՀՄ կենտրոնական մարմինները եւ ադրբեջանական իշխանությունները համոզվելով, որ քաղաքական միջոցներով հնարավոր չէ կասեցնել հայերի օրըստօրեն ծավալվող ազատագրական շարժումը, որոշեցին կոպտորեն ոտնահարել համամարդկային իրավունքի բոլոր պահանջները, ԼՂԻՄ-ում եւ Հայաստանում ծավալված խաղաղ հանրահավաքներին ու ցույցերին հակադ-

---

[3] *Տե՛ս «Սովետական Ղարաբաղ», 21 փետրվարի, 1988։*

[4] *Տե՛ս «Հայոց պատմություն», հտ. IV, գիրք երկրորդ, Երեւան, 2016, էջ 161։*

րել բիրտ ուժն ու բռնության քաղաքականությունը: Դրա արդյունքն են հանդիսանում ԽՍՀՄ կենտրոնական կառավարության թողտվությամբ եւ ադրբեջանական ոճրագործ իշխանությունների ջանքերով իրականացված սումգայիթյան՝ 1988 թ. փետրվար, եւ 1990 թ. հունվարին Բաքվի հայության ցեղասպանությունները, ինչպես նաեւ բռնագաղթը, ոչ միայն Սումգայիթից ու Բաքվից, այլեւ Ադրբեջանի հայկական այլ բնակավայրերի վրա ադրբեջանական զինված խմբավորումների հարձակումների արդյունքում: Թալանի հրկիզումների, զանգվածային սպանությունների հետեւանքով Կիրովաբադից, Շամխորի, Խանլարի, Շուշիի եւ այլ շրջանների հայաշատ վայրերից սկսվեց հայ բնակչության արտաքսումը, որն ուղեկցվում էր բռնություններով ու խոշտանգումներով:

Անպատժելիության մթնոլորտում գործող ադրբեջանական հրոսակներին ու խուժանին էին մնում շուրջ 450 հազար բռնագաղթածների տները, գույքը, անասունները եւ այլն: Նման պայմաններում Հայ Առաքելական Եկեղեցին ոչ միայն սատար կանգնեց բռնագաղթված հայությանը, նրանց օգնելով թե՛ նյութապես եւ թե՛ տեղավորման ու ոտնահարված իրավունքների պաշտպանության հարցերում: Հայոց Առաքելական Եկեղեցին ու նրա առաջնորդ Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր ներդրումն ունեցավ ինչպես Արցախյան շարժման ու ազատամարտի, այնպես եւ Հայաստանի անկախության վերականգնման գործում: Շատ կարճ ժամանակ հետո ամենայն Հայոց Վեհափառը անհողդող կանգնեց ժողովրդական զանգվածների կողքին: Դեռեւս 1988 թ. փետրվարի 25-ին նա Արցախը Խորհրդային Հայաստանին վերամիավորելու հարցով դիմել էր Խորհրդային միության ղեկավար Միխայիլ Գորբաչովին:

Հայոց հայրապետը՝ Վազգեն Ա., ոչ միայն հրապարակայնորեն դատապարտեց Ադրբեջանի ջարդարարների կազմակերպած ցեղասպանությունների փաստը, ադրբեջանահայության բռնագաղթը, այլեւ դիմեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդին՝ խնդրելով ու պահանջելով «սատար կանգնել արցախահայության արդար պահանջին, ինքնորոշման իրավունքին, դատապարտեց ադրբեջանցի ոճրագործների կողմից արցախահայության ցեղասպանության փաստերն ու բռնագաղթը»[5]:

1989 թվականին, երբ Արցախի համար հակամարտությունը հասել էր գագաթնակետին, իսկ Գորբաչովի վարչակարգը անթաքույց օժանդա-

[5] Ս. Սուքիասյան, *Վազգեն Ա., նամականի, Երեւան, 2008, էջ 183–184:*

կում էր ոճրագործներին, Վազգեն Ա. կաթողիկոսը Հայրապետական կոնդակով վերաբացեց եւ վավերացրեց ադրբեջանական իշխանությունների ճնշումների հետեւանքով լուծարված Արցախի պատմական թեմը՝ Պարգեւ եպիսկոպոս Մարտիրոսյանի ղեկավարությամբ։ Պարգեւ եպիսկոպոս Մարտիրոսյանի եռանդուն գործունեությամբ թեմը վերազարթնեց եւ նրա առաջնորդությամբ մեծ դերակատարում ունեցավ Արցախի ազգագրական պայքարում։ Ժամանակների քաղաքական եղելությանը քաջածանոթ մարդը կարող է գնահատել, թե ինչ աստիճանի համարձակություն ու հերոսական կամք էր պահանջում Վազգեն Ա. Վեհափառի կատարած այդ քայլը, ուստի հարկ է հավուր պատշաճի արժեւորել այդ քայլի իրական նշանակությունը Արցախյան գոյամարտում[6]։ Վազգեն Ա.-ն բողոքի ձայնը բարձրացրեց, երբ Ադրբեջանի հայատյաց իշխանությունները փորձեցին վերստին փակել Արցախում վերաբացված Դանձասարի եւ Ամարասի պատմական վանքերը[7]։

Հենց Արցախի ազատագրության համար բռնկված պայքարում մեկ անգամ եւս առանձնակի դրսեւորվեցին Վազգեն Ա. կաթողիկոսի սրտացավությունն ու հայրենասիրությունը։

«Այո՛, պայքարել չանուն Հայրենիքի ազատագրութեան, յորդորում է Հայոց հայրապետը,– ապա շարունակում է ասելով,– բայց ինչո՞ւ այդ կարգախօսի տակ փոշուն տալ մեր վաստակը, խելակորոյս վարքով վտանգել մեր այսօրն ու վաղը»[8]։ Հաջորդող տողերը Սիլվա Կապուտիկյանի վկայությունից են. «Դյուրին էր հանրահավաքների հարթակներից բորբոք կոչեր անել՝ անհապաղ զենքի դիմել, դուրս գալ Խորհրդային Միության կազմից, դուրս քշել ռուս սահմանապահներին Հայաստանից... Իսկ հետեւանքները, իսկ տանկերի չարագուժ դղրդյո՞ւնը եւ օտար սվիններ փայլատակո՞ւմը Երեւանի փողոցներում... Ո՞վ չի հիշում 1989 հունիսի 28-ին Երեւանի օդանավակայանի դրամատիկ դեպքերից հետո կաթողիկոսի հեռուստատեսային ելույթը, երբ նա անսովոր հուզված ու նյարդային ասել էր ճշմարտությունը, թե անհեռատեսորեն ընդվզել Ռուսաստանի դեմ, դուրս գալ ափերից ու ընկնել ծայրահեղությունների մեջ՝ նշանակում է Հայաստանը սկուտեղի վրա մատուցել թշնամուն։ Ո՞վ իմանա՝ հոգու ինչ հատնումնե-

---

[6] *Տե՛ս «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», գիրք ԺԶ., Վազգէն Ա., Պալճեան, Ամենայն Հայոց կաթողիկոս (1955–1994), Երեւան, 2008, էջ 14։*

[7] *Նույն տեղում, էջ 27։*

[8] *Նույն տեղում, էջ 14, 15։*

րով է արտաբերել Վազգեն վեհափառն իր խոսքի վերջին նախադասությունը. «Եթէ դուք չլսէք Ձեր Հայրապետին ու չդադարեցնէք Ձեր ծայրայեղությունները, ես կանիծեմ իմ բախտը եւ կլռեմ յաւիտենաբար»[9]: Դժվար չէ կռահել, որ այդ խռովահույզ տարիներին, երբ ընթանում էր Արցախյան ազատագրական շարժումը, ծայրահեղ քայլերի չդիմելու եւ երկիրը կործանարար վտանգների չենթարկելու միացյալ կոչում, որ ուղղել էին Հայաստանի ժողովրդին Սփյուռքի երեք կուսակցությունները... կա Ամենայն Հայոց հայրապետ Վազգեն Առաջինի մտահոգ թելադրանքը[10]:

Հայտնի իրողություն է, որ 1989 թ. նոյեմբերի 28-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդն ընդունեց հակահայկական, արցախահայության իրավունքները ոտնահարող որոշում, որով ոչ նպատակահարմար էր համարվում Հատուկ կառավարման կոմիտեի գոյությունը, դրա փոխարեն ստեղծվում էր Ադրբեջանական հանրապետական կազմկոմիտե, որպես իշխանության մարմին, մարզում պահպանվում էին ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության զորքեր եւ այլն: Այս որոշման դեմ հանդես եկավ արցախահայությունը, ամբողջ հայ ժողովուրդը եւ առաջին հերթին Հայ Առաքելական Եկեղեցին՝ Վազգեն Ա. վեհափառի առաջնորդությամբ: Նա իր դժգոհությունն ու բողոքն արտահայտեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Մ. Գորբաչովին՝ նրան 1989 թ. դեկտեմբերի 8-ին ուղարկած նամակով. «Որոշումը Ամենայն Հայոց հայրապետը համարում է ազգությունների ազատ ինքնորոշման իրավունքին եւ դեմոկրատական սկզբունքներին հակասող եւ ընդգծում է, որ հայ ժողովուրդը այս որոշմամբ հուսախաբություն է ապրում: Բոլորը այն տպավորության տակ են, թե Գերագույն սովետը, առանց հանգամանորեն քննարկելու հանձնաժողովի ներկայացրած եզրակացությունները, մեխանիկորեն քվեարկել է տվյալ փաստաթուղթը, առանց անդրադառնալու, թե մի ամբողջ ժողովուրդ գլորում են անդունդը, մահացու հուսահատության,– գրում է Վեհափառը,– ապա ողջունելով դեկտեմբերի 1-ի ՀԽՍՀ Գերագույն խորհրդի եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշումը՝ «ՀԽՍՀ եւ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին», այն համարելով ազգային ինքնորոշման իրավունքին համապատասխան, շարունակում է ասելով, որ «իր համար միանգամայն անբացատրելի է, թե ինչպես կարելի է խորհրդային Միու-

[9] *Տե՛ս նույն տեղում, էջ 15:*

[10] *Համմտ. անդ:*

թյան հավատարիմ եւ նրա հաղթանակներին կարեւոր մասնակցություն բերած հայ ժողովրդի պատմական մի հատվածի, Լեռնային Ղարաբաղի ժողովրդի իրավունքը՝ ինքնորոշվելու եւ Խորհրդային Հայաստանին միանալու արդար ու դեմոկրատական սկզբունքը՝ մերժելով, արցախահայության իրավունքները ոտնահարել»[11]։

Եզրափակելով իր խոսքը՝ Ամենայն Հայոց հայրապետն ընդգծում է. «Առանց ժողովուրդների ինքնորոշման իրաւունքը յարգելու եւ կեանքի կոչելու կխորհենք, թէ պարզապէս հնարաւոր չէ Սովէտ Միութեան ազգութիւնների միջեւ համերաշխութիւն ստեղծել։ Կարծում ենք, որ այս սկզբունքը պէտք է իբրեւ խարիսխ հանդիսանայ բէրէստրոյքայի ու դէմոկրատիայի մարդասիրական մեծ ծրագրերի իրագործման»[12]։

Իր ժողովրդի արդարացի պահանջները խորհրդային գոռոզ եւ ականջները փակած ղեկավարներին հասցնելու նպատակով, Մոսկվայում 1990 թվականի սեպտեմբերին Ամենայն Հայոց հայրապետը նույնիսկ դիմեց խորհրդանշական հացադուլի՝ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի, հրապարակագիր Ջորի Բալայանի եւ այլոց կողքին[13]։ Հատկապես Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա. հորդորներից հետո, միայն երեք շաբաթ անց սեպտեմբերի 29-ին հացադուլավորները դադարեցրին բողոքի ցնցող գործողությունը։ Թեեւ այն ազդեցություն չունեցավ կենտրոնի դիրքորոշման վրա, բայց երկրի եւ աշխարհի հասարակայնության ուշադրությունը բեւեռեց Արցախի հիմնախնդրի վրա, նպաստեց նրա միջազգայնացմանը։ Հայ ժողովուրդն ու Հայ Առաքելական Եկեղեցին ավելի քան երկու տարվա փորձություններով լի ազգային ազատագրական ծանր պայքարի ընթացքում չկորցրին իրենց ողջամտությունը եւ դուրս չեկան պայքարի սահմանադրական շրջանակներից։ Հայ ժողովուրդը համախմբվեց, դարձավ միասնական՝ լի սեփական բախտը կռելու վճռականությամբ։ Սեփական ուժերի նկատմամբ հավատն ու վճռականությունը առաջ մղեցին ազգային, անկախ պետականության վերականգնման խնդիրը։ 1990 թ. համազգային շարժումը նպատակաուղղվեց հայ ժողովրդի այդ երազանքի իրագործմանը։ 1990 թ. մայիսին եւ հունիսին, ավելի քան 70 տարիների ընթացքում հանրապետությունում առաջին անգամ անցկաց-

---

[11] *Տե՛ս ՀԱԱ (Հայաստանի ազգային արխիվ), ֆ. 823, ց. 8, գ. 43։*

[12] *Տե՛ս, ՀԱԱ, ֆ. 823, ց. 8, գ. 118։*

[13] *«Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», գիրք ԺԶ., էջ 27։*

ված ժողովրդավարական, այլընտրանքային ընտրությունների արդյունքում, որին մասնակցեց նաեւ Արցախի հայ բնակչությունը, կազմավորվեց միանգամայն նոր խորհրդարան, որով վերջ տրվեց կոմունիստական 70-ամյա մենատիրությանը: Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց ՀՀՇ վարչության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Նոր խորհրդարանը օգոստոսի 23-ին, հանգամանալից քննարկումներից հետո ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթուղթը, որով դրվեց հանրապետության անկախ պետականության գործընթացի սկիզբը[14]: Այս իրավական փաստաթուղթը բաղկացած էր 12 կետից եւ նախանշում էր Հայաստանի քաղաքական, տնտեսական ու մշակութային զարգացման հիմնական ուղիները: Հռչակագիրը միաժամանակ հիմք էր ծառայում Հայաստանի Հանրապետության սահմանադրության մշակման, ինչպես նաեւ խորհրդային Հայաստանում գործող սահմանադրության մեջ փոփոխությունների ու լրացումների կատարման, պետական մարմինների գործունեության, հանրապետության նոր օրենսդրության մշակման համար: Հայաստանի անկախության մասին հռչակագրի ընդունումից մեկ տարի հետո տնտեսական, քաղաքական, պետաիրավական եւ վարչական ոլորտներում իրականացված արմատական վերափոխությունների շնորհիվ, հայոց անկախ պետականության հռչակման համար ստեղծվել էին անհրաժեշտ նախադրյալները: 1991 թ. սեպտեմբերի 21-ին անցկացվեց ԽՍՀՄ կազմից դուրս գալու վերաբերյալ համաժողովրդական հանրաքվե, որի ընթացքում Հայաստանի բնակչության ճնշող մեծամասնությունը՝ շուրջ 2 մլն 43 հազար մարդ (քվեարկության իրավունք ունեցողների 94,39 տոկոսը), «այո» ասաց անկախությանը[15]:

Սեպտեմբերի 23-ին Հանրապետության գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ պետություն: Որոշման ընդունմանը հաջորդած Հայաստանի հանրապետության օրհներգն ու Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի հայրապետական օրհնությունը մի առանձնակի հանդիսավորություն հաղորդեցին ԽՍՀՄ կազմից Հայաստանի Հանրապետություն դուրս գալու մասին որոշմամբ իրականացված գործընթացի տրամաբանական ավարտին[16]: Փաստորեն Հայաստանը ԽՍՀՄ հանրա-

---

[14] Տես «Հայաստանի Հանրապետություն», 23 օգոստոսի, 1991:

[15] Տես «Հայաստանի Հանրապետություն», 24 սեպտեմբերի, 1991:

[16] ՀՀԳ-ի տեղեկագիր, № 18 (998), 30.09.1991, էջ 21:

պետություններից առաջինն ու ըստ էության միակն էր, որը անկախացման հանրաքվեն անցկացրեց ԽՍՀՄ սահմանադրության եւ «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կնքված հարցերի լուծման կարգի մասին» օրենքի լիակատար համապատասխանությամբ, այն է՝ հանրաքվե իրականացնելու որոշման ընդունումից 6 ամիս անց եւ անկախացման մասին որոշումը կայացրեց հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող ազգաբնակչության ոչ պակաս, քան երկու երրորդի համաձայնությամբ[17]։

Հայոց անկախության վերականգնումը ամբողջ հայ ժողովրդի, այդ թվում Հայ Առաքելական Եկեղեցու, հոգեւորականության նվիրական երազանքի իրականացումն էր։ Հայոց Եկեղեցին իր ժողովրդի հետ միասին աշխույժ կերպով մասնակցեց նվաճված հաղթանակներին, հանրապետության կայացման ողջ գործընթացում։

Դեռեւս 1991 թ. ապրիլ–մայիսին Ադրբեջանը հրահրել էր ադրբեջանա-արցախյան պատերազմը։ 1991 թ. սեպտեմբերի 2-ին հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որին սվիններով դիմավորեց Ադրբեջանի հանրապետությունը։ Դեկտեմբերի 10-ին՝ տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի անկախության հանրաքվեն, որը համաժողովրդական քվեարկությամբ վերահաստատեց ԼՂՀ անկախության փաստը։ Այն ողջունեց Ամենայն Հայոց Հայրապետը։

Վազգեն Ա.-ն ողջունեց ոչ միայն Հայաստանի անկախության վերականգնումը 1991 թ. սեպտեմբերի 21-ին, այլ նաեւ Արցախի անկախությունն ու վաճառ հավատի եւ հայրենյանց մղվող Արցախյան ազատամարտի հայ զորականներին։ Նա բախտավոր եղավ իր ողջությանն ականատես լինելու հայոց նորագույն պատմության փառապանծ երկու իրադարձություններին՝ հայրենական անկախ պետականության վերականգնումին եւ Հայոց Արեւելից կողմանց տարածքների մի զգալի մասի ազատագրումին։

Արցախյան ազատամարտի առաջին իսկ օրերից բազմաթիվ հայ հոգեւորականներ զինվորագրվեցին հերոսամարտին։ Նրանք մարտերից առաջ վերցնելով խաչը մկրտում էին չկնքված մարտիկներին եւ զենքը ձեռքին մոնում կռվի դաշտ։ Արցախյան մարտադաշտերում 1991–1994 թթ. ընթացքում իրենց անունը փառքով պսակեցին Արցախյան թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, Հով-

---

[17] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 2 հոկտեմբերի, 1991։*

հաննես քահանա Հովհաննիսյանը, Ռաֆիկ դպիր Խաչատրյանը, Գրիգոր քահանա Մարկոսյանը, Վահան աբեղա Դավթյանը, Արմեն դպիր Մովսիսյանը եւ ուրիշներ, որոնք պարգեւատրվեցին ԼՂՀ շքանշաններով ու մեդալներով[18]: Արցախի հանրապետությանն ու արցախահայությանը սատարելու նպատակով Հայոց Եկեղեցին Վազգեն Ա. կաթողիկոսի նախաձեռնությամբ բուռն գործունեություն ծավալեց արտերկրում, դիմելով միջազգային հեղինակավոր կրոնական կազմակերպություններին՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդին, Եւրոպայի եկեղեցիների համաժողովին, տարբեր պետությունների ղեկավարներին՝ խնդրելով տնտեսական աջակցություն ու օգնություն ցույց տալ շրջափակման մեջ գտնվող Արցախին ու Հայաստանին: Նման գործունեության արդյունքում միայն 1992 թ. ԱՄՆ-ի երկու թեմերից Արցախին աջակցելու համար հանգանակվել էր 6 մլն դոլար: Ջնայած բարդ ու լարված իրավիճակին՝ հանրապետության նորընտիր իշխանությունների հետ միասին Հայոց Եկեղեցին իր մասնակցությունը բերեց պետական-հասարակական կարգը բարեփոխելու քաղաքականությանը[19]:

Հայ Առաքելական Եկեղեցին ազգային Եկեղեցի ճանաչելու եւ նրա դավանանքը ազատ քարոզելու եւ տարածելու գործում կարեւոր նշանակություն ունեցավ ՀՀ Գերագույն խորհրդի ընդունած՝ «ՀՀ-ում խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը: Դրանով Հայոց Եկեղեցուն իրավունք էր տրվում վերստեղծել իր թեմերն ու համայնքները, կառուցել նոր եկեղեցիներ ու նպաստել հոգեւոր կրթությանը: Հայոց Եկեղեցին պաշտպանեց իշխանությունների նախաձեռնությունը «Հայաստան» համահայկական հիմնադրամ ստեղծելու հարցում: Պատահական չէ, որ 1992 թ. մարտի 17-ի կոնդակով Վազգեն կաթողիկոսը համայն հայությանը կոչ էր անում մասնակցել ու աջակցել հիմնադրամին: Նման կոչով հանդես եկավ նաեւ Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսը՝ Գարեգին Բ.-ն: Փաստորեն Վազգեն Ա.-ն կարեւոր ավանդ ուներ «Հայաստան» Համահայկական հիմնադրամի կայացման եւ ամրապնդման գործում: Իր պաշտոնի բերումով նա մշտական անդամն էր Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի, եւ իր կոչերով ու Մայր Աթո-

---

[18] *Տես* Է Դ. Մ Ի Ն Ա Ս Յ Ա Ն, *Հայ Առաքելական Եկեղեցին անկախության վերականգնման եւ հանրապետության կայացման ժամանակաշրջանում, «Աստվածաբանության ֆակուլտետ. Տարեգիք», Գ., 2008, էջ 316:*

[19] *Տես նույն տեղում:*

ռի նվիրատվություններով մեծ նպաստ բերեց Հիմնադրամի հզորացման ու հայրենաշեն գործունեության ծավալման գործին: Վազգեն Կաթողիկոսի նախաձեռնությամբ հաստատվեց ներքին թեմերի եկեղեցական կանոնադրությունը, վերականգնվեցին խորհրդային տարիներին արգելված եկեղեցասեր կազմակերպություններն ու միությունները, մանկական ու կրոնական երգչախմբերը, վերականգնվում էին կիսաքանդ եկեղեցիները, կառուցվում էին նորերը: Ամրապնդվեցին Մայր Աթոռի կապերը ոչ միայն Կիլիկիո Կաթողիկոսության հետ, այլեւ քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ:

Իր գահակալության վերջին տարիներին, խորհրդային խոչընդոտների վերացումից հետո, դեպի Մայր Եկեղեցի վերադարձող նախկին խորհրդահայության հոգեւոր կարիքները բավարարելու համար, Վազգեն Ա. մեծ թափ հաղորդեց հոգեւորականների պատրաստության անհետաձգելի գործին: Հոգեւոր ճեմարանը երկրորդ ծնունդ ապրեց: Վազգեն Ա. օրհնությամբ եւ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին Արք. Ներսիսյանի (հետագայում՝ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս) նախաձեռնությամբ Սեւանի թերակղզում 1990-ին հիմնվեց հոգեւոր դպրանոց, որը Վազգեն Ա. վախճանից հետո ի պատիվ նրա անվանվեց «Վազգենյան Հոգեւոր Դպրանոց»: Հայ Եկեղեցու ծառայության առավել լավ կազմակերպման համար Արարատյան Հայրապետական եւ Շիրակի թեմերի կողքին հանրապետության տարածքում ստեղծվեցին Սյունիքի եւ Գուգարաց թեմերը[20]:

Իր 39-ամյա գահակալության տարիներին, Վազգեն Ա. կատարել է մյուռոնօրհնեքի վեց արարողություն, որոնք ազգային-եկեղեցական տոնախմբությունների, Մայր Հայրենիքի շուրջ աշխարհասփյուռ հայության համախմբման կարեւոր իրադարձությունների են վերածվել: Վերջին մյուռոնօրհներքը նա կատարեց Հայաստանի անկախության հռչակումից հաշված օրեր անց՝ 1991 թ. սեպտեմբերի 29-ին եւ դա անվանեց «Անկախության Մյուռոն»՝ հաստատ հավատք ունենալով Մյուռոնի հետ նաեւ Հայոց անկախ պետականության հավերժության[21]:

Իր ազգային-եկեղեցական եւ հասարակական նվիրյալ գործունեության համար, Վազգեն Ա.-ն ընտրվել է ՀՀ Գիտությունների Ազգային Ակա-

---

[20] «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», գիրք ԺԶ., էջ 28:

[21] Նույն տեղում:

դեմիայի պատվավոր անդամ (1991 թ. ապրիլի 30), արժանացել աշխարհի տարբեր համալսարանների պատվավոր դոկտորի գիտական աստիճանի, ընտրվել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի մի քանի գումարումների պատգամավոր եւ այլն։

Հայրենիքին ու ազգին անսակարկելի եւ ամբողջական նվիրումի համար, Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատմության մեջ եղավ առաջին անհատը, որ արժանացավ «Հայաստանի ազգային հերոս» բարձրագույն կոչմանն ու «Հայրենիք» պետական բարձրագույն շքանշանին (1994 թ. հուլիսի 29), որոնք ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն անձամբ հանձնեց ծերունազարդ Հայրապետին՝ նրա Աջը համբուրելով[22]։

Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը վախճանվեց 1994 թ. օգոստոսի 18-ին՝ Ս. Էջմիածինում։

Բարձր գնահատելով Հայոց Առաքելական Եկեղեցու եւ նրա առաջնորդ Ամենայն Հայոց հայրապետ Վազգեն Ա. դերակատարումը Արցախյան ազատագրական շարժման, ազատամարտի եւ Հայոց պետականության վերականգնման գործում Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը գրում է. «Սուրբ Էջմիածինը ունեցավ իմաստուն ու քաջարի Աստվածընտրյալ գահակալ, որ անվարան հավատով կանգնած հաստատուն վեմին Հայ Եկեղեցու եւ հավատարիմ ավանդներին Հայոց մեծագույն հայրապետների, կարող եղավ զորացնելու ու բարձրացնելու մեր Եկեղեցին...

Այսօր մենք փառք ենք բարձրացնում երկինք, որ կորովի Հայրապետը իր Աջով օրհնեց վերահաստատումը Հայոց ազգային անկախ պետականության եւ ազատագրումն Արցախի։ Այդ դժվարին, բայց հերոսական օրերին ծերունազարդ Հայրապետն իր ժողովրդի հետ կրեց բոլոր զոհողությունները, վտանգների առջեւ խոհեմությամբ հորդորեց, վշտի մեջ մխիթարեց ու արիաբար հավատ ներշնչեց»[23]։

Այսպիսով Հայոց Առաքելական Եկեղեցին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա. ղեկավարությամբ աշխույժ գործունեություն ծավալեց, իր նպաստը բերելով Արցախյան ազատագրական պայքարը հաղթական ավարտին հասցնելու եւ Հայոց անկախ պետականության վերականգնման գործում։

---

[22] *Նույն տեղում։*

[23] *Տե՛ս նույն տեղում, էջ 16։*

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցի, Արցախյան ազատագրական շարժում, Լեռնային Ղարաբաղ, Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս, անկախության պայքար, հոգևոր աջակցություն, հայրենասիրություն, ինքնորոշման իրավունք:

РЕЗЮМЕ

В статье исследуется историческая и определяющая роль Армянской Апостольской Церкви в деле сохранения национальной идентичности, государственности и защиты отечества, начиная с принятия христианства в начале IV века до новейшего периода. Особое внимание уделяется концу XX века – периоду с 1988 по 1994 год, ознаменованному Арцахским освободительным движением и восстановлением независимой армянской государственности.

На основе исторического анализа в работе освещается многогранная деятельность Католикоса Всех Армян Вазгена I. В условиях жесткой антиармянской политики азербайджанских властей и противодействия центрального руководства СССР, Армянская Церковь твердо встала на защиту конституционных прав и стремления к самоопределению армянства. Рассматриваются такие важные шаги, как каноническое восстановление исторической Арцахской епархии во главе с епископом Паргевом Мартиросяном, публичное осуждение геноцида и депортации армян из Сумгаита и Баку, а также обращения к международным религиозным организациям (Всемирный совет церквей). Автор подчеркивает духовную и практическую солидарность духовенства с народом, выраженную в символической голодовке Вазгена I в Москве в 1990 году, освящении «Мира Независимости» в 1991 году и всесторонней поддержке Всеармянского фонда «Айастан». В статье делается вывод, что консолидация Церкви и народа послужила прочным фундаментом для победного завершения Арцахской освободительной войны и становления суверенного армянского государства.

SUMMARY

Based on a historical analysis, this work highlights the multifaceted activities of Vasken I, Catholicos of All Armenians. Amid the harsh anti-Armenian policies of the Azerbaijani authorities and opposition from the central leadership of the USSR, the Armenian Apostolic Church stood firm in its defense of the constitutional rights and aspirations for security and self-determination of the Armenian people.

Particular attention is paid to the canonical restoration of the historic Diocese of Artsakh headed by Bishop Parkev Martirosyan, the Church's public condemnation of the massacres and forced displacement of Armenians from Sumgait and Baku, as well as appeals to international religious organizations (such as the World Council of Churches).

The article further highlights the Church's moral and humanitarian commitment, reflected in the symbolic hunger strike undertaken by Catholicos Vasken I in Moscow in 1990, the consecration of the "Holy Myron of Independence" in 1991, and the ongoing spiritual, humanitarian, and material assistance provided to refugees and Armenian defenders. The study concludes that the close partnership between the Armenian Apostolic Church and the Armenian people served as a solid foundation for the strengthening of national resilience, the victorious conclusion of the Artsakh Liberation War and the re-establishment of a sovereign Armenian state.

Doi: 10.56 737/2953-7843-2026.05-115

ԱՐՇԱԿ ՄԱԴՈՅԱՆ
ԵՊՀ

ԱԴՐԲԵՋԱՆ-ԻՍՐԱՅԵԼ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԱՏԿԵՐՈՒՄ[1]

ԻԱ. դարի առաջին քառորդում թե՛ համաշխարհային, թե՛ տարածաշրջանի ուժային կենտրոնների համար Հարավային Կովկասը վերածվել է աշխարհաքաղաքական մրցակցության առանցքային հանգույցի: Բայց եթե սառն պատերազմի ավարտին հաջորդած շրջանում տարածաշրջանի ռազմաքաղաքական զարգացումն ավանդաբար պայմանավորված էր ԽՍՀՄ իրավահաջորդ Ռուսաստանի Դաշնության, Թուրքիայի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) ազդեցությունների հարաբերակցությամբ, ապա վերջին երկու տասնամյակներում այստեղ աստիճանաբար արմատավորվելով ամրացել են Իսրայել Պետության դիրքերը: Այս հիմնարար բեկման գլխավոր շարժիչ ուժը Ադրբեջանի եւ Իսրայելի միջեւ ձեւավորված բազմաշերտ ռազմավարական գործընկերությունն է, որն ունի կիրառական բնույթ եւ ընդգրկում է ռազմատեխնիկական, հետախուզական, էներգետիկ ու բարձր տեխնոլոգիաների ոլորտները[2]:

*Թեհրանի քաղաքական եւ ռազմավարական շրջանակներում Բաքու-Թել Ավիվ դաշինքը դիտարկվում է ոչ իբրեւ սովորական երկկողմ համագործակցություն, այլ որպես «աշխարհաքաղաքական շրջափակման» (*Geo-political Encirclement*) եւ Իրանի հյուսիսային սահմանների երկայնքով իսրայելական ռազմական ու հետախուզական ներկայության իրավազորման միջոց[3]: Մտահոգությունների հիմնական պատճառն այն է, որ Ադր-*

---

[1]* *Ստացվել է՝ 13.05.2026, գրախոսվել է՝ 19.05.2026: Էլ. հասցե՝* Arshak.Madoyan@ysu.am:

[2] *Համմա.* Alexander Murinson, Turkey's Entente with Israel and Azerbaijan: State Identity and Security in the Middle East and Caucasus *(*London: Routledge*, 2010), 45–48,* Gallia Lindenstrauss, Israel-Azerbaijan Relations: Strategy and Realpolitik, "Strategic Assessment" *հտ. 17, հմր. 4 (հունվար2015), 69–74,* Eldad Shavit ևի Gallia Lindenstrauss, The Strategic Relations between Israel and Azerbaijan: Deeper Rooted than Coincidental Convergence,"INSS Insight", *հմր. 1723 (մայիս 2023), 2–3:*

[3] *Համմա.* Alex Vatanka, Azerbaijan and Israel's encirclement of Iran- https://mei.edu/publication/azerbaijan-and-israels-encirclement-iran/

բեջանն աշխարհագրորեն անմիջական սահման ունի Իրանի հետ (շուրջ 700[4] կմ), իսկ Իրանի հյուսիսային նահանգների ազգային-ժողովրդագրական պատկերը (թյուրքախոս բնակչություն) Թեհրանի անվտանգային հայեցակարգում մշտապես ընկալվել է իբրեւ ներքին կայունությանն սպառնացող՝ հնարավոր նուրբ գործոն[5]։

*Մերձավոր Արեւելքում Իրան-Իսրայել հակամարտության սրումը եւ դրա անցումը երկարամյա «ստվերային պատերազմի» (*Shadow War*) փուլից ռազմական՝ բացահայտ եւ ուղղակի դիմակայության, Հարավային Կովկասը վերածել են աշխարհաքաղաքական այս մեծ հակադրության առայժմ երկրորդական, բայց խիստ կարեւոր թատերաբեմի[6]։*

*Ներկա պարագային մեր նպատակն է նորիրատեսական (*Neorealism*) կամ կառուցվածքային իրատեսության (*Structural Realism*) դիրքերից վերլուծել Հարավային Կովկասում իսրայելական ներկայության խորացման պայմաններն ու դրդապատճառները, Ադրբեջան-Իսրայել համագործակցության ռազմավարական ուղղությունները եւ դրանց ածանցյալ ազդեցությունն Իրանի ազգային անվտանգության համակարգի ու տարածաշրջանային ուժերի հավասարակշռության (*Balance of Power*) վրա[7]։*

Եթե դիտարկենք Իսրայելի ռազմավարական հետաքրքրությունները Հարավային Կովկասում, կտեսնենք, որ հրեական պետության ար-

---

[4] *ԿՀՎ «*The World Factbook*»-ի 2004 թ. հրապարակմամբ սահմանագիծը հետեւյալ կերպ է մեկնաբանված. «Ադրբեջանի Սահմանակից երկրներ՝ Հայաստան (Ադրբեջանի հիմնական տարածքի հետ) 566 կմ, Հայաստան (Ադրբեջանի Նախիջեւանի հետ) 221 կմ, Վրաստան 322 կմ, Իրան (Ադրբեջանի հիմնական տարածքի հետ) 432 կմ, Իրան (Ադրբեջանի Նախիջեւանի հետ) 179 կմ, Ռուսաստան 284 կմ, Թուրքիա 9 կմ». տե՛ս* https://user.iiasa.ac.at/~marek/fbook/04/print/aj.html *(թարմացվել է 10 փետրվար, 2005)։*

[5] *Համմ.* Brenda Shaffer, Iran's Azerbaijan Question,"Harvard International Review" *հտ. 26, հմր. 1 (գարուն 2004), 18–22,* Nader Entessar, The Lion and the Sun in the Southern Caucasus: Iran's Karabakh Policy, "Journal of Balkan and Near Eastern Studies" *հտ. 18, հմր. 5 (2016), 482–485,* Mahmood Monshipouri, Iran and the South Caucasus: Geopolitical Opportunities and Challenges, "Iranian Studies" *հտ. 55, հմր. 2 (2022), 391–395։*

[6] *Համմ.* Vali Nasr, The New Middle East Cold War and Its Spillover into the Caucasus,"Foreign Affairs" *հտ. 103, հմր. 2 (2024), 112–115,* Jean-Loup Samaan, The South Caucasus as a Secondary Theater of the Iran-Israel Conflict,"Middle East Policy" *հտ. 31, հմր. 1 (2024), 45–51,* Nicole Grajewski, The Caucasus Spillover: How the Iran-Israel Shadow War Moved North,"Survival" *հտ. 66, հմր. 3 (2024): 83–89։*

[7] *Նշյալի կապակցությամբ տե՛ս* Kenneth N. Waltz, Theory of International Politics (Reading, MA: Addison-Wesley, *1979), 116–123,* John J. Mearsheimer, The Tragedy of Great Power Politics (New York: W. W. Norton & Company, *2001), 32–36,* Stephen M. Walt, The Origins of Alliances (Ithaca, NY: Cornell University Press, *1987), 17–21։*

տաքին եւ անվտանգային քաղաքականության կարեւորագույն առաջնահերթություններից մեկը Իրանի տարածաշրջանային ազդեցության սահմանափակումն ու նրա ռազմավարական կարողությունների զսպումն է: Այս համապատկերում Ադրբեջանը Թել Ավիվի համար ձեռք է բերել ռազմավարական առանձնահատուկ նշանակություն՝ որպես Իրանի անմիջական հարեւան պետություն, որը հնարավորություն է տալիս զարգացնելու հետախուզական համագործակցությունը, ամրապնդելու ռազմատեխնիկական կապերը եւ ընդլայնելու տարածաշրջանային ազդեցությունը[8]:

Դիտելի է, որ Ադրբեջանական ներդրումն Իսրայելի էներգետիկ անվտանգության կարեւոր բաղադրիչներից է: Վերջին տասնամյակներում Ադրբեջանն ապահովում է Իսրայել ներմուծվող նավթի մոտ 30–40%-ը եւ նրա խոշորագույն նավթամատակարարներից մեկն է[9]: Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղով միջերկրածովյան հանգույց հասնող ադրբեջանական էներգակիրները հնարավորություն են ընձեռում, որ Իսրայելի ներկրման աշխարհագրությունը բազմազան լինի, եւ նպաստում են, որ վերջինս խուսափի արաբական կամ տարածաշրջանի՝ ներկա պահին ոչ այնքան բարեկամական այլ եւ այլ դերակատարներից էներգետիկ կախվածության մեջ ընկնելուց: Փոխարենն Իսրայելը Բաքվին աջակցում է մի քանի ոլորտներում, որոնցից կարեւորագույններն են՝ կանխիկ արտարժույթի կայուն հոսքեր, նորագույն տեխնոլոգիական միջոցների տրամադրում, տեղեկատվական գործակցություն ու պետական շահերի առաջխաղացում[10]:

---

[8] *Համմա.* Souleimanov, Emil, Maya Ehrmann, եւ Huseyn Aliyev, Focused on Iran? Exploring the Rationale Behind the Strategic Relationship Between Azerbaijan and Israel, "Southeast European and Black Sea Studies" *հտ.14, հմր. 4 (2014), 471–488,* Cohen, A. Ronen, եւ Tzvi Lev, A Triangle of Interests: Azerbaijan, Iran and Israel, "Iran and the Caucasus" *հտ. 25, հմր. 1 (2021), 74–89,* Khalifa-zadeh, Mahir, Israel and Azerbaijan: To Counteract Iran, "Central Asia and the Caucasus *հտ. 12, հմր. 3 (2011), 31–41,* Alexander Murinson, Azerbaijan and Israel: A Blossoming Strategic Partnership, "Journal of Eurasian Studies *հտ. 5, հմր. 1 (2014), 13–19:*

[9] *Համմա.* Alexander Murinson, The Ties Between Israel and Azerbaijan, "Mideast Security and Policy Studies" *հմր. 110 (*Ramat Gan: Begin-Sadat Center for Strategic Studies, *2014), 7–9,* https://www.besacenter.org/wp-content/uploads/*2014/10/*MSPS*110*-web.pdf, Herb Keinon, Top Aide to Azerbaijan President: Israel Important Strategic Partner, "Jerusalem Post", *հունվար 27, 2015,* https://www.jpost.com/israel-news/top-aid-to-azerbaijan-president-israel-important-strategic-partner-*389 060:*

[10] *Համմա.* Emil Souleimanov, The Azerbaijan-Israel Strategic Alliance: Myths and Reality,"Middle East Policy" *հտ. 18, հմր. 1 (գարուն 2011), 122–125,* Gallia Lindenstrauss, Israel-Azerbaijan Relations: Strategy and Realpolitik, "Strategic Assessment" *հտ. 17, հմր. 4 (հունվար 2015), 71–73,* Michael Tanchum, The Israel-Azerbaijan Alliance and the Changing Energy Geopolitics of

*Կարեւոր է նաեւ աշխարհագրական մերձության (*Geographical Proximity*) եւ հետախուզական հենակետ հանդիսանալու հանգամանքը: Ադրբեջանի աշխարհագրական դիրքը, հատկապես Արցախի գրավյալ տարածքները, Իրանի հյուսիսային սահմաններին անմիջականորեն հարող շրջանները Իսրայելին անզուգադրելի պայմաններ են ընձեռում համակողմանի դիտարկման համար: Սա Թել Ավիվի համար անգերագնահատելի առավելություն է Իրանի միջուկային ու հրթիռային ծրագրերի մշտադիտարկման, ինչպես նաեւ Իսլամական հեղափոխության պահապանների զորակազմի տեղաշարժերի վերաբերյալ գործուն-մարտավարական, հետախուզական տվյալների ձեռքբերման համար՝ թե՛ մարդկային հետախուզության[11], թե՛ Ազդանշանային հետախուզության[12] միջոցով:*

Առաջինը տեղեկությունների հայթայթման ավանդական եղանակն է, որ իրականացվում է հետախուզական ուժերով: Այն ներառում է գործակալների հավաքագրման, ծպտյալ տեղեկատուների ցանցի ստեղծման, անձնական դիտարկումների եւ բազում այլ միջոցների ողջ գործիքակազմը: Ադրբեջանական տարածքների օգտագործումն Իսրայելին թույլ է տալիս առավելագույն դյուրությամբ կառավարել Իրանում գտնվող իր գործակալական ցանցերը կամ իրականացնել անմիջական ցամաքային գաղտնի դիտարկումներ սահմանի երկայնքով: Երկրորդի դեպքում տեղեկությունները հավաքվում են էլեկտրոնային ազդանշանների որսման, վերծանման եւ վերլուծության միջոցով: Այն բաղկացած է երկու հիմնական մասից՝ հաղորդակցական հետախուզություն- հաղորդակցության լրտեսում[13]՝ հեռախոսային խոսակցությունների, ուղերձների, թվային նամակների որսում եւ էլեկտրոնային հետախուզություն՝ ալեհավաքների, հրթիռային համակարգերի եւ այլ ռազմական սարքավորումների արձակած ալիքների եւ ազդանշանների որսում[14]: Արցախի գրավյալ տարածքներում (օրինակ՝ Կովսականում կամ Ջրականում)՝ Իրանի սահմանին մոտ տեղադրված իսրայելական գերժամանակակից լսող սարքերի, ալեհավաքների եւ էլեկտրոնային հետա-

---

the Black Sea and South Caucasus, "Journal of Balkan and Near Eastern Studies" *հտ. 23, հմր. 3 (2021): 412–417:*

[11] *Իմա՛* HUMINT-Human Intelligence:

[12] *Իմա՛* SIGINT-Signals Intelligence:

[13] *Իմա՛* COMINT-Communication Intelligence:

[14] *Իմա՛* ELINT-Electronic Intelligence:

խուզության կայանների միջոցով հնարավոր է որսալ Իրանի խորքում ընթացող ռազմական հաղորդակցությունը եւ հետեւել հրթիռային կայանների աշխատանքին[15]։

Առանձին ուշադրության արժանի է «Հեռաստանի/ծայրամասային դաշինքների» վերաիմաստավորման ռազմավարությունը[16]։ Համարվում է, որ 1950-ականներին Իսրայելի հիմնադիր հայրերից Դավիթ Բեն Գուրիոնի նախաձեռնությամբ եւ անմիջական ղեկավարությամբ մշակվեց գործողությունների մի համակարգ, որ կոչվեց «Ծայրամասի» կամ «Հեռաստանի» ռազմավարություն։ Դրա նպատակն էր դաշինքներ ստեղծել «արաբական օղակից» դուրս գտնվող՝ ոչ արաբական երկրների հետ (այն ժամանակ՝ Շահական Իրան, Թուրքիա, Եթովպիա)։ Այս ռազմավարության ներկայիս դրսեւորումների վառ օրինակներ են Իսրայել-Ադրբեջան կամ Իսրայել-Հունաստան հարաբերությունները։ Հաճախադեպ են նաեւ (Իսրայելի՝ «ծայրամասային նոր ռազմավարություն»[17] եւ «Հակադարձ ծայրամասային ռազմավարություն»[18] եզրույթները։ Վերջինս խորհրդանշում է Իսրայելի արտաքին քաղաքական այն ուղեգիծը, երբ Իսրայելն իր դաշինքներն ուղղում է երբեմնի «ծայրամասային» դաշնակիցների (Իրան, մասամբ՝ Թուրքիա) դեմ՝ համագործակցելով նոր սերնդի «ծայրամասային» գործընկերների հետ՝ Ադրբեջան կամ նույնիսկ Արաբական ծոցի միապետություններ[19]։ Ուստի ուշագրավ եւ ցանկալի կլինի ականատես լինել «Հակադարձ ծայրամասային ռազմավարություն» այնպիսի դրսեւորումների, երբ Իսրայելն իր հերթական նոր դաշինքներն ուղղի երբեմնի «ծայրամասային» դաշնակից Ադրբեջանի դեմ։

---

[15] *Համմա.* Nicole Grajewski, The Caucasus Spillover: How the Iran-Israel Shadow War Moved North,"Survival", *հտ. 66, հմր. 3 (2024), 83,* Jean-Loup Samaan, The South Caucasus as a Secondary Theater of the Iran-Israel Conflict, "Middle East Policy" *հտ. 31, հմր. 1 (2024), 48։*

[16] *Իմա՛* Neo-Periphery Doctrine։

[17] *Իմա՛* New Periphery Strategy։

[18] *Իմա՛* Reverse Periphery Doctrine։

[19] *Համմա.* Yoel Guzansky եւ Clive Jones, The 'Reverse Periphery' Doctrine: Israel's Evolving Relationship with the Arab Gulf States,"Middle East Policy" *հտ. 27, հմր. 4 (2020), 30–42,* Gallia Lindenstrauss, Israel's Relations with Azerbaijan and the New Geopolitics of the Periphery, "Strategic Assessment" *հտ. 24, հմր. 2 (2021), 65–79,* Jean-Loup Samaan, Israel's New Periphery Strategy: From the Eastern Mediterranean to the Gulf, "The International Spectator", *հտ. 56, հմր. 3 (2021), 110–125,* Ofira Seliktar եւ Farhad Rezaei, Iran, Israel, and the United States: The Regime Change Game *(*Lanham, MD: Lexington Books, *2020),* David Shayan, Israel's Periphery Doctrine: Strategy, Diplomacy, and Statecraft *(*London: Routledge, *2023),* Aristotle Tziampiris, The Emergence of the Israeli-Greek-Cypriot Strategic Alliance *(*Athens: Springer, *2015):*

Իսրայել պետության ներկայիս արտաքին քաղաքական գիծն ու ռազմավարական մտածողությունը, թե՛ հոգեւոր, թե՛ աշխարհիկ վերնախավերի շրջանում, մեծապես ձեւավորվում են հրեա ժողովրդի ավանդական՝ ընկերային, կրոնական եւ պատմական պատկերացումների ազդեցությամբ՝ հենվելով աստվածաշնչյան պատմության, աշխարհագրության եւ սուրբգրային ավանդույթի (Թանախ) իրադարձությունների վրա: Հետեւաբար, ժամանակակից աշխարհաքաղաքական հայեցակարգերը քննելիս հնարավոր է դրանց պատմահոգեբանական նախադրյալներն ու ակունքները նկատել հրեա ժողովրդի հնամենի պատմության մեջ:

Թանախյան պատմագրության մեջ նման կտրուկ դաշնակցային շրջադարձերի դասական օրինակ է Հուդայի թագավորության քաղաքականությունը: Վերջինս, հարեւանների սպառնալիքը չեզոքացնելու նպատակով, սկզբում դաշնակցում էր հեռավոր գերտերության՝ Ասորեստանի հետ (Դ. Թագ. ԺՁ. 5–9, Բ. Մնաց. ԻՀ. 16–21), իսկ հետո, ուժերի հարաբերակցության փոփոխությանը զուգընթաց, վերանայում էր իր քաղաքականությունը եւ նոր դաշնակիցներ որոնում՝ Եգիպտոսում ու Բաբելոնում (Դ. Թագ. ԺՀ. 21, Ի. 12–19, Ես. Լ. 1–7, ԼԱ. 1–3, Երեմ. ԼԷ. 5–10, Եզեկ. 17:11–21)՝ ընդդեմ այն տերության, որը ժամանակին իրեն աջակցել էր:

Այս պատմական շարունակականությունն ու գաղափարների սուրբգրային արմատները հնարավորություն են տալիս ենթադրելու, որ իսրայելական արտաքին քաղաքականության գործնական մոտեցման մեջ պահպանվել է հեռավոր ապավենների տեւական որոնման եւ տվյալ ժամանակաշրջանի աշխարհաքաղաքական շրջափակումները հաղթահարելու նպատակով դաշնակցային հարաբերությունների ճկուն վերաձեւակերպման ավանդույթը: Այս երեւույթը, իհարկե, չի ենթադրում ժամանակակից պետական քաղաքականության ուղղակի պայմանավորվածություն աստվածաշնչյան պատմություններով, սակայն վկայում է, որ պատմական հիշողությունն ու քաղաքական մշակույթը կարող են երկարատեւ ազդեցություն ունենալ ռազմավարական մտածողության ձեւավորման վրա: Աստվածաշնչյան դասերից հատկապես ուսանելի է Կյուրոս արքայի դրվագը: Այն ներկայացնում է, թե ինչպես Կյուրոսը հրեաներին ընծայեց Նաբուգոդոնոսորի առգրաված տաճարական սպասքն ու սրբազան իրերը, եւ Բաբելոնյան գերության մեջ հայտնված, անէության գիրկն անցնելու դատապարտված հրեաներին օժանդակեց, որ վերադառնան Երուսաղեմ ու պարսից տերության միջոցներով վերաշինեն

*Տաճարը: Իսրայել պետության վարած ներկայիս գիծն Իրանի հանդեպ գուցե կարելի է անցյալ մեծ բարերարությունների «շնորհակալությունը» համարել՝ նկատելով, որ շահերի գերակայության սկզբունքը, իրատեսական քաղաքականությունը (*Realpolitik*) առաջնային է, իսկ աշխարհաքաղաքական շրջադարձը կամ դաշինքների վերադասավորումը (*Geopolitical Realignment*)՝ հավերժ:*

Թերեւս ներկա դրվագը ձեւավորել է հրեական ռազմավարական մշակույթի մեկ այլ կարեւոր գիծ. աշխարհաքաղաքական բեկումնային պահերին գերտերությունների (պատմականորեն՝ Պարսկաստան, ժամանակակից շրջանում՝ Մեծ Բրիտանիա կամ ԱՄՆ) համաշխարհային շահերն ու կարողությունները սեփական ազգային-պետական նպատակներին միահյուսելու եւ ծառայեցնելու ունակությունը:

Անդրադառնանք Ադրբեջան-Իսրայել ռազմավարական համագործակցության ոլորտներին: Երկկողմ հարաբերությունները, որ սկսվել էին 1992 թ. դիվանագիտական կապերի հաստատմամբ, ԻԱ. դարում աստիճանաբար վերածվեցին լիարժեք ռազմավարական գործընկերության[20], որի խորհրդանշական բարձրակետ հանդիսացավ Թել Ավիվում Ադրբեջանի դեսպանատան բացումը 2023 թվականին[21]: Բաքվի համար Թել Ավիվի հետ համագործակցության խորացումը պայմանավորված էր մի կողմից՝ Հայաստանի նկատմամբ ռազմական եւ տեխնոլոգիական առավելություն ձեռք բերելու[22], մյուս կողմից՝ ԱՄՆ քաղաքական շրջանակներում հրեական լոբբիի աջակցությունն ապահովելու ձգտմամբ[23]:

Առաջնային է նաեւ ռազմատեխնիկական գործընկերությունը, որ կարելի է բնորոշել իբրեւ երկու երկրների համագործակցության խարիսխ: Իսրայելն Ադրբեջանի բարձր տեխնոլոգիական սպառազինության գլխա-

---

[20] *Հմմտ.* Taras Kuzio, The Azerbaijan-Israel Strategic Alliance, "The Journal of Slavic Military Studies", *հտ. 36" (1), 84–102,* Emil Souleimanov, The Azerbaijan-Israel Strategic Alliance: Myths and Reality, "Middle East Policy", *հտ. 18, հմր 1, 119–131:*

[21] *Հմմտ.* Eldad Shavit, and Gallia Lindenstrauss, The Strategic Relations between Israel and Azerbaijan: Deeper Rooted than Coincidental Convergence, "INSS Insight", *հմր. 1723, 1–5:*

[22] Brenda Shaffer, "The Azerbaijan-Israel Relationship: More Than Oil and Arms."Israel Journal of Foreign Affairs", *հտ. 14, հմր. 1, 109–118,* Jean-Loup Samaan, The South Caucasus as a Secondary Theater of the Iran-Israel Conflict, "Middle East Policy", *հտ. 31, հմր. 1, 42–56:*

[23] *Հմմտ.* Alexander Murinson, Israel-Azerbaijan Relations: Changing Alliances and Strategic Partnerships. London: Routledge *(տե՛ս հատկապես ԱՄՆ-ում հրեական կազմակերպությունների միջոցով իրականացվող լոբբինգին նվիրված բաժինը):*

վոր մատակարարներից մեկն է: Բավարար է հիշել, որ մի քանի փուլով կնքվել են միլիարդավոր դոլարների պայմանագրեր[24]:

Իսրայելական սպառազինության արդյունավետությունը եւ որակական հատկանիշները գործնականում ի ցույց դրվեցին դեռեւս 2016 թ. Ապրիլյան պատերազմի ժամանակ: Նորագույն միջոցները եւ հատկապես հարվածային ու հետախուզական անօդաչու սարքերը շատ դեպքերում մեծագույն նպաստ էին բերում: Յավոք այս կապակցությամբ արժանի վերլուծություններ եւ հետեւություններ չարվեցին, եւ արդեն 2020 թ. 44-օրյա պատերազմի եւ 2023 թ. սեպտեմբերին Արցախի դեմ իրականացված ռազմական գործողության ժամանակ իսրայելական բարձր ճշգրտության զենքերը, նորագույն միջոցներն ու զինատեսակները տարբեր ասպարեզներում շոշափելի առավելություն էին ապահովում՝ տարածաշրջանային ռազմական հավասարակշռությունը բեկելով հօգուտ Ադրբեջանի[25]:

Ծանրակշիռ ներդումն ակնառու էր նաեւ հետախուզական, համակարգչային եւ ցանցային անվտանգության ոլորտներում: Այս առթիվ հարկ է նշել, որ ռազմական համագործակցությունից զատ Իսրայելի եւ Ադրբեջանի միջեւ ձեւավորվել է նաեւ անվտանգային եւ հետախուզական սերտ գործակցություն: Միջազգային փորձագիտական գրականության մեջ եւ հեղինակավոր հրատարակություններում բազմիցս քննարկվել են Իրանի ուղղությամբ հետախուզական, էլեկտրոնային դիտարկման եւ ազդանշանային հետախուզության նպատակներով ադրբեջանական տարածքի, հատկապես Իրան-Ադրբեջան սահմանամերձ շրջանների, հնարավոր օգտագործման վերաբերյալ տեղեկություններն ու գնահատականները:

---

[24] *Տես* Taras Kuzio, The Azerbaijan-Israel Strategic Alliance, The Journal of Slavic Military Studies", *հտ. 36, հմր. 1 (2023), 84–102,* Brenda Shaffer, The Azerbaijan-Israel Relationship: More Than Oil and Arms, "Israel Journal of Foreign Affairs", *հտ. 14, հմր. 1 (2020), 109–118,* Nicole Grajewski, The Caucasus Spillover: How the Iran-Israel Shadow War Moved North, "Survival", *հտ. 66, հմր. 3 (2024), 79–94,* Jean-Loup Samaan, The South Caucasus as a Secondary Theater of the Iran-Israel Conflict, "Middle East Policy", *հտ. 31, հմր. 1 (2024), 42–56:*

[25] *Տես* Taras Kuzio, The Azerbaijan-Israel Strategic Alliance, "The Journal of Slavic Military Studies", *հտ. 36, հմր. 1 (2023), 84–102,* Nicole Grajewski, The Caucasus Spillover: How the Iran-Israel Shadow War Moved North, "Survival", *հտ. 66, հմր. 3 (2024), 79–94,* Jean-Loup Samaan, The South Caucasus as a Secondary Theater of the Iran-Israel Conflict, "Middle East Policy", *հտ. 31, հմր. 1 (2024), 42–56,* Eldad Shavit եւ Gallia Lindenstrauss, The Strategic Relations between Israel and Azerbaijan: Deeper Rooted than Coincidental Convergence, "INSS Insight", *հմր. 1723 (մայիս 2023), 1–5:*

Ու թեեւ այդ պնդումները պաշտոնական արձագանքների չեն արժանացել, այնուամենայնիվ շարունակում են մնալ մասնագիտական քննարկումների առարկա[26]։

Սրա հետ մեկտեղ, բաց աղբյուրներում առկա տեղեկություններն այս պահին թույլ չեն տալիս անվերապահորեն հաստատել կամ հերքել «Մոսադի» հենակետերի տեղակայման եւ դրանց աշխարհագրական ճշգրիտ տեղորոշման մասին պնդումները։ 2020 թ. պատերազմից հետո Իրանին սահմանակից տարածքների նկատմամբ Ադրբեջանի վերահսկողության ընդլայնումը վերլուծաբանները հաճախ դիտարկել են Իսրայել-Ադրբեջան ռազմավարական համագործակցության եռանախորքին։ Նույն կերպ, 2018 թ. Իրանի միջուկային արխիվի առեւանգման եւ 2020 թ. իրանցի միջուկային ֆիզիկոս Մոհսեն Ֆախրիզադեի սպանության դեպքերի կապակցությամբ միջազգային մամուլում շրջանառվել են տարբեր վերլուծություններ Իսրայելի հետախուզական գործունեության վերաբերյալ։ Սակայն Ադրբեջանի տարածքի անմիջական օգտագործման մասին հրապարակայնորեն հաստատված եւ անվիճելի ապացույցներ առկա չեն կամ ավելի ճիշտ՝ տակավին չեն հրապարակվում[27]։ Ընդամին պետք է նկատել, որ Իրանի ազգային անվտանգության հայեցակարգի առանցքային դրույթներից մեկը երկրի սահմանների անմիջական հարեւանությամբ արտաքին թշնամական ուժերի՝ առաջին հերթին ԱՄՆ եւ Իսրայելի ռազմական կամ հետախուզական ներկայության բացառումն է։ Այս համապատկերում Ադրբեջան-Իսրայել ռազմավարական գործակցությունը Թեհրանում դիտարկվում է որպես անվտանգային լուրջ մարտահրավեր, որն արտահայտվում է առնվազն երեք հիմնական հարթություններում.

---

[26] *Հմմտ.* Mark Perry, Israel's Secret Staging Ground," Foreign Policy", *մարտ 28, 2012,* Ilya Bourtman, Israel and Azerbaijan's Furtive Embrace,"Middle East Journal", *հտ. 60, հմր. 2 (գարուն 2006), էջ 274–291,* Alexander Murinson, The Ties Between Israel and Azerbaijan, "Mideast Security and Policy Studies" *հմր. 110,* "Begin-Sadat Center for Strategic Studies" *(*BESA Center*), 2014 (կամ նույն* Alexander Murinson-*ի՝* Turkey's Entente with Israel and Azerbaijan*։* State Identity and Security in the Middle East and Caucasus, Routledge, *2010)։*

[27] *Հմմտ.* David M. Halbfinger, Ronen Bergman, and Isabel Kershner, "How Israel, in Dark of Night, Torched Its Way to Iran's Nuclear Secrets,"The New York Times", *հուլիս 15, 2018,* Michael R. Gordon եւ Warren P. Strobel, Israel Built Broad Spy Network in Iran,"The Wall Street Journal", *դեկտեմբեր 11, 2020,* Seth J. Frantzman, Israel Hayom Visits the Border Causing the Iranians to Lose Sleep, "Israel Hayom", April *21, 2021, նաեւ* Brenda Shaffer, Azerbaijan and Israel*։* Strategic Partners on Iran's Border," "BESA Center Perspectives Paper", *հմր. 1,830 (2020)։ 1–5։*

Ա. ՄԱՐՏԱՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔ ԵՒ «ԳՈՐԾԵԼՈՒ-ՋՈՐԱՇԱՐԺԻ ԽՈՐՈՒԹՅԱՆ» ԽՆԴԻՐ

Իրանի ռազմաքաղաքական ղեկավարությունը մտահոգ է, որ Իրան-Իսրայել-ԱՄՆ ռազմական բախման պարագայում Ադրբեջանի տարածքը կարող է օգտագործվել հետախուզական կամ ռազմական գործողություններ համար: Իրանական եւ միջազգային փորձագիտական շրջանակներում բազմիցս հնչել են գնահատականներ, ըստ որոնց՝ Ադրբեջանի որոշ ռազմական ենթակառուցվածքներ, ի մասնավորի օդանավակայանները, առնվազն տեսականորեն կարող են ծառայել Իսրայելի ռազմաօդային ուժերի կամ անօդաչու համակարգերի գործողություններին աջակցելու նպատակով: Ուստի Թեհրանն իր հյուսիսային սահմանների մերձակայքում իսրայելական ռազմական ներկայության ցանկացած հնարավորություն դիտարկում է որպես ազգային անվտանգության «կարմիր գիծ»[28]:

Բ. ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԱՊԱԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՎՏԱՆԳ

Իրանի հյուսիսարեւմտյան նահանգներում՝ Արեւելյան Ատրպատականում, Արեւմտյան Ատրպատականում եւ Արդաբիլում բնակվող բազմամիլիոնանոց թյուրքախոս բնակչության գործոնը շարունակում է մնալ երկրի ներքին անվտանգության նուրբ հարցերից մեկը: Իրանական քաղաքական եւ անվտանգային որոշ շրջանակների ընկալմամբ՝ Ադրբեջանի եւ Իսրայելի սերտ համագործակցությունը կարող է խթանել պանթյուրքական գաղափարախոսության տարածումը, ինչպես նաեւ «Հարավային Ադրբեջանի» հայեցակարգի քաղաքականացումն ու աշխուժացումը: Սա երկարաժամկետ հեռանկարում կարող է ահագնացնել անջատողական տրամադրությունները եւ լրացուցիչ սպառնալիքներ ստեղծել երկրի ներքին կայունության համար[29]:

---

[28] *Համմ.* Ronen A. Cohen and Lev Tzvi, A Triangle of Interests: Azerbaijan, Iran and Israel, "Iran and the Caucasus", *հտ. 25", հմր. 1 (2021), 80–85,* Nicole Grajewski, The Caucasus Spillover: How the Iran-Israel Shadow War Moved North, "Survival" *հտ. 66, հմր. 3 (2024), 79–94,* Jean-Loup Samaan, The South Caucasus as a Secondary Theater of the Iran-Israel Conflict, "Middle East Policy", *հտ. 31, հմր. 1 (2024), 42–56:*

[29] *Տես* Nader Entessar, The Lion and the Sun in the Southern Caucasus: Iran's Karabakh Policy,"Journal of Balkan and Near Eastern Studies", *հտ. 18, հմր. 5 (2016), 479–492,* Mahmood Monshipouri, Iran and the South Caucasus: Geopolitical Opportunities and Challenges,"Iranian

Գ. ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՎՏԱՆԳ

Իրանը Հարավային Կովկասը դիտարկում է որպես իր անմիջական անվտանգային միջավայրի կարեւոր բաղադրիչ եւ դեպի հյուսիս ձգվող ռազմավարական հաղորդակցությունների գոտի: Այս տեսանկյունից Ադրբեջան–Թուրքիա–Իսրայել առանցքի խորացումը Թեհրանում հաճախ ընկալվում է որպես Իրանի շուրջ ձեւավորվող սահմանափակող աշխարհաքաղաքական կառուցվածքի տարր: Իրանական ռազմավարական մտածողության շրջանակներում նման զարգացումները դիտվում են որպես տարածաշրջանային ազդեցության նվազեցման, ինչպես նաեւ Հարավային Կովկասում եւ Կասպյան ավազանում Թեհրանի գործունեության սահմանափակման բաղադրիչ[30]:

Կրկին ի մտի առնենք, որ 2020 թ. 44-օրյա պատերազմից եւ Ուկրաինայում Ռուսաստանի ռազմական ներգրավումից հետո Հարավային Կովկասում ուժերի հարաբերակցությունն էական փոփոխություններ կրեց: Ռուսաստանի ավանդական ազդեցության հարաբերական թուլացման պայմաններում տարածաշրջանում ավելի ազդեցիկ դերակատարություն սկսեցին ստանձնել Թուրքիան եւ Իսրայելը, ինչը հանգեցրեց տարածաշրջանային ուժային հավասարակշռության վերադասավորման եւ անվտանգային ճարտարապետության վերաիմաստավորման: Ձեռնարկվեցին Իրանի աշխարհաքաղաքական մեկուսացման փորձեր: Իրանական քաղաքական եւ փորձագիտական շրջանակներում տարածված է այն տեսակետը, ըստ որի՝ Իրանի աշխարհաքաղաքական մեկուսացմանն ուղղված գործընթացներն իրականացվում են երկու փոխկապակցված ուղղություններով: Մի կողմից, թուրք-ադրբեջանական համագործակցության շրջանակում առաջ է մղվում Թրամփի ուղի-«Ջանգեզուրի միջանցք» նախագիծը, որը, իրանական գնահատականների համաձայն, կարող է սահմանափակել Իրանի տարանցիկ շարժունակությունը եւ աշխարհաքաղաքական դերակատարությունը տարածաշրջանում՝ միաժամանակ խթանելով պան-

---

Studies", *հտ. 55, հմր. 2 (2022), 385–403,* Brenda Shaffer, Iran's Azerbaijan Question,"Harvard International Review", *հտ. 26, հմր. 1 (*Spring *2004), 18–22:*

[30] *Տե՛ս* Alexander Murinson, Turkey's Entente with Israel and Azerbaijan: State Identity and Security in the Middle East and Caucasus *(*London: Routledge, *2010),* Vali Nasr, The New Middle East Cold War and Its Spillover into the Caucasus,"Foreign Affairs", *հտ. 103, հմր. 2 (2024), 108–121,* Jean-Loup Samaan, The South Caucasus as a Secondary Theater of the Iran-Israel Conflict,"Middle East Policy:, *հտ. 31", հմր. 1 (2024), 42–56:*

թյուրքական սերտաճման միտումները: Մյուս կողմից, այս գործընթացներին զուգահեռ խորանում է Իսրայելի եւ Ադրբեջանի միջեւ ռազմատեխնիկական ու հետախուզական համագործակցությունը, որի շարակարգում իրանական աղբյուրները պարբերաբար մատնանշում են Իրանի հյուսիսային սահմանների հարեւանությամբ գործող ենթադրյալ հետախուզական ենթակառուցվածքների առկայությունը, ներառյալ ազդանշանային հետախուզության համակարգերը եւ անօդաչու թռչող սարքերի հնարավոր հենակետերը[31]*:*

Հարավային Կովկասում իսրայելական գործոնի ամրապնդումն էականորեն վերափոխել է տարածաշրջանային անվտանգության ճարտարապետությունը: Ադրբեջան-Իսրայել ռազմավարական գործընկերությունն արդեն վաղուց դուրս է եկել զուտ ռազմատեխնիկական համագործակցության շրջանակից՝ աստիճանաբար վերածվելով Մերձավոր Արեւելքի եւ Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական համակարգերը փոխկապակցող ռազմավարական կարեւոր առանցքի:

2020 թվականից հետո Հարավային Կովկասը կորցրել է տարածաշրջանային անվտանգության համակարգի իր նախկին ինքնուրույնությունը եւ աստիճանաբար վեր է ածվում Մերձավոր Արեւելքի աշխարհաքաղաքական հակամարտությունների ռազմավարական ենթահամակարգի: Արցախի անկումից հետո Ադրբեջանն Իսրայելի համար այլեւս սոսկ գործընկեր չէ: Այն կատարում է չորս տարբեր գործառույթ. էներգետիկ, ռազմական, հետախուզական, աշխարհաքաղաքական:

Բազմաշերտ մրցակցության ու մրցավազքի համապատկերում Թել Ավիվն Ադրբեջանը դիտարկում է որպես Իրանի հյուսիսում գտնվող առանցքային հենակետ: Իսկ Բաքվի համար Իսրայելը սեփական ռազմական կարողությունների պահպանման, տեխնոլոգիական առավելության ապահովման եւ տարածաշրջանային ուժային հավասարակշռության մեջ սեփական դիրքերի ամրապնդման հուսալի գործընկեր է: Միեւնույն ժամանակ, այս փոխգործակցությունը պարունակում է սրացման նշանակալի վտանգներ: Այն դրդում է Թեհրանին տարածաշրջանում որդեգրել ավելի գործուն ու

---

[31] *Տես* Nicole Grajewski, The Caucasus Spillover: How the Iran-Israel Shadow War Moved North," Survival", *հտ. 66, հմր. 3 (2024), 79–94,* Vali Nasr, The New Middle East Cold War and Its Spillover into the Caucasus," Foreign Affairs", *հտ. 103, հմր. 2 (2024), 108–121,* Micha'el Tanchum, The Israel-Azerbaijan Alliance and the Changing Energy Geopolitics of the Black Sea and South Caucasus," Journal of Balkan and Near Eastern Studies", *հտ. 23, հմր. 3 (2021), 405–422:*

կանխարգելիչ քաղաքականություն, ինչի դրսեւորումներից է Հայաստանի Հանրապետության հետ անվտանգային, տնտեսական եւ փոխադրական-կապուղային համագործակցության խորացումը՝ որպես տարածաշրջանային ուժային հավասարակշռության վերականգնման գործիք:

*Միջազգային եւ տարածաշրջանային ներկայիս միտումների պահպանման պարագայում Հարավային Կովկասը կարող է աստիճանաբար կորցնել հակամարտությունների ավանդական բնույթը եւ վերածվել Իրան–Իսրայել–ԱՄՆ հակամարտության, այդ թվում՝ «խառնատարր պատերազմի (*hybrid warfare*)» տարածաշրջանային թատերաբեմի: Նման պայմաններում փոքր պետությունների, մասնավորապես Հայաստանի անվտանգային միջավայրն առավելապես կախված կլինի ճկուն, հաշվարկված եւ բազմաբեւեռ հավասարակշռման քաղաքականություն իրականացնելու կարողությունից:*

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Ադրբեջան–Իսրայել հարաբերություններ, Իրանի ազգային անվտանգություն, Հարավային Կովկաս, նորիրատեսություն, ուժերի հավասարակշռություն, աշխարհաքաղաքական շրջափակում, ազդանշանային հետախուզություն, «հեռաստանի/ծայրամասային դաշինքների» ռազմավարություն, ռազմատեխնիկական համագործակցություն, խառնատարր (հիբրիդային) պատերազմ:

РЕЗЮМЕ

В рамках неореалистской парадигмы исследуется эволюция стратегического партнерства между Азербайджаном и Израилем и его влияние на архитектуру безопасности Южного Кавказа. Показано, что институционализация многомерного сотрудничества в энергетической, военно-технической и разведывательной сферах существенно изменила региональный баланс сил, интегрировав Южный Кавказ в геополитическую динамику Ближнего Востока. В результате регион постепенно трансформируется в стратегическую подсистему ирано-израильского соперничества. В статье систематизировано восприятие угроз Тегераном в трех взаимосвязанных измерениях – стратегическо-оперативном, эт-

нополитическом и геополитическом, – в рамках которых израильское присутствие в Азербайджане рассматривается как элемент стратегии сдерживания и геополитического окружения Ирана. Делается вывод, что проекция ирано-израильской конфронтации на Южный Кавказ превращает регион в один из театров гибридного противоборства. В этих условиях обеспечение долгосрочной стабильности и национальной безопасности Республики Армения требует проведения гибкой, многовекторной стратегии внешнеполитического и военно-политического балансирования.

SUMMARY

Grounded in the neorealist paradigm, this article examines the evolution of the Azerbaijan–Israel strategic partnership and its implications for the security architecture of the South Caucasus. It argues that the institutionalization of multidimensional cooperation in the energy, military-technical, and intelligence domains has significantly reshaped the regional balance of power, integrating the South Caucasus into the broader geopolitical dynamics of the Middle East. Consequently, the region is increasingly emerging as a strategic subsystem of the Iran–Israel rivalry. The study systematizes Tehran's threat perceptions across three interrelated dimensions–strategic-operational, ethno-political, and geopolitical–demonstrating that Israel's presence in Azerbaijan is interpreted as part of a broader strategy of deterrence and geopolitical encirclement of Iran. The article concludes that the spillover of the Iran–Israel confrontation has transformed the South Caucasus into a theater of hybrid competition. Under these circumstances, ensuring the long-term stability and national security of the Republic of Armenia requires the adoption of a flexible, multidirectional strategy of foreign policy and strategic balancing.

Doi: 10.56 737/2953-7843-2026.05-129

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՒ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ[1]

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ազգային անվտանգության ժամանակակից տեսությունները վստահեցնում են, որ էթնոքաղաքական ցանկացած հանրույթի գոյության հիմնարար երաշխիքը պայմանավորված է ոչ միայն նրա ռազմաքաղաքական եւ տնտեսական ներուժով, այլեւ ազգային ինքնության կայունությամբ ու արտաքին ձուլման ճնշումներին դիմակայելու կարողությամբ:

Հայ ժողովրդի բազմադարյան պատմությունը ձեւավորվել է աշխարհաքաղաքական չափազանց բարդ եւ հաճախ ողբերգական պայմաններում: Արեւելյան եւ արեւմտյան տերությունների շահերի բախման կիզակետում հայտնված Հայաստան աշխարհը բազմիցս կորցրել է իր պետական անկախությունը: Արշակունյաց, Բագրատունյաց եւ Կիլիկիայի հայկական թագավորությունների անկումից հետո՝ մինչեւ Ի. դարի սկիզբն ընկած ժամանակահատվածը, հայ ազգային-ժողովրդական ընդհանրությունը զրկված էր սեփական անվտանգությունն ու իրավունքները պաշտպանող ինքնիշխան պետական համակարգից: Պետականության կորստի ճակատագրական փուլերում Հայոց Առաքելական Եկեղեցին ստանձնել է բացառիկ նշանակություն ունեցող առաքելություն՝ հանդես գալով ոչ միայն որպես կրոնական հաստատություն, այլեւ՝ որպես ազգային ինքնության, համախմբման, մշակույթի, լեզվի, պատմական հիշողության եւ պետականության գաղափարի պահպանման առանցքային հենասյուն:

---

[1]* *Ստացվել է՝ 29.04.2026, գրախոսվել է՝ 30.05.2026: Էլ. հասցե՝* avharutunyan@mail.ru:

Եկեղեցին իր վրա է վերցրել ոչ միայն հոգեւոր-կրոնական, այլեւ վարչահրավական, կրթամշակութային, գաղափարական եւ դիվանագիտական գործառույթները՝ վերածվելով հայ ժողովրդի հոգեւոր եւ մշակութային անվտանգության պահպանման հիմնական կառույցի։

Ա. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆ

301 թ. Հայաստանում քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն նշանավորվեց ինչպես կրոնական, այնպես եւ աշխարհաքաղաքական շրջադարձային նշանակությամբ։ Մշակվեց Հայ Եկեղեցու կազմակերպման ազգային սկզբունքը[2], որը նպաստեց հայ ժողովրդի քաղաքակրթական առանձնացմանը հարեւան ժողովուրդներից եւ ձեւավորեց նոր ինքնության կայուն ու գաղափարական հզոր հիմք, որը հետագայում դարձավ ազգային դիմադրողականության եւ ինքնապահպանման առանցքային գործոններից մեկը[3]։

Ազգային անվտանգության եւ ինքնության պահպանման գործընթացում ոչ պակաս նշանակալի հանգրվան դարձավ Ե. դարի սկզբին՝ 405 թ., Մեսրոպ Մաշտոցի՝ Հայոց գրերի գյուտը, որն իրականացվեց Սահակ Ա. Պարթեւ կաթողիկոսի հանճարեղ նախաձեռնությամբ եւ Վռամշապուհ արքայի անմիջական աջակցությամբ։ Այն ուներ ոչ միայն կրոնաքարոզչական, այլեւ հստակ ազգային-քաղաքական եւ անվտանգային ծանրակշիռ արժեք։ 387 թ. Հայաստանի բաժանումից եւ պետականության թուլացումից հետո առաջնային խնդիր է դառնում մշակութային եւ գաղափարական այնպիսի համակարգի ձեւավորումը, որը կապահովեր հայ ժողովրդի համախմբումը՝ անկախ քաղաքական սահմաններից եւ արտաքին ազդեցություններից։ Հայոց գրերի ստեղծումը, Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը, որը հետագայում բնութագրվեց որպես «թագուհի թարգմանութեանց», ինչպես նաեւ հայալեզու կրթական համակարգի ձեւավորումը, դարձան հայ ժողովրդի մշակութային, լեզվական եւ հոգեւոր ինքնության պահպանման հիմնա-

---

[2] Ն. Ադոնց, *Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում։ Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի*, Երեւան, 1987, էջ 391։

[3] Բագուրան (Վահան Մ. Քիւրքճեան), *Հազարվեցհարիւրամեակ Հայաստանեայց քրիստոնէական լուսաւորութեան եւ Ս. Էջմիածնի հիմնարկութեան 303–1903*, Նիւ Եօրք, 1953, էջ 6։

սյուները[4]: Հայոց գրավոր խոսքի վերածնունդը եւ ազգային գրականության ձեւավորումը ոչ միայն մշակութային առաջընթացի հիմք հանդիսացան, այլեւ վերածվեցին ազգային ինքնության պահպանման եւ արտաքին ազդեցություններին դիմակայելու ռազմավարական գործոնի: Ֆրանսիացի հայագետ Էմե Մարթենը նշում է, որ «Հայերը յաջողեցան փրկել իրենց հաւատքին հետ նաեւ իրենց ազգութիւնը, մերժելով եւ արգելելով օտար ազգերու տառերուն գործածութիւնը...»[5]:

Հայոց գրերի ստեղծումն ամրապնդեց ոչ միայն քրիստոնեական հավատքի ազգային ընկալումը, այլեւ ձեւավորեց հայկական ինքնուրույն քաղաքակրթական տարածք: Պատահական չէ, որ Նիկոլ Աղբալյանը նկատել է. «Չորրորդ դարում Հայաստանը քրիստոնեացաւ, իսկ հինգերորդ դարում քրիստոնէութիւնը հայացաւ»:

Ազգային ինքնության պահպանման գործում Հայոց Եկեղեցու ռազմավարական հաջորդ կարեւոր քայլն ազգային համախմբման եւ դավանաբանական անկախության ամրապնդումն էր: Այդ համապատկերում Վարդանանց պատերազմը Հայոց պատմության մեջ հանդես է գալիս որպես կրոնական ազատության եւ ազգային ինքնության պաշտպանության բացառիկ օրինակ: Պատերազմի ընթացքում Եկեղեցին վերածվեց ժողովրդի ազգային դիմադրությունը կազմակերպող եւ գաղափարապես առաջնորդող ուժի: Ավարայրի ճակատամարտը, ըստ էության, դարձավ հայ ազգային ինքնության պահպանման սրբացված խորհրդանիշներից մեկը: Հայ ժողովրդի համար քրիստոնեությունը ոչ միայն հոգեւոր հավատամք էր, այլեւ ազգային գոյության եւ ինքնապահպանման հիմնարար միջոց: Հենց այս գաղափարական հիմքում է ձեւավորվել հայ ժողովրդի գոյատեւման պատմական բանաձեւը, որը համազգային ճգնաժամերի եւ արտաքին սպառնալիքների պայմաններում վերաիմաստավորվել, վերարծարծվել եւ ազգային դիմադրության ուժի է վերածվել տարբեր ժամանակաշրջանների հայ քաղաքական, հոգեւոր եւ հասարակական գործիչների ջանքերով:

Քաղկեդոնի ժողովի որոշումների մերժումը, ինչպես նաեւ 506 եւ 554 թվականների՝ Դվինի, 1297 թվականի Նորավանքի եւ 1309 թվա-

---

[4] Հ. Ա. Հարությունյան, *Մեսրոպ Մաշտոցը եւ հայերեն գրերի ստեղծումը*, Երեւան, *1959, էջ 27:*

[5] Անդէ՛ Քէնէ. Փայլակեան, *Հայ եկեղեցւոյ դերը ազգային կեանքին մէջ*, Փարիզ, ա. թ., *էջ 24:*

կանի Ադանայի եկեղեցական ժողովներում քաղկեդոնականության պաշտոնական բանադրումը, Հայոց Եկեղեցու դավանաբանական եւ քաղաքական ինքնուրույնության ամրապնդման կարեւորագույն դրսեւորումներ էին: Ընտրելով հակաքաղկեդոնական ուղղությունը՝ Հայոց Եկեղեցին իրականացրեց ոչ միայն դավանաբանական, այլեւ գիտակցված աշխարհաքաղաքական ընտրություն, որի նպատակն էր բացառել Բյուզանդական կայսրության հոգեւոր ազդեցության ներքո հայտնվելու վտանգը: Մաղաքիա արք. Օրմանյանն իրավացիորեն նշում է, որ Հայ Եկեղեցու դեմ ուղղված դավանաբանական վեճերը «երբեք չխաթարեցին Եկեղեցու հիմնական դիրքն ու հաստատուն նկարագիրը»[6]: Այսպիսով, Հայոց Եկեղեցին ձեւավորեց հոգեւոր եւ գաղափարական այնպիսի պաշտպանական համակարգ, որը դարեր շարունակ ծառայեց որպես ազգային ինքնության պահպանման պատնեշ, որը հայությանն անխոցելի դարձրեց թե՛ պարսկական եւ հունական, իսկ ավելի ուշ նաեւ մահմեդական կրոնա-մշակութային ծավալապաշտության նկատմամբ:

Բ. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏԱԿԱՆԱԿԵՐՏ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1375 թվականին Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո հայ ժողովուրդը վերջնականապես զրկվեց պետական անկախության վերջին հենարանից: Հայաստանի բնակչությունը հայտնվեց Լենկ Թեմուրի արշավանքների, թուրքմենական ցեղերի (Կարա-Կոյունլու, Ակ-Կոյունլու), իսկ ավելի ուշ՝ Օսմանյան կայսրության եւ Սեֆյան Պարսկաստանի դաժան տիրապետության տակ: Այս հուսահատ պայմաններում Հայոց Եկեղեցին ստանձնեց ազգային կյանքի կազմակերպման եւ կառավարման առանցքային դերակատարությունը՝ իրականացնելով պետականանպաստ մի շարք գործառույթներ: Եկեղեցին ոչ միայն պահպանեց ժողովրդի հոգեւոր միասնությունը, այլեւ հանդես եկավ որպես վարչական, կրթական, մշակութային եւ իրավական հարաբերությունների կարգավորող կենտրոն՝ ապահովելով ազգային ինքնության եւ հասարակական համախմբվածության անընդհատությունը:

---

[6] Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ *Հայոց Եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարչապետութիւնը, վարչարարութիւնը, ներքին կարգը, արարողութիւնը, գրականութիւնն ու ներկայ կացութիւնը, Կոստանդնուպոլիս, 1913, էջ 60:*

Գ. ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դարեր շարունակ հանդես է եկել ոչ սոսկ կրոնական կենտրոն, այլեւ որպես համազգային ինքնության եւ հոգեւոր իշխանության առանցքային հաստատություն:

Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո Հայոց կաթողիկոսական Աթոռը շարունակում էր գործել Սիս քաղաքում, որը կտրված էր բուն հայկական տարածքներից եւ մշտապես ենթարկվում էր օտար տիրապետողների ճնշումներին ու հարձակումներին: Այս իրավիճակը սահմանափակում էր Եկեղեցու համազգային գործունեության արդյունավետությունն ու հայության հոգեւոր կենտրոնացման հնարավորությունները: 1441 թ. հայ հոգեւորականության նախաձեռնությամբ կայացվեց պատմական նշանակություն ունեցող որոշում՝ Հայոց կաթողիկոսական Աթոռը Սիսից վերադարձնել իր ավանդական կենտրոն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին[7]: Այս քայլն ուներ ոչ միայն եկեղեցական, այլեւ ռազմավարական նշանակություն: Կաթողիկոսական Աթոռի վերադարձը պատմական հայրենիք վերականգնեց հայ ժողովրդի հոգեւոր-քաղաքական կենտրոնը, իսկ հետո հզոր խթան դարձավ աշխարհասփյուռ հայության համախմբման գործընթացում:

Պետականության բացակայության պայմաններում Էջմիածինը վերածվեց համահայկական միասնության գլխավոր առանցքի, որտեղ կենտրոնացած էին ազգային հիշողությունը, հոգեւոր իշխանությունը եւ մշակութային շարունակականությունը: Այն ոչ միայն պահպանեց եկեղեցական ավանդույթները, այլեւ ապահովեց ազգային արժեքների, լեզվի, պատմական գիտակցության եւ ինքնության փոխանցումը սերունդներին՝ դառնալով հայ ժողովրդի գոյատեւման միասնական արժեհամակարգը:

Դ. ԵԿԵՂԵՑՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՒ ԿՐԹԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց Եկեղեցին բացառիկ դերակատարություն է ունեցել ազգային մշակութային ժառանգության պահպանման եւ փոխանցման գործում: Հայ Եկեղեցին կարողացավ քրիստոնեական արժեքային համակարգը ներ-

[7] Թովմա Մեծոփեցի, *Յիշատակարան, հրատարակության պատրաստեց՝ տէր Արարատ քահանայ Պօղոսեան, Ս. Էջմիածին, 2017, էջ 39–105:*

դաշնակորեն համադրել ազգային մշակույթի հետ՝ ձեւավորելով ինքնատիպ հայկական հոգեւոր ինքնություն եւ դիմագիծ: Այդ համադրությունը դարձավ ազգային ինքնագիտակցության, մշակութային շարունակականության եւ հասարակական համախմբման կարեւորագույն ազդակներից մեկը: Միջնադարյան հայկական վանքերը հանդես են եկել ոչ միայն որպես աղոթավայրեր եւ ուխտագնացության կենտրոններ, այլեւ որպես գիտակրթական, մշակութային եւ ձեռագրագիտական կարեւոր հաստատություններ, որտեղ ստեղծվել, արտագրվել եւ պահպանվել են ձեռագրեր, տարեգրություններ, աստվածաբանական, պատմագիտական եւ մատենագիտական սկզբնաղբյուրներ: Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանվող հազարավոր հայկական ձեռագրերը վկայում են Հայոց եկեղեցու բազմադարյա մշակութային առաքելության եւ գրավոր ժառանգության պահպանման գործում ունեցած անփոխարինելի դերի մասին: Միաժամանակ, միջնադարյան վանական դպրոցները ձեւավորել են հայ մտավորականության հիմքերը:

Ե. ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ, ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՒ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հայ Առաքելական Եկեղեցու պատմական դիմաստվերի կարեւորագույն առանձնահատկություններից մեկն այն է, որ պետականության բացակայության պայմաններում եւ հայ ժողովրդի համար ճգնաժամային իրավիճակներում այն վերածվել է ազգային-ազատագրական պայքարի գործոնի: Բազմաթիվ դեպքերում հենց բարձրաստիճան հոգեւորականությունն է ստանձնել ազգային դիմադրության գաղափարական առաջնորդության եւ կազմակերպչական համակարգման ղեկավարումը: Կաթողիկոսները հանդես են եկել որպես քաղաքական միջնորդներ, դիվանագետներ եւ ժողովրդի պաշտպաններ:

ԺԶ.–ԺԸ. դարերում հայկական ազատագրական միտքը թեւակոխեց առավել կազմակերպված եւ գործնական փուլ, որի հիմնական նախաձեռնող ուժերից մեկը Հայոց եկեղեցին էր: 1547 թվականին Ստեփաննոս Ե. Սալմաստեցի կաթողիկոսի նախաձեռնությամբ գումարված էջմիածնի գաղտնի ժողովը հիմք դրեց հայկական կազմակերպված դիվանագիտական գործունեությանը՝ նպատակ ունենալով եւրոպական

պետությունների աջակցությամբ ազատագրել Հայաստանը օտար տիրապետությունից: Այս քաղաքական ուղղությունը շարունակեց Հակոբ Դ. Ջուղայեցի կաթողիկոսը, որի նախաձեռնությամբ 1677 թվականին էջմիածնում գումարված գաղտնի ժողովի որոշմամբ հայկական պատվիրակություն ուղարկվեց Եւրոպա[8]:

Հայ ժողովրդի անվտանգության ապահովման գործում եկեղեցու դերի ամենափայլուն եւ վճռորոշ դրվագը 1918 թվականի մայիսյան հերոսամարտերն էին: Երբ թուրքական զորքերը մոտեցան Ս. Էջմիածնին, զինվորական ղեկավարությունը ելնելով անվտանգության նկատառումներից առաջարկեց կաթողիկոսարանը եւ Ամենայն Հայոց հայրապետին տեղափոխել Սեւան: Սակայն Գեւորգ Ե. Սուրենյանց կաթողիկոսը հանդես բերեց բացառիկ կամք ու արիություն՝ հայտարարելով, որ «ինքը չի լքի Սուրբ Էջմիածինը... Եթէ հայ զօրքը հրաժարւում է կամ թէ չի կարող պաշտպան կանգնել այս սուրբ վայրերին, ապա ինքը մենակ սուր կվերցնի եւ կընկնի Մայր տաճարի գաւթում, բայց չի հեռանայ պապերից աւանդ մնացած Մայր Աթոռից»[9]: Կաթողիկոսի հրամանով հանրապետության բոլոր եկեղեցիներում վեց օր ու գիշեր անդադար հնչեցին զանգերը ՝ ժողովրդին կոչ անելով սրբազան պատերազմի: Հոգեւորականների մի ամբողջ գունդ՝ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանի (հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս) գլխավորությամբ, ռազմաճակատի առաջին գծում զենքը ձեռքին ոգեշնչում էր զինվորներին: Այս հոգեւոր-բարոյական հեղաշրջումը դարձավ Մայիսյան հաղթանակների գլխավոր գրավականը, ինչը ոչ միայն փրկեց հայությանը, այլեւ հիմք դրեց Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակմանը:

Զ. ՍՓՅՈՒՌՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՒ ՈՒԾԱՑՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ

Հայոց ցեղասպանությունից հետո հայրենազրկված եւ աշխարհով մեկ սփռված հայության համար ազգային ինքնության պահպանման խնդիրը ձեռք բերեց առավել բարդ եւ կենսական նշանակություն: Օտար երկրներում պետական հովանավորությունից զրկված հայկական համայնք-

[8] *Տե՛ս* Տեր Արարատ քահանա Պողոսեան, *Սուրբ Էջմիածնի դերը ԺԶ.–ԺԷ. դարերի հայ ազատագրական պայքարում, Սուրբ Էջմիածին, 2025, էջ 136–257:*

[9] *Համմա.* Հ. Գ. Թուրշեան, *Սարդարապատի հերոսամարտը, Երեւան, 1969, էջ 140:*

ները կանգնած էին արագ ձուլման եւ ազգային ինքնագիտակցության կորստի իրական վտանգի առաջ: Այս պայմաններում Հայոց Եկեղեցին ստանձնեց սփյուռքահայության հոգեւոր, մշակութային եւ ազգային ինքնության պահպանման առանցքային դերակատարումը: Հայ համայնքների ձեւավորման հիմքում դրվեց, այսպես կոչված, «եկեղեցակենտրոն» համակարգը, որի համաձայն յուրաքանչյուր նոր գաղթավայրում առաջնահերթ կառուցվում էր հայկական եկեղեցի, իսկ դրան կից՝ հայկական դպրոց: Եկեղեցին դարձավ կրոնական կյանքի կազմակերպման, հայոց լեզվի, պատմական հիշողության, մշակութային ավանդույթների եւ ինքնության պահպանման հիմնարար հաստատություն:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի թեմական կառույցների ընդլայնումը ինչպես նաեւ դեգերումներից հետո Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հաստատումը Անթիլիասում, հնարավորություն տվեցին համակարգելու սփյուռքահայ համայնքների հասարակական կյանքը: Եկեղեցին կարողացավ իր շուրջը համախմբել սփյուռքի հայությանը՝ դիմակայելով օտար մշակութային միջավայրերի ձուլող ազդեցություններին: Սա ազգային անվտանգության յուրօրինակ դրսեւորում էր՝ ուղղված հայ տեսակի ժողովրդագրական եւ որակական պահպանմանը:

Է. ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՒ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԸ

*Ժամանակակից աշխարհում ընթացող արժեհամակարգային փոփոխությունների, համաշխարհայնացման պայմաններում ազգային անվտանգությունը բախվում է նոր՝ խառնածին (*Hybrid*) սպառնալիքների եւ ազգային անվտանգության ժամանակակից հայեցակարգերում ընդգծվում է նաեւ հոգեւոր անվտանգության բաղադրիչը:*

Այսօր Հայ Առաքելական Եկեղեցին շարունակում է մասնակցել ազգային անվտանգության եւ ինքնության պահպանման գործընթացներին: Աշխարհաքաղաքական սրընթաց փոփոխությունների մերօրյա ժամանակներում, երբ կազմակերպված փորձ է կատարվում ձեւախեղել հայի՝ հոգեւոր-մարդաբանական հնամենի տեսակը՝ փորձելով նրան դարձնել աշխարհաքաղաքացի-տիեզերաքաղաքացի, որը ո՛չ ազգ է ճանաչում, ո՛չ հայրենիք եւ ո՛չ իսկ Թշնամի: Երբ ազգն իբրեւ մարմին եւ հոգի փոշիանում է, մասնատվում եւ տարրալուծվում անդիմության մեջ, ազգային բարոյահոգեբանական նկարագրի համապատկերում արտառոց կարեւոր-

*վում է Հայոց եկեղեցու դերը[10]։ Եթե ե. դ. միայն կրոնաքաղաքական հաւլածանքն էր հարուցվում դրսից, ապա այսօր արտերկրի միջոցներով են սնվում քաղաքական անկայունության հարուցիչները, կուսակցական-յեղափոխութեան մակաբոյծները (Եր. Օտեան), հանրային եւ կենսաբանական սեռերի (*Gender *եւ* Sex*) հավասարության ջատագովները եւ այլն։*

ԻԱ. դարում, երբ Հայաստանն ունի անկախ պետականություն, եկեղեցու գործառույթները ենթարկվել են որոշակի փոփոխության, սակայն չեն կորցրել իրենց հրատապ նշանակությունը։ Այսօր եկեղեցին ներգրավված է կրթական, բարեգործական, մշակութային եւ հայրենասիրական ծրագրերում։ Հայոց եկեղեցին հանդես է գալիս որպես հայ ազգային արժեքների, լեզվի, մշակույթի ավանդական ընտանիքի, բարոյականության եւ ազգային դիմագծի պաշտպան։ Ազգային ինքնագիտակցության քայքայումը կանխելը դիտարկվում է որպես ներքին կայունության կարեւոր գործոն։

Արցախի հայաթափումից հետո հայկական պատմամշակութային ժառանգության (վանքեր, եկեղեցիներ, խաչքարեր) պահպանման եւ Ադրբեջանի իրականացրած մշակութային եղեռնի դեմ միջազգային պայքարում եկեղեցին ստանձնել է առաջնային դեր։ Իր միջեկեղեցական եւ միջազգային կապերի միջոցով եկեղեցին բարձրաձայնում է հայկական հուշարձանների յուրացման խնդիրը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Առաքելական Սուրբ եկեղեցին հայ ժողովրդի պատմության ընթացքում հանդես է եկել ոչ միայն որպես կրոնական հաստատություն, այլեւ իբրեւ մեկը մեր ազգային ինքնության եւ անվտանգության կարեւորագույն հայեցակարգային հենասյուներից։ Եւ ինչպես Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսն է նշում՝ «Քրիստոսահիմն Սուրբ Էջմիածինը համայն հայության հոգեւոր տունն է, Հայոց անկախ պետականության կերտման դարբնոցը, մեր ժողովրդի հաղթանակների ու հարատեւության խորհրդանիշը եւ ազգային մեր անաղարտ ինքնության ջահակիրն ու պահապանը»[11], կամ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա. խոսքով՝

---

[10] Այդ մասին տե՛ս Դ ո ղ ո ս. Ա ր ք ւ ե պ ս կ ո պ. Օ զ լ ո ւ կ ե ա ն, *Հայաստանեայց Առաքելական Սուրբ եկեղեցւոյ ազգային եւ կրօնական անժամանցելի արժէքը հայ ժողովուրդի կեանքին մէջ, Ժընեւ, 2001, էջ 11–16։*

[11] Տե՛ս «Էջմիածին», Դ., էջ 51, հմմտ. «Էջմիածին», 2019, ԺԲ., էջ 10, https://www.armenianchurch.org/hy/news/*համբարձման-տոնը-մայր-աթոռ-սուրբ-էջմիածնում-2024/11 598։*

Հայ Եկեղեցին է «մեր հանճարին հնոցը, մեր ազգային միութեան շաղախը, մեր անմահութեան մկրտարանը»[12]: Դարերի ընթացքում մեր ազգային կառույցը ձեւավորվել ու կայացել է որպես հոգեւոր եւ գաղափարական պաշտպանական համակարգ, որն ապահովել է հայ ժողովրդի գոյատեւումը, ինքնության շարունակականությունը եւ մշակութային դիմադրողականությունը արտաքին սպառնալիքների պայմաններում:

Պետականության բացակայության երկարատեւ փուլերում Հայոց Եկեղեցին ստանձնել է ազգային համախմբման առանցքային դեր՝ պահպանելով հայոց լեզուն, գրականությունը, քրիստոնեական հավատքը, պատմական հիշողությունը եւ ազգային արժեհամակարգը: Այդ կերպ Եկեղեցին ձեւավորել եւ պահպանել է հայության «հոգեւոր սահմանները»:

Ներկայիս փուլում, երբ Հայաստանի Հանրապետությունը կանգնած է աշխարհաքաղաքական եւ անվտանգային լրջագույն մարտահրավերների առաջ, պետություն-Եկեղեցի երկխոսության եւ համագործակցության սերտացումը համարվում է ռազմավարական անհրաժեշտություն՝ հանուն հայության համախմբման, Սփյուռքի ներուժի պահպանման եւ ազգային ինքնության անխաթարության:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Հայ Առաքելական Եկեղեցի, ազգային անվտանգություն, ազգային ինքնություն, պետականության բացակայություն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, հոգեւոր անվտանգություն, Սփյուռք, խառնածին սպառնալիքներ, մշակութային ժառանգություն:

РЕЗЮМЕ

В статье рассматривается историческая и современная роль Армянской Апостольской Церкви как одного из ключевых факторов национальной безопасности и сохранения армянской идентичности. Показано, что в периоды от-

[12] ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ, *Դէպի 1700-ամեակ Սուրբ Թադէի ճամբով, Անթիլիաս–Լիբանան, 1996, էջ 23:*

сутствия государственности Церковь выполняла не только религиозные, но и административные, образовательные, культурные и дипломатические функции, обеспечивая преемственность национальной жизни. Анализируются её вклад в создание армянской письменности, национально-освободительное движение, Майские героические сражения 1918 года и сохранение идентичности Диаспоры. Делается вывод, что в современных условиях укрепление взаимодействия государства и Армянской Апостольской Церкви остаётся важным условием национальной устойчивости и сохранения армянского культурного наследия.

SUMMARY

This article examines the historical and contemporary role of the Armenian Apostolic Church as a key factor in national security and the preservation of Armenian identity. It argues that during periods without statehood, the Church assumed not only religious but also administrative, educational, cultural, and diplomatic functions, ensuring the continuity of Armenian national life. The study highlights its contribution to the creation of the Armenian alphabet, the national liberation movement, the May Heroic Battles of 1918, and the preservation of identity within the Armenian Diaspora. It concludes that strengthening cooperation between the state and the Armenian Apostolic Church remains essential for national resilience and the safeguarding of Armenia’s cultural heritage.

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ, ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՐԴԻԱԿԱՆ ԵՒ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից անմիջապես հետո անաստվածության համատարած քարոզչություն սկսվեց, որը զուգորդվում էր գործնական քաղաքականությամբ։

1920–1930-ական թվականները բեկումնային էին իրենց եղերական հետեւանքներով՝ ոչ միայն ընդհանուր առմամբ, այլեւ հատկապես եկեղեցու-կրոնի հարցում։ Ահա, հենց այդ պարագայում ամենից խիստ ու դաժան կերպով դրսեւորվեց կոմկուսի մենատիրական դիրքորոշումը։ Ինքնին տվյալ ժամանակահատվածը լեցուն էր տարբեր բնույթի քաղաքական բռնաճնշումներով, որոնք բնականաբար իրենց բացասական ազդեցությունը պետք է թողնեին եկեղեցու եւ հոգեւորականների գործունեության վրա։

Այս կարեւորագույն հարցերի հետազոտությանն է նվիրված պատմական գիտությունների թեկնածու Ավագ Ա. Հարությունյանի աշխատությունը[1]։

Աշխատության մեջ հանգամանալից հետազոտված եւ վերլուծված են՝ խորհրդային իշխանությունների նկատմամբ եկեղեցու կառուցողական դիրքորոշումը, կոմկուսի քայքայիչ քաղաքականությունը, պետանվտանգության մարմինների դերակատարությունը, եկեղեցական ու խորհրդային գործիչների գաղափարական տեսակետները, պետական իշխանական մեքենայի բռնաճնշիչ գործիքակազմը, աստվածամերժության քաղաքական գործիք հանդիսացող «ազատ եկեղեցական» աղանդի հակականոն գաղափարախոսությունը եւ «Մարտնչող անաստվածների միություն» կազմակերպության, «Ազատ եկեղեցի» շաբաթաթերթի, «Անաստված» ամսագրի եւ թերթի հիմնազուրկ գործունեությունը, նյութի իրավա-քաղաքական բաղադրիչները։

---

[1] Ա. Հարությունյան, *Եկեղեցի–պետություն հարաբերակցությունը Խորհրդային Հայաստանում 1920–1930-ական թվականներին*, Ս. Էջմիածին, 2025։

1920–1930-ական թվականներին Խորհրդային Հայաստանում կոմկուսի աթեիստական քաղաքականությունը պատմագիտական տեսանկյունից ընդհանուր առմամբ լուսաբանված է։ Սակայն, այս հանգամանքը դեռեւս չի կարելի նշել խնդրի քաղաքագիտական հետազոտության առումով։ Մինչդեռ, նյութը վաղուց կարոտ է հենց այդ տեսանկյունից ուսումնասիրման։ Ի տարբերություն առկա աշխատությունների, հեղինակն առաջին անգամ փորձ է արել հարցը հետազոտել զուտ քաղաքագիտական տեսանկյունից, հասկանալիորեն զերծ չմնալով ժամանակահատվածի նաեւ պատմական բաղկացուցիչներին ընդհանուր գծերով անդրադառնալուց։

Առանձին գլխով մանրամասն ներկայացված ու վերլուծված են Մայր Աթոռի քննադատական վերաբերմունքը եւ կառուցողական դիրքորոշումը խորհրդային իշխանությունների նկատմամբ, փոխհարաբերակցությունը նրանց հետ, հոգեւորականների տեսակետների քաղաքագիտական սկզբունքներն ու մոտեցումները, Եկեղեցու բարենորոգման ժամանակի ծրագիրը։

Հատուկ ուշադրության է արժանացել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նկատմամբ Խորհրդային Հայաստանի իշխող կոմունիստական կուսակցության վերաբերմունքի վերլուծությունը։ Առաջին հերթին ներկայացվում է հիմնախնդրի արդիականությունը, քանի որ հենց մոտավոր անցյալի իրադարձությունների իմացությունն է հնարավորություն տալիս հասու լինելու մեր օրերի համանման զարգացումներին։ Այս պարագան վերաբերում է նաեւ հիմնահարցի ուսումնասիրման անհրաժեշտության հիմնավորմանը եւ մեթոդաբանության անաչառությանը, որն անտարակույս պայմանավորված է հետխորհրդային շրջանի պատմագիտական-քաղաքագիտական մտքի ազատականացմամբ։

Առկա մի քանի պատմագիտական աշխատությունների համապատկերում հեղինակի իրականացրած հիմնահարցի զուտ քաղաքագիտական վերլուծությունն ունի կարեւոր նշանակություն։ Այս տեսանկյունից ուշագրավ է կոմկուսի դիրքորոշման հարցում գաղափարական-քաղաքագիտական ելակետերի վերլուծումը հատկապես ընդհանուր ԽՍՀՄ իրադարձությունների համապատկերում։ Նշյալի առումով հատկանշական է Եկեղեցու նկատմամբ կոմկուսի եւ խորհրդային իշխանության կուսակցական-պետական քաղաքականության զուտ գաղափարախոսական հայեցակարգի վերլուծությունը ամբողջատիրական համակարգի ձեւավոր-

ման գործընթացի ճանապարհին, Հայաստանի կոմկուսի եւ խորհրդային ղեկավար գործիչների ելույթների որոշակի ներկայացմամբ։

Նորույթ պետք է համարել հարցի իրավա-քաղաքական բաղադրիչների վերլուծությունը, որն, ինչ խոսք, ուսումնասիրության հետագա խորացման կարիք ունի՝ սահմանադրական-իրավական փաստաթղթերի առավել հիմնավոր հետազոտմամբ։

Քննարկվող ժամանակաշրջանում իշխող կոմունիստական կուսակցությունը, բուն պետական գործիքակազմից բացի, աշխուժորեն օգտագործում էր անգամ եկեղեցու ներսում առկա չնչին տարաձայնությունները՝ դրանք սրելով ու նորերը հրահրելով։ Այդպիսին էր չարաբաստիկ «ազատ եկեղեցական» շարժումը, որը ինչպես Ռուսաստանում, այնպես եւ Հայաստանում իր քայքայիչ սերմերը տարածեց։

Աշխատության մեջ առանձին գլուխ է նվիրված այդ շարժման գաղափարախոսության վերլուծությանը, որ իրականացվել է քաղաքագիտական տեսանկյունից։ Այն նոր լույս է սփռում ինչպես եկեղեցու ներսում տիրող ոչ էական խլրտումների, այնպես եւ այդ ուղղությամբ խորհրդային իշխանությունների վարած քաղաքականության խնդրի վրա։ Եթե նյութը պատմագիտական տեսանկյունից որոշակի առումով ուսումնասիրված է, ապա նույնը չի կարելի փաստել հիմնախնդրի քաղաքագիտական կողմերի առումով։ Իհարկե, հեղինակն առաջին անգամ փորձ է արել խնդիրը հետազոտել հենց այդ առումով՝ բնականաբար ներկայացնելով նաեւ ժամանակաշրջանի պատմական համապատկերը։

Հանգամանալից ներկայացված ու վերլուծված են Աշոտ եպիսկոպոս Շախյանի, Բենիկ ծայրագույն վարդապետի, Աբել ծայրագույն վարդապետ Նազարյանի գրքույկները, Վրաստանի Հայոց թեմում «ազատ եկեղեցականների» եւ «Ազատ եկեղեցի» շաբաթաթերթի գործունեությունը հրապարակախոսական եւ քարոզչական առումներով։ «Ազատ եկեղեցականների» կրոնագաղափարական հայացքները արդարացիորեն ենթարկված են անաչառ քննադատության։

Դրվատելի է, «ազատ եկեղեցականների» գործերից զատ, նաեւ հարուստ արխիվային փաստաթղթերի եւ պարբերական մամուլի նյութերի օգտագործումը, ինչն ավելի հիմնավոր է դարձրել հեղինակի վերլուծությունը։

1920–1930-ական թվականներին խորհրդային Հայաստանի աստվածամերժ քաղաքականության պատմության՝ գրեթե մոռացության մատն-

ված էջերից է «Մարտնչող անաստվածների միություն» կազմակերպության գործունեությունը: Այն, ցավոք, դեռեւս հայ պատմագիտությունը համալիր ուսումնասիրության չի արժանացրել: Ներկայացված են նպատակները եւ հետազոտական խնդիրները: Վերլուծված են միության ստեղծման նախադրյալները, դրդապատճառները, զարգացման պատմական փուլերը, կազմակերպչական կառույցը, հանրային կազմը, գաղափարախոսական հիմնադրույթները, հրատարակչական եւ քարոզչական գործունեությունը, հիմնավորվել է այդ ամենի հետազոտման արդիականությունը:

Հեղինակը նյութը դիտարկել է կոմկուսի եւ խորհրդային իշխանության ընդհանուր հակակրոնական քաղաքականության համապատկերում, ընդ որում՝ հնարավորինս նաեւ ԽՍՀՄ շարակարգում, անհրաժեշտության դեպքում՝ լրացված վիճակագրական տվյալներով: Քաղաքագիտական տեսանկյունից բավականին հետաքրքիր է շարժման կազմակերպչական-քաղաքական գործունեության եղանակների վերհանումը, գործիքակազմի եւ գործառույթների պարզաբանումը, հիմնավորված է շարժման գաղափարախոսաքարոզչական աշխարհայացքի անանկությունը հասարակական կյանքում եւ հասարակական տարբեր խավերի շրջանում հետագայում գործնական նշանակություն չունենալը: Միանգամայն նորություն է «Անաստված» ամսագրի եւ թերթի նյութերի քննական վերլուծությունը:

Ողջունելի նորույթ է առանձին գլխով այնպիսի յուրահատուկ հիմնահարցի ներկայացումը՝ ինչպիսին Եկեղեցու նկատմամբ խորհրդային պետական անվտանգության մարմինների վերաբերմունքն է: Հանրահայտ է, որ խորհրդային-կոմունիստական ամբողջատիրական քաղաքականության մեջ ինչպես ընդհանուր, այնպես եւ եկեղեցական հարցերում ի մասնավորի իրենց կարեւորագույն դերակատարությունն են ունեցել այդ մարմինները: Վերլուծվել են պետանվտանգության մարմինների գործունեության գաղափարական դրույթները: Ուշագրավ է, որ այդ ամենը ներկայացված է ԽՍՀՄ ընդհանրական համապատկերում, ինչն առավել պարզ է դարձնում միութենական դիրքորոշումը եւ ըստ այդմ ընկալելի դրանց պարտադիր կատարումը Խորհրդային Հայաստանում: Այս պարագան վերաբերում է նաեւ պետանվտանգության մարմինների վարչաքաղաքական պայքարին: Հեղինակը բացահայտել է եւ ներկայացրել այդ պայքարի գործիքակազմը, եղանակները, միջոցները:

Վերլուծված են Խորհրդային Հայաստանի պետանվտանգության մարմինների դերակատարությունը, Եկեղեցու դեմ պայքարի տարաբնույթ

դրսեւորումները բազմաթիվ ճշգրիտ օրինակներով: Վավերական տվյալներով պարզաբանված են Եկեղեցու դեմ պայքարի բռնաճնշիչ գործառույթները, որոնք հատուկ են այդ մարմիններին՝ քայքայումից մինչեւ ձերբակալություն եւ աքսոր, ներկայացված են ծխական քահանաների հրաժարման օրինակներ: Հիմնահարցի առավել ընդհանրական պատկերացման տեսանկյունից տեղին է հեղինակի կողմից պետանվտանգության մարմինների գործառույթների նկատմամբ եկեղեցու դիրքորոշման վերհանումը, պայքարը խորհրդային բռնատիրական քաղաքականության դեմ, հարաբերակցությունն այդ ուղղությամբ Խորհրդային Հայաստանի պետանվտանգության ղեկավարության հետ:

Ուշագրավ է Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի ոդիսականի վերհանումը, որին խորհրդային իշխանությունը եւ առաջին հերթին պետանվտանգության մարմինները իրենց թշնամին էին համարում:

Ողջունելի է, որ նյութի առավել ամբողջական պատկերացման նպատակով առանձին գլուխներով հրապարակված են Հայաստանի կոմկուսի, պետանվտանգության մարմինների եւ «ազատ եկեղեցական» աղանդի նորահայտ փաստաթղթերը, որոնք բուն վերլուծական գլուխներում հեղինակը հատուկ չի քննարկել: Դրանք առաջին անգամ են շրջանառության մեջ դրվում եւ մինչ այժմ հետազոտողների ուշադրությունից դուրս էին մնացել:

Հավելվածում եւս ներկայացվել են նորահայտ փաստաթղթեր, որոնք լրացուցիչ լույս են սփռում խնդրի վրա: Ինչ խոսք, այս հանգամանքը ընթերցող-հետազոտողին հնարավորություն է ընձեռում թեմայի վերաբերյալ յուրովի եւ անաչառ պատկերացում կազմել:

Աշխատությունը շարադրվել է բավականին հարուստ արխիվային սկզբնաղբյուրների, պարբերական մամուլի նյութերի եւ մասնագիտական գրականության օգտագործմամբ, որոնց գերակշիռ մասն առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ:

Հեղինակը, քննադատական մոտեցում ցուցաբերելով, հնարավորինս անաչառ ու կաղապարներից զերծ, առարկայաբար եւ բազմակողմանի է ներկայացրել նյութը ու համալիր կերպով վերլուծել, զերծ մնալով ԽՍՀՄ անցյալի կարծրատիպերից՝ արժեւորել է Եկեղեցու կառուցողական դիրքորոշումը եւ քննադատել խորհրդային իշխանությունների քաղաքականությունը:

Աշխատության դրական կողմերից է այն հանգամանքը, որ նյութը հնարավորինս համեմատական դիտարկմամբ ներկայացվել է ԽՍՀՄ ընդ-

հանուր համապատկերում՝ լայնորեն օգտագործելով վերջին տասնամյակներում հրատարակված ռուսերեն նոր սկզբնաղբյուրները։

Հարցն առաջին անգամ ամբողջությամբ հետազոտվում է քաղաքագիտական տեսանկյունից՝ բնականաբար պատմագիտական շարակարգում եւ հիմնավորումներով։

Բոլոր գլուխներն ամփոփվել են եզրահանգումներով եւ գնահատականներով, իսկ եզրակացության մեջ ի մի են բերված ուսումնասիրության արդյունքները, նշվել են առավել կարեւոր հանգուցակետերը, առաջարկներ ներկայացվել։

Համոզված ենք, որ այս աշխատությունը, 1920–1930-ական թվականների պետություն–եկեղեցի փոխհարաբերությունների պատմական դասերի յուրացումից զատ, նաեւ օգտակար կլինի ներկայիս շրջափուլում, քանզի հարցը միանշանակ արդիական եւ ուսանելի կարեւոր նշանակություն ունի։

ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

СОДЕРЖАНИЕ

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И ГРАМОТЫ БЛАГОСЛОВЕНИЯ

Послание **ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН,** по случаю епископского рукоположения 5

Слово **ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН,** на собрании священников. 10

Поздравительное послание **ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН,** по случаю праздника Республики 14

Послание **ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН,** по случаю Араратской недели 15

ОФИЦИАЛЬНОЕ

Епископ Исаак Погосян 18

Епископ Рубен Заргарян 20

Епископ Анания Цатурян 23

Епископ Закария Багумян 26

ПРОПОВЕДИ

Проповедь **ЕПИСКОПА МУШЕГА БАБАЯНА**, произнесенная во время Св. Литургии в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина в праздник Вознесения 29

Проповедь **ЕПИСКОПА ЗАКАРИИ БАГУМЯНА**, произнесенная в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина во время Св. Литургии Епископского обета 35

Проповедь **ЕПИСКОПА РУБЕНА ЗАРГАРЯНА**, произнесенная в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина во время первой Св. Литургии Епископского обета 39

Проповедь **ЕПИСКОПА АНАНИИ ЦАТУРЯНА**, произнесенная в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина во время первой Св. Литургии Епископского обета 46

Проповедь **ЕПИСКОПА ИСААКА ПОГОСЯНА**, произнесенная в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина во время первой Св. Литургии Епископского обета. 51

РЕЛИГИОВЕДЕНИЕ

МАТТЕОС ВАРДАПЕТ ДЖУГАЕЦИ — Проповедь на слово: «Господь премудростью основал землю» по случаю праздника Шогакат 55

ИЕРЕЙ АРАРАТ ПОГОСЯН — Система управления Армянской Апостольской Святой Церковью *(историческое развитие, сравнительный анализ и современные вызовы)* 69

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

ДИАКОН НАРЕК ГАСПАРЯН, ОФЕЛИЯ ГАСПАРЯН — Деятельность и концепция художественной литературы Франца Верфеля 81

НАРИНЕ ОВАННИСЯН — Психологические последствия Геноцида армян в жизни Левона-Завена Сюрмеляна (роман «К вам обращаюсь, дамы и господа»). 90

ЭДИК МИНАСЯН — Армянская Апостольская Церковь в годы Арцахского освободительного движения и борьбы за независимость (1988—1994 гг.) . . . 101

АРШАК МАДОЯН — Азербайджано-израильское стратегическое партнерство в контексте национальной безопасности Ирана 115

СООБЩЕНИЯ

АВЕТИС АРУТЮНЯН — Роль Армянской Церкви в обеспечении национальной безопасности и сохранении идентичности 129

РЕЦЕНЗИИ. БИБЛИОГРАФИЯ

ЭДГАР ОВАННИСЯН — Актуальное и необходимое исследование 140

CONTENTS

PONTIFICAL ENCYCLICALS, LETTERS OF BLESSING

Message of **HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS**, on the occasion of the episcopal ordination 5

Message of **HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS**, during the priestly meeting 9

Congratulatory message of **HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS**, on the occasion of the Republic Day 9

Message of **HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS**, on the occasion of the feasts of the Araratian week 9

OFFICIAL

H.G. Bishop Isahak Poghosyan 18

H.G. Bishop Ruben Zargaryan. 20

H.G. Bishop Anania Tsaturyan 23

H.G. Bishop Zakaria Baghumyan 26

SERMONS

Sermon delivered by **H.G. BISHOP MOUSHEGH BABAYAN** during the Divine Liturgy celebrated on the feast of Ascension at the Cathedral of Holy Etchmiadzin .29

Sermon delivered by **H.G. BISHOP ZAKARIA BAGHUMYAN** during his first episcopal Divine Liturgy celebrated at the Cathedral of Holy Etchmiadzin 35

Sermon delivered by **H.G. BISHOP RUBEN ZARGARYAN** during his first episcopal Divine Liturgy celebrated at the Cathedral of Holy Etchmiadzin 39

Sermon delivered by **H.G. BISHOP ANANIA TSATURYAN** during his first episcopal Divine Liturgy celebrated at the Cathedral of Holy Etchmiadzin 46

Sermon delivered by **H.G. BISHOP ISAHAK POGHOSYA**n during his first episcopal Divine Liturgy celebrated at the Cathedral of Holy Etchmiadzin 51

RELIGIOUS STUDIES

ARCHIMANDRITE MATTHEOS OF JULFA — Sermon at the feast of Shoghakat on the following verse: "The LORD by wisdom hath founded the earth" (Prov. 3.19) 55

FR. ARARAT POGHOSYAN — The governance system of the Armenian Apostolic Holy Church *(historical development, comparative analysis and modern challenges)* 69

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES

DEACON NAREK GASPARYAN, OPHELIA GASPARYAN — Franz Werfel's works and concept of fiction 81

NARINE HOVHANNISYAN — Psychological changes in the life of Levon-Zaven Sürmelian caused by the Armenian Genocide (the novel "I Am Addressing You, Ladies and Gentlemen") 90

EDIK MINASYAN — The Armenian Apostolic Church during the years of the Artsakh Liberation Movement and the struggle for independence (1988—1994) 101

ARSHAK MADOYAN — The Azerbaijan—Israel Strategic Partnership within the Context of Iran's National Security. 129

ESSAYS

AVETIS HARUTYUNYAN — The role of the Armenian Church in ensuring national security and preserving identity 140

LITERARY REVIEW

EDGAR HOVHANNISYAN — A modern and necessary work 138

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ պատգամը
Եպիսկոպոսական ձեռնադրութեան առիթով. 5

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ խօսքը
քահանայից հաւաքին. 10

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
շնորհաւորական ուղերձը Հանրապետութեան տօնի առիթով 14

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ուղերձը Արարատեան շաբաթուայ առիթով 15

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Տ. Իսահակ եպս Պօղոսեան 18

Տ. Ռուբէն եպս Զարգարեան 20

Տ. Անանիա եպս Ծատուրեան 23

Տ. Զաքարիա եպս Բաղումեան 26

ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

Տ. ՄՈՒՇԵՂ ԵՊՍ ԲԱԲԱՅԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Համբարձման տօնին
Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցուած Ս. Պատարագին. 29

Տ. ԶԱՔԱՐԻԱ ԵՊՍ ԲԱՂՈՒՄԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Ս. Էջմիածնի Մայր
Տաճարում եպիսկոպոսական ուխտի անդրանիկ պատարագին 35

Տ. ՌՈՒԲԷՆ ԵՊՍ ԶԱՐԳԱՐԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Ս. Էջմիածնի Մայր
Տաճարում եպիսկոպոսական ուխտի անդրանիկ պատարագին 39

Տ. ԱՆԱՆԻԱ ԵՊՍ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Ս. Էջմիածնի Մայր
Տաճարում եպիսկոպոսական ուխտի անդրանիկ պատարագին 46

Տ. ԻՍԱՀԱԿ ԵՊՍ ՊՕՂՈՍԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Ս. Էջմիածնի Մայր
Տաճարում եպիսկոպոսական ուխտի անդրանիկ պատարագին 51

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՋՈՒՂԱՅԵՑԻ — Քարոզ Շողակաթի [տօնին], հետեւեալ խօսքի մասին. «Աստուած Իր իմաստութեամբ [երկրի հիմքերը դրաւ]» 55

ԱՐԱՐԱՏ ՔՀՆԱ ՊՕՂՈՍԵԱՆ — Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կառավարման համակարգը *(պատմական զարգացումը, համեմատական վերլուծութիւնը եւ արդի մարտահրաւէրները)* 69

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՐԵԿ ՍԲՐԿ. ԳԱՍՊԱՐԵԱՆ, ՕՖԵԼԵԱ ԳԱՍՊԱՐԵԱՆ — Ֆրանց Վերֆէլի գործունէութիւնը եւ գրական-գեղարուեստական հայեցակարգը. 81

ՆԱՐԻՆԷ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ — Հայոց ցեղասպանութեան հոգեբանական տեղաշարժերը Լեւոն-Չաւէն Սիւրմէլեանի կեանքում («Ձեզ եմ դիմում, տիկիններ եւ պարոններ» վէպը) 90

ԷԴԻԿ ՄԻՆԱՍԵԱՆ — Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին Արցախեան ազատագրական շարժման եւ անկախութեան համար պայքարի տարիներին (1988—1994 թթ.) 101

ԱՐՇԱԿ ՄԱԴՈՅԵԱՆ — Ադրբեջան-Իսրայէլ ռազմավարական գործընկերութիւնը Իրանի ազգային անվտանգութեան համապատկերում . . 115

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԱՒԵՏԻՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ — Հայ Եկեղեցու դերը ազգային անվտանգութեան եւ ինքնութեան պահպանման գործում 129

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԷԴԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ — Արդիական եւ անհրաժեշտ աշխատութիւն . . . 140

ISSN 1829-4243
eISSN 2953-7843

Հրատարակւում է
Գէորգեան հոգեւոր ճեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտխորհրդի երաշխաւորութեամբ եւ որոշմամբ

Հրատարակչական բաժնի տնօրէն՝
Տ. Արարատ քհնյ. Պօղոսեան

Խմբագրութեան հասցէն՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ»
ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»

Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal “Etchmiadzin”

էլ. փոստ՝ etchmiadzinamsagir@gmail.com
Հեռ. (+374 10) 517 276

Ստորագրուած է տպագրութեան՝ 15.07.2026 թ.